





ԹՈՒՐԳԱՀԱՅՈՑ  
ՀԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

ԵՒ

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

1740—1890

ԳՐԵՑ

Յ. Գ. Մ.



Լ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

Եալաքա, Գուրգուրու խան, քիւ 7

1908





Թ Ո Ւ Ր Ք Ա Յ Ա Յ Ո Ց

Հին վաճառականի թիկնն և վաճառականք

201.

9(47925)1  
12-98

ՅԵՐԵՎԱՆԻ Է 1981 Ձ.

ԹՈՒՐԿԱՀԱՅՈՑ

ՀԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

ԵՒ

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ



1740-1890



ԳՐԵՑ

Յ. Գ. Մ.



40266  
A II  
33388

معارف نظارت جلیله سنک ۱۰۹ نومرولی و قی ۱۶ مایس ۳۲۴ تاریخلو  
رخصتنامه سیله طبع اولمشدر


Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

Կալաթա, Գուրուցյու խան, քիւ 7

1908







## Մ Ո Ւ Տ Ք



**Ք**ՈՒՐՔԱՀԱՅ հին վանառականութեան եւ վանառականներու վրայ այս ամփոփ ընձեռուածն՝ յասկապէս արդի բուրժահայ վանառականներուն համար պատաստուած է, որպէս կարելո՞ր յուշարար մը իրենց ծագումին եւ նախորդաց:

Մենք՝ իբրեւ նախաձեռնարկ այս գործին՝ ունենալու էինք մեր դժուարութիւններն ու ի հարկէ քերութիւններն ալ: Մեր ասանամեայ գործնական փորձառութիւններն ու փորձագէտ ծանօթներու հաղորդած տեղեկութիւնները՝ բաւականապէս նպաստեցին հարթելու դժուարութիւններն ու քեքելցունելու քերութիւնները:

Սուներագիծ պատկեր մըն է՝ որ կուտանք ասով մեր բուրժահայ վանառականներուն եւ վանառականութեան հետամուտներուն՝ մաղթելով որ *Առաջին այս սակաւուց յաջորդ վերջիներն՝ ունենան ամբա՛ւ յաջողութիւններ հրապարակի մը մէջ, ուր հին ժամանակներէ հետէ ասպարիզած է հայ տոմար մեծամե՛ծ յաջողութեամբ:*





## Թ Ո Ւ Ր Ք Ա Ն Ա Յ Ո Ց

Հին վաճառականութիւնն եւ վաճառականք

«Եւ շինիցին առաջինն ին սակաւք, եւ վերջինն ին արքաւք:» ԳԻՐՔ ՅՈՐԱՅ Ը. 7:

Ա.

1740—1800

**Թ**ՈՒՐՔԻՈՑ նման գեղեցկադիր հաղորդական ու միջնազգային երկիր մը՝ հին պատմական ժամանակներէ հետէ ունեցած է մեծ կարեւորութիւն վաճառական, մանաւանդ Միջերկրականի ու Սեւ ծովի ափանց վրայ, ուր յոյն փիւնիկ ու եգիպտական գաղթականութիւնք առեւտրած են յաջողապէս պատմական ատեններէ ի վեր:

Վերջին չորս հինգ դարերու միջոցին՝ հայերն ալ ցուցած են հոն կարեւոր գործունէութիւն, մանաւանդ ասիական հայերը, որ շատոնց նշանաւոր հանդիսացած են ցամաքային վաճառականութեան մէջ. բայց մեր տեսութիւնք չեն կրնար համար առ այժմ 150—160 տարիէն անդին: Եւ արդէն մեր նկատած չրջանակն ալ այդ ժամանակամիջոցն է միայն՝ իբրեւ մօտաւորագոյն կցորդ և նախորդ արդի ժամանակաց առեւտրական գործառնութեանց:

Հարիւր յիսուն կամ վաթսուն տարուան թուրքահայոց այդ հին վաճառականութիւնը, որ ընդհանրապէս խառն էր սեղանաւորութեան և միջնորդութեան հետ ու կը կատարուէր գլխաւորապէս տեղական ու նախնական նիւթերու փոխանակութեամբ և մեծաքանակ փոխատուութեամբ, մինչեւ 1835 չունէր ինչ և է ուղղակի արաբերութիւն և գործառնութիւն նշանակելի՝ եւրոպական հրապարակներուն հետ: Բաց ի վենետիկի ձեռնովայի և Հոլանտայի հին հրապարակներէն, ուր 12րդ դարէն սկսեալ՝ Հայերը կատարած են առեւտրական գործառնութիւններ:

Գրելէ առաջ 1835էն ասդին թուրքահայոց վաճառականութեան վրայ՝ տա՛նք քանի մը կենսագրական և գործառնական համառօտ տեղեկութիւններ հին թուրքահայ երեւելի վաճառականներէն ոմանց վրայ՝ սկսելով Ակընցի Երեւանենց Մահտեսի Սեղբեստրոսէն:

Այս Ակընցի Երեւանենց Մահտեսի Սեղբեստրոս Մանուէլեան (Սեղբոս սարաֆ)՝ 18րդ դարու թուրքահայ մեծ վաճառականներուն ամէնէն առաջինն ու նշանաւորն եղած է, որ կը կոչուէր նաև պապիրկեան պաշի: Եւ էր սեղանաւոր ամէնաճոխ ինչպէս նաև վաճառապետ արքունի,<sup>(1)</sup> Իր ժամանակին Կ. Պոլիսի մէջ ամէնէն մեծատուն և ազդեցիկ Հայը, որուն հարստութիւնը մինչեւ ցարդ առակաւորեալ է թուրքահայերուն մէջ: Դժբաղդարար իր գործառնութեանց ու առեւտրական ընթացքին վրայ՝ ինչ և է մասնաւոր տեղեկութիւններ հասած չեն մեզի: Բարերարած է գլխաւորապէս Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին, ինչպէս կը գրէ Աստուածատուր եպս. ի երկհատոր Պատմութիւնն Երու-

(1) Ըստ Հ. Ղուկաս Ինճիֆեանի:



սաղէմի (տպագր. 1890), և վախճանած է ի Կ. Պոլիս, Սահակ Պարթեւի տօնին երեկոյին, 1754 Փետր. 5ին:

Իրեն իբր յաջորդած է՝ 1750էն ետքը՝ Թուրքահայոց երկրորդ մեծ թանգարը 18րդ դարուն, Ակընցի Եաղուպ աղան, որ նորոգած է հիմէն Մուշի Ս. Կարապետի վանքը<sup>(1)</sup>, որ և մեծարուած էր Կ. Պոլիսի ամէն ազգաց ժողովուրդներէն, և Թուրքահայերուն մէջ՝ 1453էն ի վեր՝ ցայնվայր հազիւ երկու հոգի տեսնուած էր հաւասարապատիւ և հաւասարահարուստ իրեն. մա՛րդ՝ Ղազէզ Յարութիւնի նման:

Այս Եաղուպ աղայ Յովհաննէսեան՝ ձեռնտու էր նաև Նալեան Յակոբ Պատրիարքին շատ գործերու մէջ, և Նալեան ալ՝ իր Երուսաղէմի պատրիարքութեան միջոցին՝ կը թղթակցէր անոր հետ շատ անգամ և կը հրաւիրէր ուխտի յերուսաղէմ՝ անուանելով զայն, իր վաճառական ընդարձակ գործառնութեանց համար, վանառապէտ արժունի, նոր Յովսէփ գեղեցիկ ժամանակին ու երկրորդ Զօրաբաբէլ սանարաւէն: Եաղուպ աղայ Երուսաղէմ ուխտագնաց ըլլալով՝ դարձին իր հետ բերաւ Կ. Պոլիս ու մայրաքաղաքին Պատրիարքութեան աթոռը բազմեցուց Նալեան Սրբազանն՝ ըստ թախանձագին փափագի այս վերջինին:

Կա՛ն մինչեւ ցայսօր Ս. Յակոբեանց վանքին մէջ՝ Պէքեար թաղի կից երկու շնորհքով հինաւուրց սենեակ, որ կը կոչուին Եաղուպ աղայի շարսախ: Կա՛ր նաև նոյն վանքին մէջ պղընձի յիշատակարան տախտակ մը, որուն վրայ մի առ մի գրուած էին Եաղուպ աղայի բարեպաշտական ընծաներն ու յիշատակները՝ նուիր-

(<sup>1</sup>) Յովհ. Հաննայ. Պատմ. Երուսաղէմի. Տպագրութիւն Բ. 1767, (էջ 139):

ուած միայն Ս. Յակոբայ տաճարին, 3—4000 վրայի մօտ արժէքով: <sup>(1)</sup>

Եաղուպ աղայի գործունէութեանց տեսակին վրայ չունինք մանրամասն տեղեկութիւն:

1730 — 45ի միջոցները՝ փայլած է Կ. Պոլիսի հրապարակին վրայ Բաղէշէ գաղթական մեծատուն Եուսուֆ չէլէպին՝ Կ. Պոլիսի արդեան Եուսուֆեանց նախահայրը, որ և հիմնագործը կը համարուի Կ. Պոլիսի նշանաւոր Հայ սահարնիներուն. ինք թուի թէ իր ժամանակի հնչուն ժամացոյցները բերել կուտար գլխաւորապէս Անգղիայէն ու կը վայելէր՝ պատկառելի հարստութեան մը հետ՝ պատկառելի անուն և դիրք: Իրմէն սերած կաւանդուին 19րդ դարու սկիզբը սահաթճի Բարդուղիմէոս, և Տիգրան Եուսուֆեան Զարեհ ու Երուանդ Եուսուֆեանք, կարծենք նաև Յովսէփ Եուսուֆեան:

1760 — 63ի միջոցը՝ նշանակուած են մեծ Վէզիրին վաճառապետ (պազիրկեան պաշի) Պօղոս Ղազար ու Ասլան ամիրաները: Ղազար ամիրան շուտ ինկաւ, <sup>(2)</sup> ու ասոնց երեքին միանգամայն յաջորդեցին՝ Ճանսուզեան Սարգիս ոմն և Սաքայեան Մարտիրոս: Սոյն միջոցները Ագուլիս քաղաքին հայ բնակիչները, որ 10000 տունէ աւելի էին, ցրուեցան աշխարհի սփիւռքը՝ մանաւանդ Կ. Պոլիսի շուրջը. ասոնք ըստ մեծ մասին հնդկական վաճառականներ էին ու իրենցմէ սերեցան շատ հայ մեծատուններ, որոնց շատը բարերար եղան եկեղեցւոյ տը-

(1) Սեդրեստրոսի և Եաղուպ աղայի բնակութեան ամարային ապարանքն են եղեր՝ Վերին Վոսփորի եւրոպական եզերքին վրայ այժմեան ռուսական և ֆրանսական դեսպանատունները:

(2) Սահակ աղայ Ղազարոսեան՝ աներն Ապրոյեանց (հանգուցեալ ի Գատըզիւղ) և իր եղբարքը սերած են այս Ղազար ամիրայէն:

պագրութեանց և վանորէից՝ հօհայ տիտղոսով աւագութեան :

Շատ նշանաւոր է նաև ամասիացի Մանուկ օղլու կարապետ, և ունի իր մասնաւոր կենսագրութիւնը ֆրանսերէն :

Այս կարապետ Մանուկ օղլու՝ ծնաւ Ամասիա քաղաքն հարուստ և ազնուական ծնողքէ, 1755ին : Տասն և եօթն տարեկան հասակին՝ սկսաւ վարել ինքնագլուխ իր հօր վաճառատան գործերը . քսաներեք տարեկանին՝ վաղ իսկ ամուսնացած՝ անցաւ եկաւ Կ. Պոլիս, ուր սկսաւ առեւտրական մեծագոյն գործերու : Սեղանաւորութիւն ալ ըրաւ շատ փաշաներու, մասնաւորապէս երկու մեծ փաշաներու, որ էին բազմահոշակ անձնարութիւններ :

Մանուկ Օղլույի վաճառարարձ նաւերը կերթեւեկէին Խրիմ և Ռուսաստան : Քսան տարի շարունակելով այսպէս թանգար-վաճառականութիւն մը՝ դիղեց մեծ հարստութիւն . ապա սկսաւ վատիլ ու իյնալ :

Այդ առաջին անկումէն ետք՝ նորէն կանգնեցաւ օգնութեամբ իր եղբայրներուն, և վերստի՛ն ինկաւ, մինչեւ որ՝ մղուած արկածներէ ու հիւանդութիւններէ՝ գնաց Սինոպ ու անկէ Եանեա, ուր նորէն տէր եղաւ տունի և դիրքի :

Ապա վերադառնալով Կ. Պոլիս՝ կըրցաւ ատենի մը համար զբաղիլ դարձեալ իր առեւտրական հին գործերով, մինչեւ որ բախելով մեծամեծ վնասներու՝ միտքը դրաւ երթալ ապրիլ Ֆրանսա : Հետզհետէ Վարչաւիա, Պերլին, Վիեննա, Համպուրկ, Լոնտրա և ուրիշ եւրոպական քաղաքներէ անցնելով՝ հասաւ Փարիզ 1823ին :


Հոն՝ իր ամբաւ հարստութեանց նշխարներովը՝ բացաւ արեւելքի անուշահոտութեանց խանութ մը Պա-



զար իթալիէնի մէջ, մինչեւ որ հո՛ն ալ հրդեհ մը պատահելով՝ մոխիր դարձուց Կարապետին վերջին հանգրուանը, այնպէս որ եօթանասնամեայ հայ Յորն հարկադրեցաւ ազանիլ գիշերները ճամբաներու վրայ:

Վերջապէս՝ ֆրանսացի երեւելի անձնաւորութիւն մը բարեկամ վրան գլխուով՝ ապաստան ճարեց անոր հանգանակութեամբ և գնեց խանութ մը Պուլըվառ սէ Բաֆօրամայի վրայ, ուր կապրէր ծերունին՝ ծախելով դիւրագին բաներ: Սակայն հո՛ն ալ անողոք բազդն հալածեց զինքը, որովհետեւ օր մըն ալ ինք ամբաստանուեցաւ արգիլեալ ծխախոտ ծախելու յանցանքով, ու դատաստանի ենթարկուելով՝ հազիւ կրրցաւ անպարտ ելնել ու ազատիլ տուգանքէ: Իր փաստաբանը՝ Տիւբլանդի՝ գրեց իր վարքը. — Վարժ Հայուն Կարապետի Մանուկ Յղուլի սեղանաւորի, տպագր. Փարիզ 1828:

Այս յաջորդական ձախողութիւններէն ետք՝ Կարապետ, ա՛լ խելամուտ իր բազդին դժնէութեան, որոշեց մեկուսանալ Արշիպեղազոսի կղզիներէն մին հանդերձ իր ընտանիքով, ու ապրեցաւ հոն վերջին համեստ իմաստութեամբ մը:





1800—1840



**Տ** ԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ Դարին վերջերն էր նաև՝ որ Հայ մը գիւտն ըրաւ ի Գուզկունճուք Վոսփորի քիւլպէնսի վրայ ձեռագործ նկարակերտութեան՝ որով նոյն կողմերն և ի Սկիւտար Եազմանիութեան արհեստը բարգաւաճելով՝ պատճառ եղաւ մինչև ցայսօր հարիւրաւոր չունեւոր ընտանեաց ապրուստին և ծնունդ և սնունդ տուաւ քանի մը տասնեակ Եազմայի վաճառականներու։ Կ. Պոլիսի Մեծ շուկային և խաներուն մէջ ու գաւառները և Տէրութեան գլխաւոր քաղաքները՝ Պէրութ, Զմիւռնա, Գահիրէ, Աղեքսանդրիա, արշիպեղազեան կղզիները կը փնտռուին ու յարգի են՝ միշտ Սկիւտարի այս Եազմաները։ Հ. Ղուկաս Ինճիճեան Մխիթարեանը՝ կերգէ հետեւեալ ոտանաւոր տողերով այս գիւտը.

Գուզկունճուք անուն մեծագոյն յեկեմ,  
Աղմատեալ անուն Գօսիմիցայիկն.  
Այ Բանեկիչմոն իւր եկեղեցիկն,  
Նիս Մեսրապոյսի հիկն Քաղկեդոնիկն։

Տեղի և գիւտի հայ գործաւորին,  
Նոր գործարանի ընտիր ներկողին,  
Նըկարակերտի գործոց բեհեզին,  
Բոյորից այոց ընտելագունեկն։

Որ քիպոս փոխեալ ի յիւսկիւսարիւն,  
Այլ սորայս կոչի անուն հընարչիւն.  
Բանայ զիւր ծաղիկ ո՛չ սոսկ զարնայիւն,  
Այլ զարնան յաշնան զանքառաւեղիւն: (1)

1790էն մինչև 1830՝ Թուրքահայ առեւտր. անգիր պատմութեան մէջ չենք պատահիր հայ վաճառական մեծատունի մը. նոյն միջոցներն երեւելի էին գլխաւորապէս հայ՝ մանաւանդ Ակընցի՝ սեղանաւորները, որոնց մասնական պատմութեան Ա. տպագրութիւնն հրատարակուած ալ է Վենետիկի Մխիթարեանց տպարանէն՝ Հին օրեր ու այդ օրերու մեծատունք անունով: Այս սեղանաւորներուն մէջ, որոնց ձեռքն էին մեծ փոխատուութեանց փոխանակութեանց և դրամատունի բովանդակ գործողութիւնք, անշուշտ կային քանի մը մեծ հայ վաճառականներ ալ Կ. Պոլիսի ու գաւառներու շահաստանները, որ կը կատարէին երկիրին արտածութեանց և քիչ շատ ներածութեանց ալ վաճառականութիւնը, գլխաւորապէս թիւլպէնտի, ներկեալ ու ճերմակ կտաւներու, պասմայի գործեր. բայց վաւերաբար չենք կըրնար յիշատակել անոնց անունները: Միայն Տօքթ. A. Brayer իր գիտնական երկասիրութեան մէջ՝ (2) կը յիշատակէ 1815էն 1825 քանի մը հայ միջնորդներ վաճառականութեան,

(1) Ետքերը՝ 19րդ դարի առաջին քառորդին՝ կը բացուի Եէնի-գարույի մէջ ֆալթրիգայ եազմայի ու քիչ մըն ալ պասմայի համար՝ 120 հիսուսի բաժնուած. նոյնպէս կը կազմակերպի Սկիւտար Սալաճաքի պաւսմայաւանէն ալ. Բարեյիշատակ Սուլթան Մահմուտ ալ ընտրանքով անուանած էր՝ քիչ մը ետքը՝ 12 կամ 24 հատ պէտքալը քիւճմար զարգացունելու համար արհեստները, որոց մին ալ էր Սեթեան Դաւիթ. Եւ ասոնց բերած գլխաւոր վաճառքն էր Թիւլպէնտ՝ եազմայի համար.

(2) Neuf années à Constantinople et observations par A. Brayer D. M. P. membre de plusieurs sociétés savantes. Paris MDCCCXXXVI.

Կարնեցի մեծ հայ վաճառական մը կծծի՝ 250.000 ոսկիի մը տէր ու Հապէշցի Կարապետ ըսուած իննըսնա Տեայ ներհուն Հայ մը, որ իր որդւոյն հետ Եթովպիա կերթեւեկէ եղեր վաճառականութեամբ<sup>(1)</sup>։ Այս միջոցին Սեբաստիայի մէջ նշանաւոր եղած են՝ Աթթար Յովսէփ՝ հարուստ և առեւտրական ընդարձակ գործառնութեանց տէր։ Գառապաշեան՝ որ մշակած է յաջողութեամբ առեւտր. բոլոր ճիւղերը. այս երկուքն ալ չեն ունեցած իրենց սերունդը շարունակող մը, բայց մինչև հիմա առեւտրական մարդոց մէջ կը յիշուի իրենց անունը։ Ասոնցմէ քիչ ետքը կուգայ դարձեալ Սեբաստիայի մէջ Հայրապետ Շամլեան՝ Տարէնտէցին, որ առաջին անգամ ըլլալով հաստատած է Սեբաստիայի մէջ չուխայի մեծ վաճառատուն մը. ապա բացած է Կ. Պոլիսի մէջ սեղանաւորական մասնաճիւղ մը։ Իր առեւտրական տունը թէ՛ Սեբաստիայի թէ՛ Տարէնտէյի թէ՛ Կ. Պոլիսի մէջ իր պարկեշտ գործառնութիւններով մեծ համակրութեան արժանացած է ու իր համբաւը պահած է բաւական ատեն։ Ասոնց հետզհետէ յաջորդած են Սեբաստիոյ մէջ նշանակելի տուներ, որոնց մէկ քանիին անունը պիտի յիշենք գործիս ընթացքին։ Ասոնցմէ ու աւելի վերն յիշուած քանի մը հին մեծ վաճառականներէն զատ՝ անոնց յաջորդ վաճառական հայերուն անուններ հասած չեն մեզի՝ գլխաւորապէս իրենց տուններուն յաջորդութեան չգոյութեան սովորական պատճառով։

(1) Dr. Brayer այս Հապէշցի Կարապետէն սորված է Brayer anthelmintica ախտահալած ծաղիկին ոյժը։ Այս ծաղիկ կը բուսնի Եթովպիայի մէջ, և Հապէշցի Կարապետ բերել տուած է զայն ու յանձնած Տր. Պրէյլըրի, որ և Եւրոպայի Բժշկական Ժողովին ներկայացուանելով՝ արժէքուցած է զայն և իր անունով յորջորչած։ Տես վերոյիշեալ զիրքին վերջերը, էջ 427—432։ Ծաղիկին հին անունն էր Cabotz, Թեբուս հայերէն կապոցը։



Այդ երանելի մարդիկ՝ թուր՝ կանոնաւոր վաճառատետր անգամ չէին գործածեր, որպէս զի գէթ տեղ մը պատահէինք իրենց վրայ ձեռագիր յիշատակարաններու մը: Կ. Պոլիսի և Թուրքիայի գլխաւոր քաղաքաց յաճախաւոր հրդեհներն ու վատնող հրդեհող հովարսայութիւններն և անուսումնասիրութիւններն ալ՝ ոչնչացուցած ըլլալու են շատ բան այդ հինաւուրց յիշատակարաններէն: Սա միայն կրրնանք հաւաստեալ արձանագրել՝ որ Թուրքահայոց մեծ վաճառականութիւնը, գէթ մինչև 19րդ դար, ցամաքային էր ու շատ ալ շահաբեր<sup>(1)</sup>. և 1830էն ասդին սկսաւ վերածուիլ ծովայինի՝ մանաւանդ Անգղիայի հետ՝ հարկաւորաբար, ինչպէս որ «Ժողովուրդներու վերջին ապաւէնն և զամ է ծովային վաճառականութիւնն ըստ Վոլդէրի: Le commerce maritime a toujours été la dernière ressource des peuples. (Voltaire. Essai sur les mœurs des nations. Introduction). հին մատենագիրք ցամաքային վաճառականութիւնն ոսկի դարուն և ծովայինն երկաթի դարուն կընծային: Եւ այս սլարաբայ, ինչպէս հին ու նոր հայերուն վրայ, նոյնպէս ճշմարտուած է գլխաւորապէս հին Փիւնիկեցոց<sup>(2)</sup>, Կարքեղանացոց, Յունաց և 12րդ դարէն մինչև 18րդ դար՝ նաւագնաց Ճենովացի, Վենետիկցի, Բորդուկէզ և Հոլանտացի վաճառականներու վրայ, որ առհասարակ ցամաքի կողմէն անձկացած ու անըստացուած էին:

(1) 19րդ դարուն սկիզբն՝ երկու վաճառական հայեր Պարսից աշխարհին ցամաքէն անցան Պոլսարա և անկէ Կ. Պոլիս. Հնախօսութիւն Ինճիճեանի հատ. Ա. էջ 241.

(2) Փիւնիկեցիք՝ առաջ կը բնակէին, ըստ Պարսիկ գիտնոց, Կարմիր ծովի եզերքը. ապա անցան Միջերկրականի արեւելեան եզերքը, ուրկէ մեծ և յանդուգն նաւագնացութեանց ձեռնարկեցին՝ վաճառականութեան և աշխարհադիտութեան համար: Տե՛ս Երողոտո: (Դիրք Ա. Վրդիով, հատուած Ա.):




Ստացուած առ ձեռն հին ու նոր ծանօթութեանց վրայէն ակնարկ մը նետելով հին ու նոր թուրքահայ առեւտրոց վրայ՝ կը տեսնենք որ 1500 թուականէն ի վեր՝ Ասիայի մերձաւոր և հեռաւոր դեհերէն հետզհետէ Կ. Պոլիս գաղթող և հաստատուող հայերուն ստուար մասը, Տաւրոսեան Քերսոնի հին գաղթականութեանց և Կ. Պոլիս բնակացած հին հայերուն հետ, տակաւ առ տակաւ բռնած էր մեծկակ աեղ մը մայրաքաղաքին միջնազգային փորձ Էսնաֆներուն մէջ, որ հոռմէական բլեպներու շարունակութիւն մըն էին :

Կամարակապ Մեծ շուկային պեղեսքեցներէն սկսելով՝ մինչև Կէզիր խանի, Չուխաճի խանի, Քիւրքճի խանի, Վալիտէ Մեծ-Նոր և Սիւմպիւլ խաներու մէջ ու շրջակայքը բռնած էին արհեստական ու առեւտրական կարեւոր դիրքեր հին հայ չուխաճիները, գազազները, ոսկերիչները<sup>(1)</sup>, ակնագործները (ճէվահիրճի), թիւլպէնտճիները, եազմաճիները, շալճիները, պէզճիները, մանրավաճառ մանիֆաթուրաճիները, գալբաքճիները, սահաթճիները, թոհաֆճիները, պիլէդիկճիները, տեղացի դերձակները, հոչակաւոր քիւրքճիները, տէլլալները, երկաթավաճառներն ու չիլինկիրները :

Հայ ժողովուրդին այս գործոն միջակորեարը՝ քիչ շատ բարեկեցութեան բերումներով և տեղական խորին ծանօթութիւններով և անցուկ կենցաղագլխութեամբ օժտուած՝ կըրցած է երեք հարիւր տարիի չափ կանգուն անկարօտութեան և գործունէութեան մէջ պահել իրեն հետեւորդ Կոստանդինուպոլսեցի արհեստաւոր հասարակ ժողովուրդը, յաճախ որդի ի հօրէ ժառանգելով ճարպիկ

4026  
33388

(1) 2. Միքայէլ Չամչեան մեծ Մխիթարեանն ալ՝ ելած է ոսկերչաց Կ. Պոլիսի շուկայէն, ուրկէ 23 տարեկան մեկնած է Ս. Ղազարի Մխիթարեան վանքն ի կրօնաւորութիւն :



բարք ու այլամերժ արհեստագիտութիւնն յը՛ հրեայ ամէնաչիւարհիկ ժողովուրդին գրեթէ համանմանութեամբ, հմուտ գործնականի ընթացիկ եղանակներուն, այլ իբրև միշտ անհմուտ տեսականին լայն ու երկնող սկիզբներուն և կանոններուն, որ Արեւմուտքի Յարեթեանց առանձնաշնորհիկ ձիւքն ըլլալ կը թուին:

Միջակորեար այս դասակարգը, որ ձեռնամուխ եղած է ժամանակակից եկեղեցական և կրթական գործունէութեանց ալ՝ մերթ ընդ մերթ հանդիսաւոր պարագաներու, մանաւանդ պատրիարքական ընտրութեանց և աստուածաբանական ժողովներու դարձադարձ առիթներով, երկիւղած ու պաշտպան էր նահապետական տնարարութեանց, և կը բաղկանար մի ծ մասով բնակացեալ հին Կ. Պոլսեցիներէ, Կիլիկեցիներէ (գլխաւորապէս ոսկերիչ), Ակընցիներէ (գլխաւորապէս հացագործ և սեղանաւոր), Սեբաստացիներէ (գլխաւորապէս դերձակ, պանդոկապետ, գպիր և լն) և բանիբուն այն Կեսարացիներէն (գլխաւորապէս առևտուրի մարդիկ և կառուցապետ բանուորք), որ 18րդ դարուն շատ նշանաւոր եղած էին<sup>(1)</sup> ի մայրաքաղաքն թուրքիայի:

Հաւանական է նաև՝ որ ասոնք իրենց գործած արհեստներն իրենց հետ բերած ըլլան այն բնավայրերէն, ուրկէ կը գաղթէին, մանաւանդ Կիլիկեցիք ու Կեսարացիք. Կիլիկիա ի հնուց ոսկերչաց կայան ըլլալով, և Կեսարիա պատմական շատ հին ատեններէ հռչակուած իբրև կենդրոնավայր Փոքր Ասիայի ցամաքային մեծ վաճառականութեանս:

Ասոնցմէ պատրեկաբար զատ և բաւական վեր դիրք մը զբաւած են Կ. Պոլիսի մեծատուններուն մէջ՝ հինաւուրց մեծ ճարտարապետները, սեղանաւոր և պաշտօն-

(1) Տե՛ս Նուրտինեան վարդապետի տաղը ձեռագիր՝ Անտօնեանց միսրանութեան վանքն, Օրթագիւղ Կ. Պոլիսի:

եայ ամիրաները, զարպհանէցիները, հացապետները, քիւրքճիպաշիններն և ա՛յլ պաւելիները:

Սակայն այս ամէնուն մէջ՝ բաց ի նախորդով յիշուած քանի մը վաճառապետներէն՝ մեծ վաճառականութեան գլխաւոր ներկայացուցիչներ՝ թուի՝ չեն երեւցած մինչև 1830-40, կամ անուննին չէ՛ հասած մեզի: Բաղէշի, Կարսի, Մելղենիի և Կոմանայի շահաստաններուն մեծ վաճառականները՝ թուի իրենց բնավայրին վրայ շարունակած են իրենց գործառնութիւնները, անփոյթ հեռաւոր գաղթականութեանց խայծերուն:

1820էն 1835՝ մինչ Կ. Պոլիսի հին սեղանաւոր մեծ Ակընցիները տեղի կուտային հետզհետէ գործի ու աշխարհի՛ ալ թատրէն, Կ. Պոլիսի բանիմաց Հայերը կը կեդրոնանային գլխաւորապէս՝ Տիւզեանց պաշտպանութեամբ՝ Զարպհանէյի գործառնութեանց վրայ, և յոյն վաճառականներն ու արեւելցի Ֆրանկները, որ ցայնվայր արմտեաց ու մանիֆաթուրայի առեւտուրները կը կատարէին, կամփոփուէին սեղանաւորական շահադէտ ու հաշուադէտ գործունէութեանց պարունակին մէջ, ուր դժուար էր մուտ գործել օտար լեզուներու անընդել ու միայն թուրքերէնի և մասամբ իտալերէնի վարժ Հայերուն: Եւ ահա ծայր կուտար սեղանաւորական և կառուցապետական երկրորդ ու վերջին հին դասակարգ մը՝ ամիրայութեան վերջալոյսին մօտերը: Ղազէզ Յարութիւն, որդի Կարսցի պէզճիի մը, զազէզներու համեստ շուկայէն կը բարձրանար Փողերանոցի վարչութեան ու խորհրդակաշնութեան, որով՝ ինչպէս նաև բացառիկ պարագաներու և շնորհներու բերումով՝ Կ. Պոլիսի գործօն Հայերուն առջեւ կը բացուէր ոսկեղար մըն ալ լայն գործերու և թեւարկեալ հարստութեանց, մանաւանդ Սուլթան Մահմուտ երջանկայիշատակ Կայսրին առատագթութեամբ:











1840—1852



**Ա**ՅՍ բարերազդ տարիներէն անմիջապէս ետքն է՝ որ կարգ մը սակաւաթիւ բանգէտ Հայեր, առթուելով մանաւանդ յառաջիմաց և ճարտարագէտ յոյներուն և Ֆրանկներուն մանիֆաթուրայի հրապարակէն տեղի տալէն, ձեռնարկեցին կաղմել մանիֆաթուրայի ու երկաթի վաճառական տուներ թէ՛ թուրքիայի թէ՛ Անգղիայի մէջ։ Մանիֆաթուրաճի ու երկաթավաճառ հայերը՝ ցայն վայր վեր բարձրացած չէին այս ճիւղերուն մէջ տեսակ մը հին օսանիութենէ ու մաղազանիութենէ, և հակով վաճառք ծախելն ի. Կ։ Պոլիս՝ միայն Յունաց ու Եւրոպացւոց առանձնաչնորհն եղած էր։

Մեր առած տեղեկութեանց համեմատ՝ մանիֆաթուրայի այս վաճառականներուն առաջիններն եղած են Մէրասեէտի Գրիգոր Յարութիւն և Յովհաննէս ի Լոնտրա. Մէրասեէտի Գրիգոր նախ յԱնգղիա վաճառաչահած է, ապա ի թուրքիա զահրէճիութեան պարապելով՝ յիւսս կրած. ապա Էօբիւրի մեծ գործեր ըրած։ Մէրասեէտիներն՝ իրենց ճոխ ու պերճ կենցաղին համար՝ անուանուած են Մեքասեքսի. Կարապետ և Գրիգոր թօքաթեան նոյնպէս յԱնգղիա, որ Քափամաճեան եղբարց զուգաժամանակ՝ բացած են անգղիական վաճառականութեան կանոնաւոր լայն դուռները թուրքահայոց համար 1835էն 1840։

1838—1840ին՝ Տատեան Պօղոս և Տատեան Յովհաննէս պէյերը (այս վերջինն հայր հանգուցեալ Բարձր. Յարութիւն-Պարեգին փաշայի Տատեան)՝ տիրացած էին բացառիկ փայլուն դիրքի Կ. Պոլիսի հինաւուրց ազնուականներուն մէջ՝ ըլլալով Տէրութեան պարուրնի պաշտօններուն յառաջդէմ ղաւակները, և՛ իբրև անոնց յաջորդ՝ ունենալով իրենց բարի ու բերրի տրամադրութեան ներքև անսահման վարկ և բարի վստահութիւն՝ Օսմանեան Վեհափառ Ինքնակալին սիրելի ըլլալու աստիճան. մանաւանդ Յովհաննէս պէյ Տատեան, որ խոհո՛ւն գիտո՛ւն և մատենագի՛ր անձնաւորութիւն մըն էր՝ շատ բարեպաշտ ու բարեգործ, և քանիցս ճամբորդեց Եւրոպա մեքենական գիտնասիրութեամբ, ու զոհեց անընդհատ երեք չորս տարի մեքենական գիւտի մը ուսումնասիրութեան՝ չարաչար աշխատութեամբ:

Մանուկ, Յարութիւն, Գէորգ և Խաչիկ Քափամաճեան եղբարք՝ ծագումով Տիվրիկէն՝ խնամեցան այդ միջոցներուն Տատեան Պօղոս պէյի հետ, և ա՛ս եղաւ իրենց առեւտրական միջակ տաղանդին ու դիրքին<sup>(1)</sup> համար հզօր առիթ մը՝ Պօղոս պէյի թեւարկութեամբ ու եւրոպական համբաւովը՝ բանալու մեծկակ Տուն մը վաճառական ի Մանչէսթըր թէ՛ Կ. Պոլիսի առեւտրական երապարակին թէ՛ Օսմանեան Տէրութեան հայթայթելու համար մեծաքանակ երկաթ մանիֆաթուրայ և լն.:

Ունենալով իրենց շուրջն հնարիմաց սակայն մեծ մասով ռամիկ ստորադրելոց բազմութիւն մը, որ ո՛չ տուժար բռնել / ո՛չ ալ արեւմտեան լեզու մը գիտէր, Քափամաճեանք մինչև 1870 փառաւորապէս վայելեցին անգլիական վաճառատուններու գործարաններու եւ

(1) Կըսուի թէ Քափամաճեանք առաջ պարզ ֆափամաճիներ էին Կ. Պոլիսի շուկային մէջ:

Տատեան վարկերու փառաւոր և շահաւոր արդիւնքը, գլխաւորապէս վաճառելով Րուսէլիյի և Անատոլույի հրապարակներուն և մեծ բանալիւններուն մէջ ալ ամերիգանի կտաւի և պասմայի մեծաքանակ մթերք՝ սովորական տեսակներու և ճաշակներու վրայ, որ դեռ չէին պահանջեր այնքան նուրբ խելք և ճարտարութիւն: Եւ աւելի՛ փառաւորութեամբ ու տեւականութեամբ կը վայելէին՝ եթէ բազմօք զանգուած չըլլային Պոլսահայոց այն անիմաստ շռայլութեամբ և անհաստատ ու ոչ անպատիր վարք ու բարքով, որ գլխաւոր պատճառներն եղած են պարզմիտ հարստութեանց նուազումին:

Բափամաճեանց այս մեծ առաջին տան մէջ կըրթուած մարզուած են Կ. Պոլիսի հրապարակին հին մանիֆաթուրածիներէն ոմանք, մանաւանդ պասմաճիներէն. որոցմէ կըրնանք յիշել Յովհաննէս Խօնչէկիւլեան՝ հմո՛ւտ Անատոլույի շահաստաններուն փայլուն և նախշուն տեսակներուն, ինչպէս իր կրտսեր եղբայրը՝ Տիգրան Ղոնչէկիւլեան, վարպետորդի ներակրթեալ մը Կ. Պոլիսի հին պասմայի հրապարակին գործառնութեանց և խօսելակերպերուն՝ հմո՛ւտ ժամանակին Րուսէլիյի շահաստաններուն ճկուն տեսակներուն. Մարտիրոս Թոքաթեան՝ բազմաշխատ գրագիր ու գործակատար մը, որ Յովհ. Տէրոյնեցի պարկեշտ դպրոցին աշակերտներէն էր, ու ապա իր արթնամտութեամբն յաջողեցաւ առանձին տուն մը բանալ ի Մանչէսթըր և բազմանալ ու բազմացունել իր միւս եղբայրները. նաև ուրիշ կարգ մը երկրորդականներ, որ ապա հիմնեցին իրենց հաշուոյն զատ գործեր և տուններ, և պասմայի զուարթ ու շահաբեր ճիւղը զարգացուցին և բերին հասուցին մինչեւ 1880—1890՝ պասմանիութեան վերջին ոսկեդարը:

Բափամաճեանցմէ քիչ ետքը՝ Մանչէսթըրի մէջ կա-



նոնաւոր վաճառականութեան սկսաւ յառաջիմաց և ուսումնասէր Պանտրըմացի մը, Յովհաննէս Յովակիմեան, որ տասներկու տարի Անգղիայի մէջ փորձա՛ռաբար և գը՛րարար գործելէ ետք՝ հրատարակեց ի Փարիզ 1860ին Պատմութիւնը նախնեաց վաճառականութեան, թարգմանելով զայն իր կիրթ որդիին՝ Գառնիկ Յովակիմեանի՝ աշխատակցութեամբ բաւական կոկիկ ու գրարաւակիրթ աշխարհաբառի մը: Այս պատմութեան մէջ կաւանդուին՝ դասական պարզ ոճով մը՝ ճշմարիտ և արդար վաճառականութեան սկիզբներն՝ հին Նգիպտացւոց, Երրայեցւոց, Փիւնիկեցւոց, Կարքեցոնացւոց, Յունաց, Հնդկաց և ալլոց վաճառական գործունէութեանց վրայ գործնական ու պատմական ծանօթութիւններով: Յովհաննէս Յովակիմեան՝ որ հայ վաճառականներու Պապա Նահապետը կը կոչուէր իր երիտասարդ ժամանակակիցներէն՝ միջոց մը քանի մը զարգացեալներու հետ ՚իմնեց նաև վաճառական ընդարձակ ընկերութիւն մը, որ շատ չտեւեց. իրեն յաջորդեցին իր արժանաւոր որդիքը՝ Գառնիկ և Յովակիմ Յովակիմեան, առաջինն ի կ. Պոլիս երկրորդն ի Մանչէսթըր:


Այդ միջոցներուն սկսաւ նաև Մուշեան Յարութիւն անուն անձ մը եւրոպական բազմահրապոյր վաճառականութեան՝ գլխաւորապէս Անգղիայի մառախլապատ Մանչէսթըր քաղաքին մէջ, ամուսնանալով ալ հոն անգղիկ օրիորդի մը հետ. և առեւտրական կարճ յաջողութիւններէ մը ետք՝ նուազեցաւ վատեցաւ և ինկաւ, ինչպէս իրմէն ետք մէկ քանիններու ալ պատահած է այս գժբաղդութիւնը ծանօթ պատճառներով և արտողութիւններով: Իր միջնորդութեամբ գնուած է Մանչէսթըրի Upper Brook փողոցին վրայ Հայոց եկեղեցիին ընդարձակ դետինը, և ինք նոյն եկեղեցւոյն կառուցա-

կան հսկող կարգուելով՝ շահեցաւ բաւական դրամ և բաւական մըն ալ խորելով՝ պատճառ եղաւ պարտքի մը, զոր դժուարաւ գոցեցին տեղւոյն վաճառական հոգաբարձուները :

Դարձեալ Կ. Պոլիսի հրապարակին վրայ՝ Քափամաճեաններէն ետք նշանաւոր հանդիսացաւ Ռումանիացի կամ Աւստրիացի Աճէմ օղլուն Պետրոս, որուն համբաւաւոր վաճառատունին մէջ մարզուեցան Կարապետ ու Տիգրան Գարակէօզեան եղբարք, մինչ իրենց մեծ եղբայրը՝ Գրիգոր Գարակէօզեան՝ հիմը կը դնէր տեղական հրապարակին վրայ ընդարձակ սեղանաւորական և կալուածատիրական գործերու, որ ապա առին մեծ համեմատութիւններ : Գարակէօզեան եղբարց կը հովանաւորէր գլխաւորապէս իրենց մօրեղբայրը Տակէս աղայ, համեստ ու աղքատասէր անձնաւորութիւն մը : Իսկ Աճէմ օղլու Պետրոս՝ քսան տարիի չափ պայծառութեամբ շարունակելով իր բազմաշահ գործը Կ. Պոլիսի քանուկ հրապարակին վրայ Չաքմաքճըլարի վերի գլուխը՝ 200,000 ոսկիի հարստութեամբ անցաւ հաստատուեցաւ եւրոպական մայրաքաղաք մը՝ յետ վախճանին կտակելով իր մնացած հարստութիւնը տեղւոյն քաղաքապետարանին : Իր գործն և հռչակեալ անունը՝ փոխարինութեամբ մը ձեռք առին Գարակէօզեան եղբարք, որ քսան տարի մը եւս վայելեցին Անկմ օղլու պսամասի կոչման արդիւնքը :

Ի բնէ զուսպ տնտեսագէտ և գործունեայ՝ Գարակէօզեան եղբարք, մանաւանդ վաղամեռի՛կն Կարապետ Գարակէօզեան, լո՛ւրջ հանգո՛ւշն և մէթոսի՛կ գործունէութեամբ շարունակեցին Անկմ օղլու անունով պսամայի հաստատեալ ու ծաղկեալ գործը, և յաջողեցան իրենց անունով ալ հիմնադրել Կ. Պոլիսի ու Անգղիայի

փառաւոր սկիզբին ու կազմութեան՝ չկրօցաւ զիմանալ ընդ երկար իր ընկերական համագրեալ հարկահաւաքութեանց գործին մէջ, և զեղծմանց ու անկանոնութեանց երեսէն՝ նուազեցաւ հուպ ընդ հուպ ու եղծաւ, տեղի տալով եւրոպական մէթոտով հետզհետէ կազմուած պանքաներու և հաշուետուններու: Սեղանաւորական այս ընկերութեան պիտի ականարկենք դարձեալ քիչ մը ետքերը (<sup>1</sup>)



---

(<sup>1</sup>) Այս ընկերութեան Անաստուշի ըսուած մասին գործակատար էր 1851ին Հաճի Նշան Շիրինեան (հայրը՝ Միհրան ու Երուանդ եղբարց Շիրինեան), Վաճառական դործերով Բարիզ և Լոնտրա ուղեւորած անձ մը, որ և յիշոց մը Տնօրէն ալ եղաւ Ծինանսիալ Պանքի (Պանք Օթօմանի նախորդը) Մեծ Նոր Խանի ճիւղին՝ ըստ գրոյցի իր կրտսեր որդւոյն:



մէջ մանիֆատւոյի առաջին կանոնաւոր տունը, որ ի վերջէ ձեռնարկեց նաև սեղանաւորական ընդարձակ գործառնութեանց և գորգի խորհրդաւոր տուրևառնե-րու՝ ամուր և բարեկշռեալ հիմերու վրայ, ինչպէս պիտի գրենք իր կարգին :

Այս միջոցին կը փայլէր նաև ձէզայիրլեան Մկր-տիչ՝ մեծ դրամատէր և մաքսային ու պետական ուրիշ գործերու յանձնառու, որուն պերճամուլ և արձակաբա-րոյ կենցաղը շո՛ւտ նուազեցուց և նուազեցուց զինքն իր բարձրութիւններէն :

Նախայիշեալ վաճառականներուն հիներէն մէկ քա-նին և հին սեղանաւորներէն մաս մը՝ 1839ին յատուկ դրամագլխով (9 բեռ և 49131 դրշ.) բերել տուած էին Լոնտրայէն, Պարոն Լըմուան վաճառականին ձեռքով, Էսքրի Թիմարէք անուն նաւ մը և սկսած ալ էին բանե-ցունել զայն՝ մանաւանդ Սեւ Մովի նաւահանգիստնե-րը : Նաւը դժբաղդաբար վտանգեցաւ Սամսոնի առջև, և որովհետև ապահովագրուած էր 12000 լիրայի՝ կարճ դատաւարութենէ մը ետք առին փոխարէնը : Ասոր նման ըրած են դարձեալ՝ ժամանակին հարուստներն՝ առեւ-տրական մեծ ձեռնարկներ, ինչպէս իրենցմէ քանի մը հոգի Շիրքէթ-ի-Սայրիյէի սկզբնաւորական գործողու-թեանց և հաստատութեանն իսկ բաժնեկից եղած են : Այս վերջիններէն էր Բէսիմճի Հաճի Մկրտիչ Խալիֆան՝ ծնած Կեսարիայի յայնժամու միակ հայախօս Մանճու-սուն զիւղը, որ և 100ամեայ կնքեց իր գործօն և խո-հեմ կեանքն Սկիւտար Իճատիյէ՝ 1899ին :

Ասոնցմէ քիչ առաջ դարձեալ՝ Կ. Պոլիսի ջոջ հա-րուստներէն խււմբ մը՝ համախոհութեամբ իրարու հետ և համահաճութեամբ Պետութեան, հիմնած էր այն հըս-կայ ընկերութիւնը սեղանաւորական, որ՝ հակառակ իր














1852—1860



**1**854—56ի մեծ դէպքերուն հետ՝ յառաջ եկան առեւտրակա՛ն ալ գործերու մէջ անակնկալ յաջողութիւններ ու բազդի տօնավաճառներ, որոցմէ օգտուեցան գլխաւորապէս տեղացի բանգէտ հսկաձներն ու վաճառականները, մանաւանդ մանիֆաթուրաճիւներն ու ոսկերիչներն և ակնագործները:

Յաջողութեանց այդ շրջանին է՝ որ մանիֆաթուրայի վաճառական տուներն հիմնադրեցին ի Կ. Պոլիս և ի Մանչէսթըր, ու հետզհետէ զօրացան և բարգաւաճեցան՝ Սինանեան, Ալիքսան Եոսուֆեան, Յակոբ Պէշիթաչեան և որդիք, Միքայէլ և Յովհաննէս Յակոբեան, Սմբատեան Մանուկ և Յարութիւն Վանցի, Յնտըքլեան Հաճի Պօղոս, Կիւլպէնկեանք՝ նախ ի Կեսարիա և ի Զմիւռնա, Հարենց Աբրահամ՝ ծագումով Երեւանէն, (Զմիւռնայի Եսայեանք, Էքիզլէր, Մանուկեան (Մանիկեան) Սենեքերիմ ու եղբարք, Բապուճճեան Գէորգ և Յովհաննէս՝ վաճառական եւրոպական եաղմայի, Մուրատեան Գէորգ, Սիմէոն աղայ՝ վաճառական մականուանեալ, Սեբաստիայի մէջ Յարութիւն Պագալեան, որ 1850ի ատեններն սկսած է հոն վաճառականութեան և մանիֆաթուրայի ու խուրտավաթի գործերով ինչպէս նաև արտածելի ու ներածելի

ապրանքի ընդարձակ զործերով զբաղած է: Ունեցած է առեւտրական յարաբերութիւններ Հալէպի, Տիարպէքի-րի, Մուսուլի, Էրզրումի, Գոնեայի, Պրուսայի, Գասթէմունիի ուսական վաճառաչահ քաղաքներու և Մարսիլիայի հետ: Իրեն յաջորդած են Սինան Սենեքերիմ և Սրապիոն Պաքալեանք: Ասոնց պէս ոչ սակաւ ուրիշներ ալ:

Ասոնցմէ զատ և աստիճան մը վար՝ հին ատեններէն՝ յոյներու և ֆրանկներու մանիֆաթուրայի մեծ վաճառականութիւնը վարած ժամանակէն՝ կայի՛ն ու հետզհետէ կաճէին Կ. Պոլիսի խաներուն մանաւանդ Վէզիր խանի, Եալտրզլը խանի, Քէպէճի խանի, Մեծ Նոր խանի, Սիւմպիւլլի խանի և Չաքմաքճըլարի զառի վայրին վրայ երկրորդական վաճառողներու խումբ մը՝ օսանի ըսուած, որոց ձեռքն էր հատորով (քովով) վաճառելը տեղացի ու դաւառացի վաճառող Էսնաֆներուն, մինչ հակով (պալեայով) վաճառումն՝ առանձնաշնորհումն էր վերոյիշեալ մեծ վաճառականներուն. և այս խրտրանքը տեւեց մինչեւ 1880՝ երբ մեծ վաճառականք ալ սկսան հատորով բաց վաճառել, ու այսպէս՝ օսանիութիւնը, որ բանուկ ու զատ արհեստ մըն էր հրապարակին միջակ դրամագլուխի և միջասահման կարողութեան տէր անձերու մէջ, հետզհետէ նուազեցաւ ու անհետ եղաւ՝ մեծ վաճառականներու ազանութեան և շահադիտութեան պատճառով:

Իսկ ոսկերիշներու և ակնագործներու գլխաւորներէն՝ այդ միջոցին՝ կրճանք յիշատակել Տիվրիկցի նշանաւոր Տիւղեանց հին տունէն զատ՝ կիւմիւշճի Գասպարն՝ անուանի դրամատէր ու դրամագէտ (հայրը՝ Կիւմիւշճեան Գարրիէլ աղայի), Քէօչէ օղու Յովսէփ, Յակոբ և Պօղոս եղբարք, Չրաճեան Սարգիս, Մրմըրեան

Գէորգ ու Եղիազար՝ որդի ի հարց հարիւր տարուան ոսկերիչներ (ծագումով Եւդոկիայէն ու Մարաշէն), որ նշանաւոր էին մանաւանդ ադամանդի գնահատութեան մէջ, գույումճը Մելքիսեդ, որ Գումգարույի եկեղեցւոյնու թեան մէջ ալ ցոյց տուաւ լուրջ գործունէութիւն, էգնայեանք՝ որ հետզհետէ փայլեցան ի Կ. Պոլիս և ի Փարիզ:

Նաև Նշասոսանեան Խաչատուր, Քրիս, Կարապետ և Նշան, որոց որդիք յաջողապէս շարունակեցին իրենց հայրենի գործերը, Թոսունեանք, որոց ն սխահայրերէն էր Իգնատիոս Մուրատճայ տ'Օնըն՝ օսմանեան երեւելի պատմիչ մատենագիրը, Յովսէփ Գագմաճը, Նարկիլէճեան Յակոբ, Գալփաքճեան, Կեսարեան Բարսեղ, Չըպուքճեան և այլք:

Ոսկերչութիւնն՝ ակնագործութեան հետ՝ Կ. Պոլիսի մէջ վաղուց եղած է Հայոց սեպհական փայլուն և փայլեցունող արհեստ մը: Հին ատեններէ՝ Մարաշցի, Ատանացի, Սըրաստացի, Վանցի, Տիվրիկցի ու Բաղէշցի վարպետներ բարգաւաճեցուցած են այդ արհեստը՝ ժամագործութեան հետ՝ ի Կ. Պոլիս եւս, և ըրած են զայն Հայոց համար մենաշնորհի պէս բան մը, ուր հազիւ քանի մը Հրեաներ ալ յաջողած են մտնել միջնորդաբար երբեմն ալ գործակցաբար: Սակայն լիւքսի վերաբերեալ ամէն պոռոտ արհեստներու պէս, մանաւանդ իրենց գործած նիւթերուն անձախութեան պատճառով, ոսկերչութիւնն և ակնագործութիւնն ալ չեն կրցած տեւական ամուր և շահաբեր հիմեր դնել հին և նոր տուներուն մէջ. նշանակեալ այդ վաղեմի ոսկերիչներէն այսօր հազիւ մէկ երկու հատ կըրնանք տեսնել հրապարակին վրայ՝ անանկ յաջողութեամբ շարունակուած: Արուեստապետներու ամէնէն հզօրն և յաւիտենականը՝



ընութիւնը՝ ներող և հաշտ չթուիր արուեստական զարգերու և անոնց հայթայթիչներուն հետ, մանաւանդ երբ միտք բերենք անոնց սկզբնական ստացումին համար հանքերու մէջ քաշուած չարչարանքը :

Նախայիշեալ մանիֆաթուրայի վաճառականներէն հինգ տասը տարի ետքը կուգան նաև Աղարեան մեծ վաճառականները, որ Յունարէնէ հայ և թուրք լեզուներու մեծ բառարան մըն ալ հրատարակած էին Վիեննայի տպարանէն 1848ին, Արբաճեան եղբարք, Արթինօֆ Անտոն, Փափաղեան Յակոբ և Կամսարական Ա. Կիւմիւշեան Համբարձում՝ վաճառական բամպակի, Կիւրեղեան, Մոստիճեան ու Եսայեան՝ պաքրրի վաճառական, Բեհհեան Ա. Մ. Ֆրէնկեան Մ. Ս. Գավաֆեան Գարա Սարգիս և Եղիա Կարապետ Պէլլէրեան՝ եւրոպական եազմայի ու թաշկէնի վրայ գործողք, Ալլահվէրտի օղլու Սաչատուր՝ վաճառական տեղական եազմայի, որ և երեսուն տարի երկիւղածութեամբ և անձնանուիրութեամբ ծառայեց Սկիւտարի Ա. Սաչ թաղին :

Եւ ասոնք՝ 1850 — 55էն սկսելով կը հասնին մինչև 1880՝ ոմանք աւելի՛ ասդին պարզ և դիւրին յաջողութիւններով : Ասոնց գործունէութեան ատեն՝ թուրքիայի մէջ անգղիական վաճառականութիւնն՝ առանց կարեւոր մրցակիցի էր և անունն անգամ չիկար ի Կ. Պոլիս գերմանական իտալական աւստրիական յանձնակատար վաճառականութեան :

Ալպիոնեան աշխարհահռչակ կղզիին (Բրիտանիայի) այս անմրցակից վաճառականութեան բարիքն ու շնորհները՝ կը վայելէին լիով թուրքահայ քանի մը վաճառականք անակնկալ բարեբաղդութեամբ, անո՛վ մանաւանդ որ եւրոպական Հիւսիսի այդ նոր և լուրջ փիւնիկները միշտ նախանձաւոր եղած են ամէն կերպով՝ հայթայթել



հինն ու մեծն Արեւելքի մէջ իրենց համար ծախողներ, միջնորդներ, փոխադրողներ, փոխանակողներ, տեղեկատուներ եւլն: Սակայն Արեւելքի մեր այդ ծախող հայ միջնորդները, զոր մենք լայնաբար վաճառական անուանել սուլոր ենք, մանաւանդ անոնց մէջ ափ մը ջութերուն մեծ մասը՝ չեն կրրցած թօթափել իրենց ընաւորութեան մէջէն այն կարգ մը տրմուղ և յետադէմ ունակութիւնները, որ խոտոր կը համեմատին թէ՛ իրենց իսկ բուն շահերուն, թէ՛ ազնիւ վաճառականութեան, թէ՛ անգղիական պատճառադէտ առեւտրական սկիզբներուն հետ: Ասոնցմէ շատերն՝ իրենց նոր մրցակիցներն ու արհեստակիցներն ընկճելու չէզոքացունելու մինչեւ անգամ փճացունելու գաղտնի վարժութեանց կողմէն աննմանաբար վարպետ՝ զուրկ էին ինչ և է շինիչ ու ամրացուցիչ կարողութենէ, ինչ և է երկնող տրամախոհող գաղափարէ՝ իրենց բազմապէտ արհեստին ստոյգ պարտուցն և պիտոյից վրայ: Աշխատութեան կողմէն ալ՝ ծոյլ ըսուելու աստիճան յամբընթաց և ծանրայարոյց՝ ճի՛շդ հաշուելու և ճի՛շդ ժամերուն իրենց գործին ու գործակատարաց գլուխն անցնելու պարտաճանաչութիւնը շատ թերի ու անգիտակից էր իրենց վրայ, կարգ մը սիրտի այն ազնիւ տրամադրութեանց հետ, որ ոգին և շունչն են ամէն գործի: Գոհ կը մնային կը բաւականանային ճենովական և յունական (մանաւանդ Սազըղցւոց) վաղեմի վաճառականութեանց բուն Կ. Պոլիսի, Ղալադիայի, Զմիւռնայի հրապարակներուն վրայ թողած լքած վերջամիաց դիրտերէն և ընթացիկ վաճառագանացքէն, անփոյթ բոլորովին անոնք զարգացունելու նորոգելու բեղմնաւորելու և ըստ ժամակից ոգիին լարելու հարկին:

Կ. Պոլիսի առաջին հայ վաճառականներուն կէսը,

որպէս զի մեղմութեամբ եւ խնայելով մը ըսած ըլլանք, ըստ սովորութեան հինն ամիրայութեան՝ ակամայ յոռմէտներ ու յոռեգործներ եղան աւելի՛ իրենց տգիտութեան, ըաղզաղիտութեան, անուսումնասիրութեան քան չարութեան բերումով։ Ոչ միայն չգիտէին օգտուիլ եւ օգտեցունել առեւտրական իրենց բացառիկ յաջողութիւններէն, ու զարգացունել ուսումնասիրութեամբ իրենց արուեստին տարրերն ու սեռ—տեսակները՝ գործին նպատակայարմար գիտակցութեամբ, այլ նաև շատ զգոյշ և ժլատ ալ էին իրենց ստորագրեալներուն յառաջդիմութեան վերաբերումով։ Աչալճը և այլամե՛րժ պահապաններ իրենց եղած շնորհներուն և բարիքներուն, իրենց աշխատաւորներուն երիտասարդական անդին կորովն սպառելէ ետք՝ պատրուակներով և հնարագէտ հեթեթանքով կը քարընդոտնէին և կը հեռացունէին անոնք իրենց գործերէն, փոխարէն վիճակելով անոնց կողմէ դառնասրտութեան մը, որ անէծքի մը հաւասար ոյժով կը ներգործէր իրենց գործին ու բաղդին դէմ...՝ արդարութիւնն ամէն բանի մէջ նոյն և անմահ ըլլալով։

Իրենց ասիական համբերութիւնն և կեղծեալ սքողեալ խորագիտութիւնն՝ հակակշռուած էր յաճախ և դրժբաղդարար ստորակարգեալ գործակիցին աշխատաւորին աչք բնալ չսալու անազնիւ հնարքներով, որով փոխան անկեղծ, ճարտար, համեստ ու գործանուէր գործակատարներու՝ իրենց քով կը խմբուէր ու կը մնար ապիկար շողօքօրթնե՛րու, սը՛տկողներու, ճկճկո՛ւն շարլաքաններու ջուլիր մը՝ փայփայող կրից և ինքնիրենց կարեւոր շատ կարեւոր շուայութեանց։ Մինչեւ սահման մը միայն դրամի տէր ընել իրենց սպասարկողները, խոստանալ և չըստօրագրել ու չկատարել իրենց մեծ մեծ խոստումներուն գէթ փոքր մասը, պունիկեան հաւատքով և լե-

զուով վերաբերուիլ անոնց հետ, ջլատել պարսաւադի-  
տել անոնց առեւտրական յառաջադէմ ոգին, սուղանել  
ընկուզել իրենց գործին մէջ անոնց խնայագործեալ  
դրամագլխիկը, որպէս զի անոնք ալ չտիրանան առեւ-  
տրական զատ գործի, մեքենաբաւր և միշտ բովանդա-  
կապէս իրենց շահուն գործածել անոնց սրտագին կա-  
մէութիւններն՝ ասո՛նք էին (և մասամբ կը տեւեն՝  
կըսուի՝ ցարդ դժբաղդաբար) . հայ վաճառականներուն  
մէկ մասին արտուղի վարպետութիւններն իրենց պաշ-  
տօնէից և գործավարաց նկատմամբ, որ վաճառական  
գիտութեան մը հաւասար էին իրենց համար և որով  
կուզէին միայնակ վայելել, հակառակ ընութեան ըն-  
թացքին անգամ, Կ. Պոլիսի և Թուրքիայի լայն հրա-  
պարակին առեւտրական յաջողութիւնները: Իրենք եփել  
իրե՛նք ուտել, մի՞ս իրե՛նք եւ ամե՛նն իրե՛նք:











Ե.

1860—1865

**Ա**ՆՁԱ՝ ա՛յսպիսեաց ոմանց էր՝ սր տուաւ նախ ազնուական դաս մը անգղիական Ֆրէյզլըրներու տունը, որ խնամարար Թեւարկեց Մարտիրոս Թօքատեանի անկապ նախաքայլերուն ի Մանչէսթըր՝ երբ այս վերջինը, Սկիւտարի ձեմարանին այն փիլիսոփայ մըջիւնը<sup>(1)</sup>, խնայագործած բաւական կոկիկ դրամագլուխ մը (2000 լիրայի չափ), իր Տեարց՝ Բարամաճեանց՝ գործերուն մէջ, այս

---

(1) Մարտիրոս Թօքատեան՝ աշակերտած էր արժանաբար Սկիւտարի մեծ ձեմարանին 1846ին՝ Յովհաննէս Տէրոյենցի(\*) բեղուն ուսումնապետութեան տտեն. և ա՛յն ժամանակէն՝ իր չափազանց աշխատութեան համար՝ մըջիւն կը կոչուէր այդ մեծ դպրոցին մէջ: Սկիւտարի հին ձեմարանը տուած է նշանաւոր աշակերտներ՝ հանրութեան, բանասիրութեան, գիտութեան և վաճառականութեան այն հի՛ն օրերուն, որ արդի օրերուն կարգ մը սիրուն վաղադատ եւ ինքզինքնին միայն տեսնող և հուշակող անձերէն յետադիմական կը յորջորջուին: ձեմարանի աշակերտներ էին բանասէրներէն վարչագէտներէն ու գիտուններէն. Խ. Պ. Միսաբեան, Տ. Յովհ. Հիւնքեարպէյէնտեան, Կ. Ս. Իւթիւճեան, Տօքթ. Ստեփան փաշայ Արսլանեան, Տօքթ. Բարունակ պէյ Բրթիկեան, մասամբ Տօքթ. Խօրասանճեան, մաթէմատիկոս Սիմէոն Միքայէլեան, Յովհ. Նուրեան, վաճառականներէն՝ Մարտիրոս Թօքատեան, Մկրտիչ Պէշիքճաշլեան, Պետրոս Ֆնտրզլեան և ուրիշ շատեր:

(\*) Տե՛ս Յովհ. Տէրոյենցի վարք Տասնեւիցներորդ դար, տպագր. Կ. Պոլիս 1907:

կարգի հնարագործութեամբ<sup>(1)</sup> իբրև բռնի բաժնեկցութեան ընդունուած էր անոնց գործառնութեանց: Բայց քիչ ետք՝ սթափելով և զգալով իր փոքր ձուկի դիրքը մեծ ձուկերուն մէջ՝ բացած էր իր սիրտն ու գործը Ֆրէյզլըրներուն յԱնգղիա, որ Եւրոպայի առևտրական յանձնակատարներն ալ էին Քափամաճեանց: Ֆրէյզլըրներն ալ, խելամուտ Թօքատեան Մարտիրոսի ուշիմութեան, յառաջամիտ աշխատասիրութեան, գործագիտութեան և փիլիսոփայ բարեմտութեան՝<sup>(2)</sup> կը թելադրեն զատուիլ իր Քափամաճեաններէն, և բանալով իրեն մեծկակ վարկ մը — 10-15000 — (որուն համար շատ կը զչարին Քափամաճեանք)՝ պատճառ կըլլան բարեհիմն հաստատութեանը Թօքատեան տունին, որ կէս դարէ ի վեր կը տեւէ ժիր ու մանրադէտ յաջողութիւններով՝ գլխաւորապէս իր՝

(1) Պէտք չէ միայն Քափամաճեանց վրայ առնել վերև յիշուած զրկահարութիւններն ամբողջապէս. Պոլիսի հին ու նոր վաճառականներէն ու Էսմաճներէն շատերն ունեցած են անոնցմէ մէյ մէկ նշանակելի մաս, մանաւանդ անոնք՝ որ չեն ունեցած ո՛չ ազնուական ծագում մը, ո՛չ սիրտի ու միտքի ազնիւ կրթութիւն մը, ո՛չ ալ մանաւանդ ճշմարիտ վաճառականութեան լայն ու փիլիսոփայ ոգի մը հեռատես: Այս կողմերով՝ յոյն և Բրանկ վաճառականք աւելի՛ ազնիւ աւելի լաւարարոյ եղած են:

(2) Փիլիսոփայութեան ու ճաշակաւոր զրականութեան մինչև վերջը սիրող պաշտօնասէր՝ կը հետեւէր ինք գլխաւորապէս Օկիւսդ Քոնդի իմաստասիրութեանց և Քարլայլի Շէքսպիրի բարձր արտադրութեանց. խօսասէր, զուարթամիտ, խոնարհամիտ և անզգալի կերպով ալ խորագէտ, բաւական կցիր, իր գործերուն մէջ ձեռներէցութենէ աւելի զգուշաւոր և անցեալի դիտակովը միշտ ապագային նայելու նախահոգութեամբ զինուած՝ փոքր Ֆրանքլինի մը նկարագիրը կը պատկերէր ինք. երբէ՛ք մեծ շէնշող հպարտացունող պողոտաներէ չէր անցնէր, երբէ՛ք մեծապայծառ ակումբներու մէջ ֆայլիլ չէր տեսնար, այլ գործաւորական փողոցներէ շէններէ ու Կսնափ ընկերութիւններէ կախորժէր, որպէս զի «հպարտութիւն չտիրէ վրաս» կըսէր:



Մարտիրոս Թօքատեանի՝ նախաձեռն ճարտարութիւն-  
ներով :

Դժբաղդաբար ամուրի ծերութեամբ մը զբաւեց իր  
կեանքը՝ կտակելով իր ունեցածն ((150000 լիւրայի չափ)  
ու գործերը քոյրերուն եղբայրներուն և քեռորդիներուն ,  
որոց հայրագիրն ալ եղած էր իր երէց քրոջն հետ : Իբ  
մարմինը փառաւոր յուզարկով Անգղիայէն փոխադրուե-  
ցաւ և թաղուեցաւ Կ. Պոլիս :

Կարծենք՝ բարեհամբաւ Յակոբեանց մէկ եղբայրն  
ալ նախագործած է իրբեւ զբազիր Պէշիքթաշլեանց քով ,  
և ապա երկու եղբարք՝ Միքայէլ և Յովհաննէս՝ երկար  
աշխատութեամբ և մանրավաճառութեամբ՝ յաջողած են  
հիմը դնել այն բարի ու փառաւոր առևտրական տունին ,  
որ կը շարունակէ ցարդ իրենց որդւոց ձեռքով : Յակոբ-  
եան Միքայէլ՝ կըսեն՝ Կ. Պոլիսի հրապարակին վրայ  
գործի արծի՛ւ մըն էր և Յովհաննէս Յակոբեան՝ Ման-  
չէսդըրի հրապարակին վրայ և առտնին կենցաղի մէջ՝  
սո՛ւրբ մը . անշուշտ այս բարեմասնութիւնք պատճառ  
եղան իրենց տեւական մեծութեան և հզօր անունին . . . :

Ըստ այսմ՝ մինչև 1860 Կ. Պոլիսի և անոր միջո-  
ցով , Պրուսայի , Զմիւռնայի , Ադրիանուպոլիսի , Նիկո-  
միդիայի ու Կեսարիայի հրապարակներուն վրայ կազ-  
մուած էին տասնեակ մը մանիֆաթուրայի վաճառական  
հայ տուներ՝ մինչ յոյներն <sup>(1)</sup> ալ հետզհետէ տեղի կու  
տային մանիֆաթուրայի՝ մանաւանդ պասմայի ու ամե-  
րիգանի՝ հրապարակէն , ամփոփուելով աւելի՛ հաստա-  
տուն , աւելի՛ կոկիկ սեղանաւորական և արմտիքի գոր-

(1) Կ. Պոլիսի Յոյնք այն ատեն ալ՝ ինչպէս հիմայ՝ հարստութեանց  
ընդարձակ գործառնութեանց և բարեգործութեանց կողմէն չէին հասներ  
Միչերկրականի ու Եգէական կղզիներուն և Եգիպտոսի մե՛ծ յոյներուն  
կարողութեան :

ծառնութեանց մէջ՝ հելլէն ճարտարութեամբ և ձեռնե-  
րէցութեամբ :

Այդ մեծ հայ վաճառատուններուն քով՝ քսանի չափ  
օսանիներ (թոփով վաճառողներ) կաճէին կը զօրանային  
բոլորովին տեղական գործունէութիւններով՝ ներկայա-  
ցունելով ի թուրքահայս գլխաւորապէս պասմայի ու ա-  
մէրիգանի հատորով վաճառումը :

Մեծ վաճառականներուն և այս օսանիներուն կա-  
րեւոր շահատաններն էին՝ բաց ի վերոյիշեալ գլխաւոր  
քաղաքներէն՝ Ասիայի և մանաւանդ Րումէլիյի գլխաւոր  
նաւահանգիստները գիւղաքաղաքներն ու տօնավաճառ-  
ները՝ մարդախիտ և շահընծայ, կիսով չափ կանխավճարք  
և վստահելի յանձնակատարք՝ թուրք, Հայ, Յոյն, Հըր-  
եայ, Պուլկար, Կուրճի, Չէրքէզ, Արնաւուտ : Կ. Պոլի-  
սի մէջ՝ գլխաւոր օսանիներ էին՝ Սենեքերիմ Մանուկ-  
եան <sup>(1)</sup>, Առաքել Քացախ, Գէորգ Մուրատեան, Յովա-  
սափ, Ալիքսան Մասեհեան, Սահակ Աղաճան և այլք,  
որոնց յառաջացեալները ամիսն 2500—3000 ոսկիի գործ  
կը դարձունէին : Ասոնցմէ էին նաև Լաթիֆեան Գաս-  
պար ու Աւետիս եղբարք՝ շառաւիղք հին տոհմի մը, որ  
ամերիգանի շալի և նմանեաց վրայ լռին գործունէու-  
թեամբ կառոււորէին :

Իսկ Անգղիայի մէջ՝ մանաւանդ ի Մանչէսթըր՝ նոյն  
թուականներուն հայ վաճառական գաղթականութիւնն  
հասած էր նշանակելի 30 անդամի թիւի մը, որ մեծ  
մասով ժիր ինքնաձեռնարկ Պոլսեցիներ և Զմիւռնացի-  
ներ էին ու Հայերուն մէջ առաջիններն անգղիերէն բա-  
նուկ լեզուն ուսումնասիրողներուն : Եւ ասոնց ալ անգ-

(1) Ետքը մեծ վաճառական եղաւ՝ տուն մը բանալով իր անունով  
Անգղիա. իր վրայ բիչ մը ընդարձակ պիտի զրենք աւելի ետքը :

ղիերէնի գլխաւոր ուսուցիչն եղած էր՝ հինաւուրց սամաթիացի ժիր անգղիագէտն Աւետիս Տէր Սահակեան, որ մինչեւ 70-75 տարեկան հասակն յատկաբար ու համետաբար դասախօսեց անգղիերէնը՝ մանաւանդ պոլսահայ վաճառականաց և բանասիրաց (1) :

1863ին Մանչէսթըրի մէջ մատուռի մը հաստատութեան առիթով՝ առժամուն և առտեղեան իսկ խմբագրուած բնագիրէ մը կը քաղենք հետեւեալը, որ կը նշանակէ նաեւ նոյն թուին Մանչէսթըրի և Լիվըրքուլի մէջ գտնուող Հայերուն անուոնները :

«Մանչէսթըրի ծաղկեալ գործարաններն ու վաճառականութիւնը բնականաբար Հայոց ուշադրութիւնն արթնցունելու էին, որ և 1810 թուէն սկսեալ քանի մը Հայեր հոն առեւտրական տուներ բացին և օր քան զօր շատցան : Բարեպաշտութիւնը ժառանգական ըլլալով Հայոց՝ արդէն ազգային մատուռ մը հաստատելու կարևորութիւնը վերջին չորս հինգ տարուան մէջ կըզգացուէր, ու քանի մը անգամ խորհուրդներ ալ եղան. սակայն ձեռնարկութիւնն անկատար մնաց այլ եւ այլ անակնկալ պատճառներու համար :

«Վերջապէս անցեալ տարի՝ Մանչէսթըրի պատուելի հայ գաղթականութիւնը, որոյ թիւը 30ի կը հասնէր, ևս քան զեւս կրօնասիրութեան ոգւով շարժեալ՝ Գեր .

---

(1) Աւետիս Տէր Սահակեանի բերնէն լսած ենք՝ թէ ինք ուսած էր Անգղիացոց հարուստ լեզուն դժուար ինքօզնութեամբ. ասոյն անդին իյնալով. մանաւանդ Լիվըրքուլէն Կ. Պոլիս եկող ու խարսխող վաճառարեր նաւերուն անգղիացի նաւապետներուն քով հանապազորդելով և Թախանձանքով ստիպելով անոնք վարժեցունել զինքը բրիտանականին ոճի և արտասանական դժուարութեանցը : Մեկնող նաւապետն յաշորդ եկող նաւապետին կը յանձնագրէր հայ անգղիագէտը, և այսպէս շարունակաբար :



Կարապետ Վարդապետն Շահնազարեանց միաբան հաւանութեամբ իրենց հովիւ ընտրելով՝ հոն հրաւիրեցին և ընդհանուր ժողով գումարելով՝ որոշեցին որ անխափան Աղօթարանի հաստատութեան սկզբնաւորութիւն լինի :

«Այնուհետեւ այս փոքրիկ խումբին մէջ ոչ այլ ինչ կը տեսնուէր, բայց եթէ եռանգուն Աստուածպաշտութիւն օր քան զօր արծարծեալ, այր և կին մեծ ու փոքր գովանի ջանիւք Աղօթարանին զգեստ, անօթ, զարդ և ա՛յլ պիտոյք հոգալու կաշխատէին :

«1863 Մարտի 31ը Մանչեսթըրի Հայոց տարեգրութեան մէջ անմահ մնալու է. վասն զի առաջին անգամն էր՝ որ այն օր Մեծին Բրիտանիոյ երկրին մէջ Հայ լեզուով Աստուած կը փառաւորուէր: Առաջին անգամն էր որ Հայ եկեղեցւոյ խոնկն Անգղիոյ միգրացատ օդը կողջունէր, առաջին անգամն էր որ հայ սերունդէն ցրուեալ մասնիկ մը Ս. Խաչի ներքեւ ժողվըուելով՝ իրար կը ճանաչէին ու կը բարեւէին, և շատ տոհմակիցներ, որ եօթն ու աւելի տարիներէ ի վեր աւամայ դըրկուած էին ազգային ժամերգութիւններէ՝ մեծ ուրախութեամբ լցուեցան: Մարտի 28ին արգոյ խորհրդականներն հրաւիրական տոմսակով ծանուցին հասարակութեան, որ Ս. Չատկի օրն առաջին սուրբ և անմահ Պատարագը մատուցուելու է՝ ըստ ծիսի հայ ամէնասուրբ եկեղեցւոյ, և գիշերային ժամերգութենէն յետոյ՝ Գեր. Վարդապետն Շահնազարեանց «զխաղաղութիւն թողում ձեզ» բնաբան դնելով՝ ազդոյ և սրտառուչ ատենաբանութիւն մը ըրաւ Աստուածսիրութեան վրայ, զՔրիստոս Փրկիչն՝ Աստուծոյ և մարդոց մէջ հոգեւոր խաղաղութեան և բեղնաւոր սիրոյ խարխալ քարոզելով, և Քրիստոնէից բարոյական կատարելութեան կէտ :



«Սուրբ Պատարագէն յետոյ՝ որոյ ներկայ էին Մանչէսթըրի և Լիվըրբուլի Ազգայիններն՝ հանգստեան կարգ կատարուեցաւ, աշխատաւորաց և երախտաւորաց ննջեցելոցն՝ երանաւէտ հանգիստ և կենդանեացն՝ երկար կեանք և յաջողութիւն խնդրելով. ապա իրարու Քրիստոսի Յարութիւնը շնորհաւորեցին և հոգեւոր ուրախութեամբ լեցուն իրարմէ բաժնուեցան:

«Մանչէսթըրի Հայոց մատուռն Ռըմֆորտ Ըսթրիթ 151 թիւն է (151 Rumford St.), ուր նուիրատուաց համար միշտ բաց մատեան մը կայ: Չեռնաու ըլլալ ուզողները կարեն իրենց նուէրն հոն յուղարկել, որ և իսկոյն արձանագրուելով՝ լրագրի միջոցաւ (եթէ կամենան) հրատարակուելու է:

«Ահաւասիկ Մանչէսթըրի և Լիվըրբուլի հայ վաճառականաց անուանքն՝ այբուբէնական կարգով. —

Պարոնայք

Անուիեան Եսայի Մ.	Կ. Պոլսեցի	ի Մանչէսթըր	
Եղիազարեան Կարապէտ	Կեսարացի	»	
Եսայեան Եսայի	Զմիւռնացի	»	
Էփիզեան Կարապէտ	»	»	
Թոմսեան Մարտիրոս	Կ. Պոլսեցի	»	
Եռսուփեան Գրիգոր	»	»	
Հարենց Մարտիրոս	»	»	
Մուշեան Յարութիւն	»	»	(ընտանեօք)
Յակոբեան Յովհաննէս	»	»	( » եկեղեցին էր)
Յովակիմեան Դառնիկ	»	»	
Յովսէփեան Մկրտիչ	»	»	
Շահումեան Օհան	Զմիւռնացի	»	
Պետրոսեան Յովհաննէս	Կ. Պոլսեցի	»	
Սիմեանեան Պօղոս	»	»	(ընտանեօք)
Սիրունեան Պօղոս	»	»	
Սեփանեան Պօղոս	»	»	
Սիհնսկրեան Մեղգոն	»	»	

Վարդանէան Տիգրան	Կ. Պոլսեցի	ի Լիվերբուլ
Վարպէտեան Խաչիկ	Զմիւռնացի	ի Մանչէսթըր
Տէր Գասպարեան Արսաշես	»	ի Լիվերբուլ
Փափագեան Սարգիս	»	ի Մանչէսթըր
» Յովհաննէս	»	ի Յուրիս (Երկու եղբարք զատկական պատարագին ներկայ էին)
» Պետրոս	Կ. Պոլսեցի	ի Մանչէսթըր.
Փէշիմալեան Ռէքոն	»	» (ուսանող).
Քափանաճեան Օննիկ	»	»
Ճնարկեան Գեորգ	»	»


Նաեւ վերջին երկու աւուր մէջ եկան

Եազրճեան Յակոբ	Կ. Պոլսեցի	ի Մանչէսթըր
Փափագեան Գրիգոր	»	»

Մանչէսթըր, 4/16 Ապրիլ 1863»









1865—1870



**Վ**ԵՐՈՅԻՇԵԱԼ տեղեկութիւններով և անուանա-  
ցանկով՝ կը լրանայ ցայնվայր (1863) Մանչէս-  
դըրի մէջ գտնուող Հայերուն վրայ մինչեւ մեր օրերն  
հասած վաւերական ծանօթութեանց շարքը :

Ասոնց կէսը՝ Կ. Պոլիսէն և Զմիւռնայէն Մանչէս-  
դըր երթեւեկողներ էին, միւս կէսը մնայուն կերպով հոն  
գործողներ՝ իբրեւ ներկայացուցիչ Կ. Պոլիսի և Զմիւռ-  
նայի իրենց կենդրոնական տուններուն : Իրենցմէ ամէնէն  
երկարատեւ Մանչէսդըր մնացողներն են .—

Յովհաննէս Յակոբեան՝ վերոյիշեալ ցանկին թուա-  
կանէն՝ 35 տարի, Մարտիրոս Թորքատեան՝ նոյնպէս՝ 40  
տարի, Կարապետ Եղիազարեան՝ դարձեալ նոյնպէս՝ 45  
տարի, երեքն ալ՝ քաջքաջ համբերութեամբ և աշխա-  
տութեամբ այդ երկարատեւ պանդխտութեանց միջոցին  
քաջ ուսած անգղիական գործնական լեզուն և գործի  
աշխարհը, տիրացած բաւական հարստութեան <sup>(1)</sup> և ան-

(1) Զարմանալի՛ կը թուի Թորքատեան Մարտիրոսի նման գործասէր  
ու գործագէտ անձնաւորութեան մը՝ Հնդկաստանի կամ ա՛յլ աշխարհի  
մեծ հրապարակներու մէջ գործ մը չբանալը բառասուն տարուան երկար  
այդ միջոցին, Անգղիայի պէս դիւրահաղորդ երկիրի մը մէջ ապրելով.  
Թուի մանրամասնութեամբ և փիլիսոփայութեամբ ալ պէտքէն աւելի զբա-  
ղած է ինք հին մշիւնը, որով չձգեց աւելի մեծ գործ և հարստութիւն :  
Կըսուի թէ միջոց մը՝ առաջարկեր է ի Կ. Պոլիս Յակոբեանց և

աղտ համբաւի, Յովհաննէս Յակօբեան՝ իր լուրջ և սուրբ կենցաղովը գործունէութեամբ և առատ բարերարութիւններով, Մարտիրոս Թոքատեան՝ իր փիլիսոփայ կենցաղովն և խորհրդական փորձագիտութեամբ, Կարապետ Եղիազարեան՝ <sup>(1)</sup> իր մեղմիկ համեստութեամբ և լուռմուռ մշտադբազդութեամբ՝ երեք մնայո՛ւն և տրա՛մ նախահիմեր թուրքահայ վաճառականութեան ի Մեծն Բրիտանիա:

Մինչ այս պանդուխտ խումբը կազմ ու կայք կառնէր յԱնգղիա կանոնաւոր հաշուընթացներով և օճիւններով, ու անգլիկ գործնական փստածաղիկ բառեր ու ոճեր կը փոխանակէին թուրքական և իտալական հզօ՛ր և հնչո՛ւն բառերու և ոճերու հայ բերաններու մէջ՝ հոս ի Կ. Պոլիս, ներգործութեամբ մանաւանդ այս անգղիաբընակ Հայերուն և հետզհետէ տեղակալող արեւմտեան կրթութեան, մանիֆաթուրայի հայ վաճառատանց մէջ

Գարակէօզեանց՝ բաժնեկից դրամազուիներով և հաւաքական անունով մը հաստատել ի Լոնտրա մեծ դրամատուն մը, բայց ընդունելութիւն չէ գտեր այս երկու տուներէն, և ինք ալ միայնակ չէ՛ համարձակեր այդպիսի մեծ ձեռնարկութեան մը: Մահուընէն քիչ ժամանակ առաջ՝ իւր հին աշխատաւոր պաշտօնէից՝ Քէ՛ ի Պոլիս Քէ՛ ի Մանչէսթըր՝ պարգեւեր է մեծագումար դրամանուէրներ (մինչեւ 1500ական Օսմ. ոսկի). և աս՝ բաւական օրինակելի ցոյց մըն է քաջալերութեան միւս մեր վաճառականներուն համար:

<sup>(1)</sup> Կարապետ Եղիազարեան՝ քեռորդին է անուանի Սենեքերիմ Մանուկեանի (Մանիկեան), որ Կեսարացոց ի Կ. Պոլիս և յԵւրոպա վաճառականութեանյ ռահվիրան եղած է՝ 1840էն սկսելով: Ինք՝ Սենեքերիմ Մանուկեան՝ այդ ազնի՛ւ մեծարո՛յ ծերունին ալ՝ հաճած է տալ մեզի հայ վաճառականութեան վրայ կարեւոր տեղեկութիւններ, որ պիտի յետունք գործիս ընթացքին, անյիշատակ Պողոլ չենք ուզեր նաև հոս Կ. Եղիազարեանի՝ այդ կեսարացի ժիր ու բարի վաճառականին՝ 1883ին Սառմբորդի մէջ մեզի ըրած ասպնջական պատիւներն և ապա մեր գործին մատուցած դիւրութիւնները:

ծայր կուտար կանոնաւոր գործառնութեանց և կանոնաւոր տոմարակալութեանց եղանակ մը մէթոտեալ :

Արդէն՝ 1840էն 1850՝ Դաւիթ Սէթեան (հայր՝ վաճառական ու հաշուագէտ Միհրան Սէթեանի) և Մինէճի Անդրանիկ, առաջինն Եւրոպա երթեւեկած մետաքսի հին վաճառական մը ու երկրորդը Սամաթիայի մէջ ուսումնասիրական գործունէութիւններ ի հանդէս բերող եռանդուն անձնաւորութիւն մը՝ սկսած էին մղում տալ մերայնոց մէջ <sup>(1)</sup> կանոնաւոր հաշուակալութեան, 10—20 տարի տոմարակալութեան ճրի դասեր տալով փափագողներու, որոցմէ էին, ի մէջ այլոց, Յարութիւն Թիւեան՝ քաջ թուաբան ու երկրաչափագէտ, Պօղոս Թորգոմեան <sup>(2)</sup>՝ քաջ անգղիագէտ ու հաշուակալ ճիշդ, և՛ կարծենք՝ Գերորէ Լէմոնճեան՝ քաջ անգղիագէտ և հաշուակալ ու յօդուածագիր, հին Սուրհանդակ օրագիրին Լիւն Քէն : 1840-41ի Սկիւտարի Ճեմարանին ներհուն Յայտարարութեան մէջ ալ կը կարդանք՝ որ այդ զիշերօթիկ մեծ դպրոցին մէջ կայ եղեր կանոնաւոր տոմարակալութեան դաս մըն ալ . հո՛ն տոմարակալութիւն սորված են՝ Մարտիրոս Թոքատեան, Պետրոս Յնարքլեան, Մկրտիչ Պէշիքթաշլեան և այլք :

Կ. Պոլիսի հրապարակն ալ հետզհետէ աւելի՛ կը լայննար՝ այդ միջոցին՝ հայ վաճառականութեան համար, ինչպէս Զմիւռնայինն ու միւս գլխաւոր քաղաքներունը . մանաւանդ օսանիները բանուկ գործունէու-

(1) Այս և յաջորդ քանի մը տեղեկութիւններ կը պարտինք Ազն. Միհրան Սէթեանի՝ ներհուն հաշուագէտին և վաճառականին ինչպէս և Յակոբ Գ. Մըրմըրեանի, որ քսան տարի կեցած է ի Մանչէսթըր :

(2) Պօղոս Թորգոմեան՝ 1847-8ին Քափամաճեանց կողմէ Տատեանց հետ գնացած է Անգղիա՝ վաճառական ուսումի և գործակալութեանց համար, և կեցած է հոն կարծենք 7 տարի :



Թեան մէջ կասպարիզէին, որոնց մեծ մասը բունած էր Մէրճանի Եալարզ խանը շուկայի մեծ Քէպէճի խանն և վալիտէ ու Մեծ Նոր խաները: Այս օսանիներուն ջոջերը տարին 60-70000 հատոր պասմայ և կտաւ կրսպառէին իւրաքանչիւրը. իսկ գաւառի մէջ նոյն միջոցները՝ գլխաւորապէս Կեսարիա, միջնորդ բանուկ կենդրոն մըն էր մանիֆաթուրայի և ուրիշ վաճառաց, ուրկէ Սերաստիա, Ատանա, Թօքատ, Եոզկաթ, Ակն, մինչեւ Կարի'ն անգամ կը հոգային առ տեղեան իրենց պէտքը՝ Կիւլպէնկեանց, Մանուկեանց, Ֆրէնկեանց, Կիւմիւշեանց և այլոց ձեռքով՝ այնպէս որ մինչեւ 1870 Կ. Պոլսական մանիֆաթուրայի հրապարակին վրայ հազիւ քանի մը օտարազգի վաճառականներ մնացած էին հինէն, մնացածն ըլլալով մեծ մասամբ հայ: Այս նախամասնութիւնը կաճեցունէին ի Կ. Պոլիս և ի գաւառս՝ գլխաւորապէս կեսարացի թուրքախօս վաճառականք և յանձնակատարք, որ գործի պայքարին մէջ՝ իրրու նոր Գաթալաններ՝ ամէն ուրեք կրնթացունէին ամուր չարքաշ և անլնդհատ վաճառականութիւն մը՝ արդիւնք իրենց տոկուն եւ գործնական բնաւորութեան, սակաւապէտ ու տնտեսագէտ կենցաղին, ամուսնասիրութեան և տեսակ մը անծանօթ սո'ւր ոգիի, որ ամէն տեղ և իրր ամէն ատեն կառաջնորդէ իրենց առեւտրական անցոյց յաջողութեանց:

Չմոռնանք ըսել որ տեղական եազմայի անօրինակ յաջողութենէն հրապուրեալ՝ կարգ մը օտարազգի վաճառականներ ձեռնարկեցին բերել Կ. Պոլիսի հրապարակը Չուիցերիայէն մեծաքանակ եազմայ՝ սկսելով 1853էն, և միջոց մը կասեցուցին տեղական եազմայի բանուկ եւ հռչակեալ տուրևաօր: Հայք ստիպուեցան ընդ երկար մաքառիլ՝ առձեռն միջոցներով՝ այս խափանարար նորութեան դէմ և նման ճարտարութեանց (կաղապարով տը-



պելու և այլն) միջոցներով մրցեցան, մինչեւ իսկ մէկն յաջողեցաւ մեքենայով ալ տպել Եազմանները. սակայն եւրոպական փայլուն Եազման ալ վերջապէս իր սարօքն իր կանոնաւոր տեղն ունեցաւ Կ. Պոլիսի և Սկիւտարի Եազմաներու տուրեւառին քով՝ եւրոպացի վաճառականներու և հայ վաճառողներու ձեռքով :

Եազմայի գործը 70-80 տարիէ ի վեր Հայոց ձեռքն էր, և ասկէ զատ՝ Սամաթիա Սկիւտար և այլուր բացուած էին ընդարձակատարր գործարաններ՝ պասմախանէ անուհով՝ ընկերութեան մը միջոցով, ուր տեղական Եազմայի հետ կը գործուէին նաև Բուսնու, շէքէ, սեվանի, սոֆա, որ հին հրապարակին բանուկ վաճառքն էին :

Կենդրոն Կ. Պոլիսի հրապարակէն՝ գլխաւորապէս Անգղիայի վաճառք կը սփռուէին՝ երկթեւ ուղղութեամբ և զաւառական գլխաւոր վայր ու քաղաք Ադրիանուպոլիսի, Սելանիկի, Սոֆիայի, Մանասղըրի, Ռուսձուզի, Ֆիլիպէի, Վառնայի, Պրուսայի, Զմիւռնայի, Նիկոմիդիայի, Կիւրինի, Կեսարիայի, Կարինի, Սեբաստիայի, Թօքատի, Բաղէշի, Վանի, Կիլիկիայի և Տրապիզոնի միջոցով՝ Բուսնէի և Անատոլույի մէջ. Բուսնէի՝ մեծ մասով լաւ և կանխիկ վճարող՝ կը գնէր, բաց ի ամբողջանի ու ձերմակեղէնի և ներկուածներու տեսակներէ, պասմայի լուրջ եւ մանրկոտ զուսպ տեսակներ՝ ընդհանրապէս պէթ րէնկ ըսուածները, մանրկոտ մոռ եւ պալ րէնկի պասմայ, մանրկոտ սազըզալի, հինգ գոյն՝ մանրկոտ և էլվան ու ձերմակ յատակներու վրայ, րիքէ, եռագոյն ծողկեւորներ, մեծաքանակ բեմպէ, երկգոյն ձերմակ՝ մանաւանդ Կրաֆթընի Բոթըրի և Շուապիի, մթագոյն և միշտ մանրածաղիկ էլվաններ՝ խրխախան չեփիսի ըսուած, իրենց ժուժկալ և պարզուկ ներդաշնակութեանց համար, և այլն և այլն :

Իսկ Անատոլու կը քաշէր՝ խոշոր ճղաւոր և ծաղկեւոր գոյնզգոյն տեսակներ՝ իբր առ հասարակ կարմիր, դեղին, բեմպէ, ճերմակ և ուրիշ պոռոտ գոյներու վրայ, եռագոյն մեծածաղիկ էլվաններ, քուտնուի նմանութիւններ, տիւզ ալ մեծաքանակ, եօլլուններ, եռագոյն և հինգ վեց գոյն շալի նմանութիւններ, ալ եէշլլի մեծ քանակութեամբ, աղապանիի նմանութիւններ, ֆուլիայի դեղին, լայնատերեւ մօռ և մթագոյն բեմպէ ևն. ևն. :

Բուն կ. Պոլիսի մէջ՝ Քալբաքճըլարը, Սպահա Բազար, Ուզուն Չարշի, բազարները, արուարձանի խանութներն ու թաղերը՝ կը քշուէին յիշեալ տեսակներուն ճաշակաւոր նրբագործեալները, նուրբ էլվաններ, ծիրանի եօթը գոյներու ամէնէն պղատոնականները, ճերմակ, բեմպէ, ֆուլեա պտսմաներ ծանր և ընդհանրապէս լայն կտաւներու վրայ ըստ եղանակին և ըստ ճաշակի գնողաց, մարմրուն բեմպէ և շալի քաղաքակիրթ նմանութիւններ, ծանր մօռ և էլվան կրաֆթընի<sup>(1)</sup> եւ Բոթըրի, միագոյն և մերթ եռագոյն ծանր հագուստի նրբագիծ պասմաներ, որոնց կանգունով վաճառողք էին առհասարակ Պոլսեցի ճարպիկ արհեստաւորներ՝ հոչակաւոր լեզուանութեան վարպետութեան եւ համոզող ճարտարխօսութեան մէջ՝ երին երփն իրաւսուտերով, հոչակաւոր նաեւ մեծ շահերով վաճառելու մէջ :

Այս ամէնուն վրայ՝ Բումէլիյի եւ Անատոլույի մեծ բանալիբերն ալ իրենց պարբերական դարձդարձներով լայն ասպարէզ մը կը բանային թուրքահայ վաճառող-

---

(1) Մեծ գործարանատէր յԱնգլիա, անդամ Խորհրդարանին, որուն հանած պասմաները՝ տոկունութեան ճաշակի և գոյներու հաստատ նըրբութեան կողմէն անհաւասարելի էին ու ամէնուրեք կը ճանչցուէին կնքեալ այտերու նման :

ներու, որ ժամանակին կը փութային այդ տօնավաճառ-  
ներն իրենց խիտ առ խիտ հակերով:

Պայմանաժամերը՝ շատ անգամ առանց թուղթի եւ  
ստորագրութեան՝ Բուժէլիյի եւ Անատոլույի համար  
մինչեւ 120-140 օր կերկարատեւէին, իսկ Կ. Պոլիսի եւ  
չրջակայից համար մինչեւ 61-91 օր:

Մեծ գործ կըլլար նաեւ Կ. Պոլիսի Մեծ Շուկային  
մէջ տոքումայի ու եւրոպական գործարաններու մանր  
շալերուն վրայ՝ մանաւանդ Անատոլույի կողմերէն ա-  
պրսպրուած, որուն վաճառողքն եւ վաճառականք էին  
ընդհանրապէս Անատոլուցիք՝ մանաւանդ Կեսարացիք:  
Հին Շալճիներ էին Շալճի Պետրոս եւ Պօղոս եղբարք ալ՝  
քնակեալ ի Բուզկուլուճուք Վոսիօրի:

---









1870—1880



**Ե**ր որովհետեւ Թուրքահայ վաճառականութեան այս գործիս մէջ՝ զբաղեցանք աւելի՛ մանիֆաթութեայի բեղուն բնական և ազնիւ ճիւղով՝ մեր այն ճիւղի՛ն մէջ բաւական ատեն աշխատած ըլլալուն գլխաւոր պատճառով, նաեւ այդ ճիւղը գլխաւորապէս ամէնէն մաքուրն և ամէնէն յանձնարարելին նկատած ըլլալնուս իմաստասիրութեամբ, կուզենք քիչ մըն ալ խօսիլ պարսկական Թուրքահայ մանիֆաթութեայի առեւտուրներուն վրայ:

Պարսկաստանի հետ մեծավաճառ տուրևառներու մեծ մասը տեղի կուեննար ի կ. Պոլիս՝ Վալիտէ Մեծ-նոր և Սիւմպիւլ խաներու բուն պարսիկ վաճառականներու և պարսիկ և յոյն յանձնակատարներու և միջնորդներու ձեռքով: Հայք 1855էն ետքը կըսկսին այս ընդարձակ ճիւղին՝ երբ ուղղակի Անգղիայի հետ ալ կըսկսին իրենց բուն վաճառական-ներածական գործառնութիւնները:

Այդ Թուականէն առաջ՝ որոշ բան չենք գիտեր պարսկական լայնսիրտ վաճառականութեան այն մասին վրայ՝ որ կը կատարուէր Թուրքիայի միջոցով: Բաց ի Թերեւս Քափամաճեանց բարերաղը տունէն՝ ուրիշ Թուրքահայ ձեռնարկուի մը չենք պատահիր պարսիկ մեծ առեւտուրներու մէջ՝ 1855էն առաջ: Թուի Յունաց եւ

Յրանկաց միջոցով տեղի կունենար Թուրքիայի հին վաճառաշահութիւնը Պարսկաց հետ՝ գէթ այն մասը, որ կըլլար Եւրոպայի՝ մանաւանդ Անգղիայի՝ արտադրութեանց վրայ, և անշուշտ Ալիոններ, Բալիներ, Ստէֆանովիչներ արդէն ըրած էին մեծ գործառնութիւններ Դաւրէթի հետ երբ Գարակէօղեանք, Յակոբեանք, Յընտըքեանք և այլք Կ. Պոլիսի հրապարակին վրայ նոր կըս'սէին խլրբօի: Ասոնցմէ առաջ և Բիւզանդիայէն դուրս՝ կերեւի թէ Կարլինի, Ջուղայի, Տրապիզոնի, Վանի, Կեսարիայի և ուրիշ կենդրոն քաղաքներու մէջ կային ջոջ Հայեր, որ կըզբաղէին պարսկական վաճառականութեամբ ալ:

Ի սկզբանէ խստամբեր, չարքաշ, սակաւապէտ եւ խորագէտ աշխատողներ՝ Պարսիկները ցոյց տուած են կարեւոր գործունէութիւն Արեւելքի ասիական վաճառականութեա՛ն ալ մէջ, ու իրենց խտրական խիստ ուզին ներած չըլլալով իրենց՝ մինչեւ ցայսօր իսկ՝ ուղղակի յարաբերութիւններ հաստատել Եւրոպայի հետ՝ յոյն, իտալացի, Ֆրանսացի ու ետքն ետքն հայ վաճառականներու միջոցով բերել տուած են իրենց կարեւորներն արեւմտեան երկիրներէն: Լայն ապառիկներու միշտ ձղաում ունեցող այս պարսիկ տարրը՝ վաղուց հաստատուած Կ. Պոլիսի և Սկիւտարի կենդրոն վաճառանոցները՝ 19րդ դարուն մէջ մանաւանդ սկսած է ընել Կ. Պոլիսի միջոցով մեծ գործառնութիւններ ու փոխանակութիւններ, և Վալիտէ խանի ցից զառիվերն ընծայած է յաճախ ասիական ներդաշնակ պէսպիսութիւն մը՝ Կ. Պոլիսի արեւելեան հին տարազներուն հետ՝ պարսիկ աշտարակեալ գլխանոցներու և մոմիկ պարզ հանդերձներու լուրջ և ժիր երթեւեկներով:

Պարսկական տուրեւառներու նշանակելի յարաբե-



բութեանց ձեռնարկած են Հայերէն՝ նախ Գարակէօզեան եղբարք, որոցմէ Տիգրան Գարակէօզեան և իր գործակատարներն՝ Էլիկիւզէլ Գարրիէլ<sup>(1)</sup> ու Ֆէնէրճեան Յովակիմ՝ ընդ երկար բնակած են, յաջող գործերով, Գարէթի բանուկ և վաճառաչահ մայրաքաղաքը. Յակորեան եղբարք, որոց որդիքը ցարդ կը շարունակին կանոնաւորապէս այդ արիական առևտուրը. Ֆնտըքլեանք՝ մանաւանդ հաճի Յարութիւն Ֆնտըքլեան, (հայր՝ բանասէր վաճառական Գառնիկ Ֆնտըքլեանի) որ նմանեալ բարքով աւելի ճարպիկ գտնուեցան՝ մերթ ընդ մերթ շահեկանապէս ներդաշնակուելու պարսկական կնճռոտ հոգեբանութեանց հետ:

Ահա ասոնք և ուրիշ քանի մը հայ տուներ՝ մինչեւ 1885՝ կատարած են մեծկակ գործեր Պարսկաստանի և անոր ներկայացուցիչներուն հետ ի Կ. Պոլիս՝ ստէպ պէրաքի վրայ և յաւիտենական երկարատեւ ապառիկներով ու երկարմատեան սկիզբներով, որ առաջին պայմաններն եղած են այս կարգի տուրեառներուն: Ասոնք՝ իրենց Կ. Պոլիսի ճիւղաւոր գործերուն յաջողութիւններով և անգղիական մեծ վարկերով՝ կըրցած են տոկալ ընդ երկար այդ երկարմատեան ապառիկներու գրութեան և շարունակել պարսկահայ գնացիկ վաճառականութիւնն ալ, որ նշանաւոր է մանաւանդ մեծաքանակ ծախելու քան շահելու կողմէն: Իցիւ Թուրքահայք՝ միշտ գործ ունեցած ըլլային միայն կիւրական Պարսիկներու հետ, որոնց ուղղութիւնն և կրթութիւնը գովուած է հին օրերէն մեծ մատենագիրներէ:

(1) Մէթոտիկ զուարթախօս և ուսումնասէր անձնաւորութիւն մը, որ իր կեանքի վերջին 20 տարիներն անցուց Յովհաննէս և Մարթէն Յակորեանց գործերուն մէջ, և կրթական հաստատութեանց կտակելով 500ի չափ ոսկի մը՝ վախճանեցաւ պատիւով ի Բերայ Կ. Պոլիսի, բաւական զգոյշ և լուրջ զօրութիւն մը պակտեցունելով այսպէս Յակորեանց գործէն...

Պարսկական տեսակներն՝ ընդհանրապէս միօրինակ, ընդհանրապէս ժուժկալ, ընդհանրապէս անյեղլի ալ՝ չեն պահանջեր այնքան արուեստգիտական ճարտարութիւն և այնքան մեծ և նուրբ հանձար, որքան գլխադրամ վարկ ու յարաբերական ճկուն ճարպիկութիւն: Ասո՛ր համար՝ այս յատկութիւններն ունեցող հայ վաճառականք աւելի՛ յաջողած են այս ճիւղին մէջ և կրրցած ալ են շահիլ բաւականապէս՝ լարախաղալով այդ լպիրծ կալուածին առածիք պարաններուն վրայ:

4. Պոլիսի միւս վաճառողներուն մէջ գլխաւորներ եղած են՝ ժամագործներէն՝ դարասկիզբ նշանաւոր Եուսուֆեան Բարթողիմէոսէն ետք, (որ կաթողիկոսընտիր իրողութեանց մէջ ալ ունի դեր մեծ)<sup>(1)</sup> Սուրէնեան Յովհաննէս, որ իր հնարամտութեանց ապացոյցները տալով բարձր անձնաւորութեանց՝ 4. Պոլիսի պետական առեւտրական Բ. դատարանին նախ դատաւոր-անդամ ապա նախագահ նշանակուեցաւ՝ ունենալով սուր յիշողութիւն և դատաւորական բնածին հանձար, Գրիգոր Գայրզճըօղլու, Կիւմիւշկէրտան Ռուրէն, Թոսունեան Օննիկ (Իգնատիոս Մուրատճա տ'Օհսընի ազգականութենէն), Խանճեան Յովհաննէս (հայրը Զապէլ - Ասատուր - Սիպիլի), Սկիւտարլը օղլու և ըն. Խազէդներէն՝ առաջնակարգ Գաւրիթ Սէթեան և որդին Միհրան Սէթեան, Գարակէօզեան Պետրոս, Հիսարլը Լութֆի, Գէորգեան Մկրտիչ, Էյիպլի Կարապետ. Քահվէ շէքէրի վաճառականներէն՝ Աքրահամեան Բուզանդ, Մանուէլեան ու Պէյլէրեան, Սարը Միքայէլ. Ոսկերիչներէն՝ երկան Միքայէլ, Լիմոնճը օղլու Մատաթ, Լօքմակէօզեան Երամ, Մատաթեան Յովհաննէս, Նիզամեան, Քէօմիւրճեան Մարտիրոս, Գալիամաճեան Կա-

(1) Տե՛ս Պատմութիւն Կարողիկոսաց Էջմիածնի՝ Մսեր Մագիստրոս Մսերեանցի:

րապետ . Բոմբիսիոնճիներէն՝ Հարենց Նշան , Միսաքեան Պետրոս , Շիշմանեան Յակոբ . Մխախտտի վաճառականներէն՝ Բարսեղեան Դասպար , Մուրատեան Գրիգոր , Սուքիասեան Սարգիս , Յակոբեան Թ . , Նահապետեան Մանուկ , Զօպանեան եղբարք , Տէմիրքարուլեան եղբարք , Կամսարական , Նազարեան . Խուրտավաթճիներէն՝ Փափազեան Յարութիւն , Գալուստեան Խաչիկ , Աղջիկեան Մկրտիչ , Արդար Կարապետ և Յովսէփ , Եսայեան Պօղոս , Լութֆեան Ժան (կալուածատէր) , Համբարձումեան Մանուկ , Էքսէրճեան Մարտիրոս , Մուրատեան եղբարք . Հանքածուխի վաճառականներէն՝ Հալաճեան Բարսեղ (ապա կալուածատէր ու սեղանաւոր) , Բիւրքճեան Տիգրան և ընկ . , սեղանաւորներէն՝ Ալլահվէրտի Յովհաննէս , Բիշմիշեան Մ . , Գարաքէնեա Կարապետ պէյ (եղբայրն Երամեան Գէորգ պէյի) , Եազըճեան Ստեփան , Մագսուտ Սիմոն և Սեպուհ պէյ , Եպտրզճը օղլու , Թաչճեան Սարգիս , Հանէսեան , Պալլարեան , Թընկըր Բուզանդ և Պետրոս , Թոփհանէլեան Խաչիկ , Թորոսեան Սարգիս , Բէօչէեան Յակոբ (որ էր նաև սեղանաւոր մեծ Եպարքոս Ալի փաշային) , Կիւլմէզեան Յարութիւն , Կիւլմէզեան Բիէռ ընկ . , Հիւտավէրտի օղլու Գրիգոր , Մազըմեան Մկրտիչ , Մըսըրը օղլու Պօղոս պէյ , Մուպահեաճի Մանուկ , Նար պէյ , Շիշման օղլու Յովհաննէս , Պահճէպան օղլու Աւետիս՝ Էտրնէցի (որ ապրեցաւ 100 տարի ի Սկիւտար) , Պահճէպան օղլու (Փափազեան) Գէորգ՝ վերջամնաց ամիրան , Ստամպոլլը օղլու Ա . , Տամատ օղլու Յովհաննէս , Տավուտ օղլու Կարապետ և Մկրտիչ , Փանոսեան Գէորգ՝ (աները՝ Շամտանճեան Գրիգոր խանի և հայրն՝ յանգաւոր բանաստեղծ Աղեքսանդր Փանոսեանի) , Բիւրքճիպաշեան Բարթող և Մկրտիչ . Տախտավաճառներէն (քէրէստէճի)՝ Գայսէրլի Սարը Կարապետ , Զարպհանէլի



Պետրոս և Նիկողոս ընկ., Պալաթցի Ճանիկ, Պինպաշ-  
եան Մարկոս, Տաճատեան Յակոբ, Ֆրէնկ օղլու Մկրտ-  
տիչ և Գարա Սահակ ընկ., Բիւրքճիներէն՝ Ալալէմճի  
Գէորգ, Ալթըն օղլու Գրիգոր, Կարմիրեան Մարտիրոս,  
Շամտանճեան Աւետիս, Սամաթիացի Սինեմ, Սըվաճեան  
Մարտիրոս. Ֆէսճիներէն՝ Արդար Անտօն, Փափազեան  
Յարութիւն և ընկ., Փափազ օղլու Գէորգ, Բապուճճեան  
Գրիգոր, Գարազաշ Ն. և ընկ., Ջաքարեան Մանուկ,  
Հալէպեան Կարապետ, Շամտանճեան Կարապետ, Ալա-  
լէմճեան Մանուէլ և Տէմիրճիներէն՝ նախ Մկրտիչ աղայ  
Սկիւտարցի, հռչակեալ փեսան ոսկերիչ Իւղաքեր աղայի,  
ապա Ասատուր Գարազաշ օղլու (հայրն՝ յառաջացեալ  
փաստարան ու գրադէտ-քերական Հրանտ Ասատուրի):









1870—1885



**Ա**ՅՍ Գարագաշ օղլու Ասատուր բաւական նշանաւոր եղած է զանազան գործերու և տոնմային աշխատութեանց մէջ : Ծնած 1820ին՝ ի Պէյքոզ Վոսիորի գաւառացի հօրմէ ու առած ժամանակին համեմատ բաւական խնամեալ կրթութիւն մը՝ 1842ին պաշտօնեայ եղած է հարկահաւաք այն մեծ ընկերութեան մէջ, զոր կը բաղկացունէին Երկանեան Յարութիւն, Քիւրքճիխանլը Պետրոս, Միսաք ամիրայ, Ճէզայիրլի Մկրտիչ, Պաղտասար Չէրէզեան և Պօղոս Աշնանեան, Ճանիկ ամիրայ, Մաքսուտ ամիրայ, Յարութիւն Կէլկէլեան, Աբրահամ Ալահվէրտի, Յովհաննէս Թընկըր, Յովսէփ Տավուտեան :

Տէմիրճի Ասատուր՝ այդ հարկահաւաք ընկերութեան կողմէն զրկուած էր նախ Մուսուլ բանսիլի համար, և ապա հոն սկսած էր սեղանաւորութեան : 1845ին դարձաւ Կ. Պոլիս իր ծննդավայրը, ուր զբաղեցաւ երկաթի վաճառականութեամբ Դալադիա Գուրչունլը Մաղազան, որ հիմայ եղած է Կէօջէ օղլու խան : Իր ամուսնութեանէն (1850) քիչ ետքն՝ ընկերացաւ Սկիւտարցի Փափագեան Յարութիւն և Սիմէոն անձերուն հետ, ու 1854-56ի բարեբաղդ շրջանին ըրին մեծ շահեր : Ստեֆանոյ Բալի մեծ դրամատէրն ալ ընկերացաւ իրենց մեծ դրամագլուխով, և սկսան միասին Թօփհանէյի և Թէրահանէյի տալ

մեծաքանակ երկաթ՝ վաճառատան փորձագէտ վարիչն ըլլալով միշտ գլխաւորապէս ինք Ասատուր Գարագաշեան, որ ա՛լ այնուհետեւ հարստացած ընդարձակուած՝ կը յորջորջուէր Տեմիրհի Պաշի Ասատուր :

Ետքերը փոխադրուեցաւ Ղալաղիայէն Սիրքէճի Իսկէլէսի, ուր ինք եղաւ դարձեալ հաստատողն երկաթի վաճառականութեան հրապարակին, ինչպէս իր պարագայք կաւանդեն. իրմէ ետքն և իր թեւարկութեամբն և խորհրդատուութեամբ կը զարգանան հոն Եսայեան Յովհաննէս և Մկրտիչ եղբարք ալ : Ասատուր Գարագաշեան և ընկերք իրենց վաճառատան մէջ միշտ պատրաստ կունենային միջնաչափ (average) 35-40000 ոսկիի վաճառք : Երկու անգամ արդիւնաւորապէս անդամակցած է ինք Կ. Պոլիսի Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հոգաբարձութեան. անդամ ու գանձապետ եղած է նաև Մայր Եկեղեցիի Թաղական Խորհուրդին. Պոյաճը գիւղի եկեղեցիին ալ բազմօք օգտակար եղած է՝ իր այդ գիւղը բնակելուն առիթով, և յետ իր վախճանին (կարծենք 1867) ակտակած է Հիւանդանոցին մեծկակ գումար մը՝ ինչպէս կը գրէ Ժամանակ ժամանակակից հանդէսն՝ հրատարակելուն առթիւ իր մահագոյժը :

Իրմէ ետքն այդ գործը շարունակեց իր աներձագը՝ Ռուբէն Գրիգորեան, որ տասը տարի մը գործեց Բալիի հետ, 1863ին անոր հետ դարձեալ ձեռնարկեցին հանքային գործի մը և տալով մեծ կորուստ՝ վերջապէս գոցուեցան, ինչպէս և Բալի որդին կորսնցուց հանքի գործի մը մէջ 75000 ոսկի : Ագամանդի, ոսկիի, արծաթի, պղնձի, երկաթի, շինուածաքարի, վերջապէս հանքի, լիւքսի, կռիւի գործեր՝ չե՞ն ունեցած աղէկ վերջ եւ չպիտի ունենան ալ, քանի որ կայ հզօր բնութիւն մը պատժող այդպիսիները Թրանսվալէն մինչեւ Ուրալ եւ



Պաքուի հանքերը, Բրիտանիայէն մինչեւ Թուրքիա, Աւստրալիա, Չին և Նիբբոնիա. գէթ մեր իմաստասիրութիւնն այսպէ՛ս կը թելադրէ<sup>(1)</sup> :

Երկաթի վաճառական էին նաեւ Արէլ կիւլպէնկեան, կիւմիւշեան, որ յարաբերութեան մէջ էին բոլոր գաւառներու հետ ալ, ուր երկաթի վաճառականք մեծ մասով հա՛յ էին ու վարկով կը տուրեւառէին, ինչպէս գրեթէ բովանդակ Թուրքիայի մէջ դարբինք ու երկաթագործք հա՛յ են՝ իրենց թէ միւս ազգաց իմաստու-

(1) Մտածե՛ր՝ այս պատեհով՝ Թրանսվալի և ուրիշ նման պատեհազմներու խորունկ շարժառիթներուն և պատճառներուն վրայ. մտածե՛ր՝ վերջին երկու տարւոյ մէջ և անկէ առաջ մի՛շտ պատահած հանքային աղէտներուն վրայ, որ տեղի ունեցան մանաւանդ Եւրոպայի ու Ամերիկայի մէջ, մտածե՛ր մեծ, ծովեզերեայ, բազմայարկ ու քարուկիր քաղաքներու մէջ ախտերու, մոլուժեանց և մոլորութեանց, երկրաշարժական ահաւո՛ր և յաճախաւո՛ր հետեւանքներու վրայ, մտածե՛ր հանքային չարաչա՛ր աշխատութեանց և անոնց հետեւանք ընկերային անլոյծ և անվերջ խնդիրներու վրայ, մտածե՛ր ու մտածե՛ր՝ ո՛չ թէ վաճառականութեան շահադիտութեան կամ ինչ և է եղանակով հարստանալու, այլ բնական ու բանկա՛ն մարդու իմաստասէ՛ր ու մարդասէ՛ր մարդու աչքով և միտքով. Երկու հազար հի՛նգ հարիւր տարի առաջ գոչա՛ծ է եզիպտական իմաստութիւնն երկիւղած «վա՛յ յանդգնելուն պատառել զբող բնութեան . . . » Եւ այդ հինաւուրց անկեղծ ու պարզ իմաստութիւնը կը պատուուի դեռ ի Չինս, ի Հնդկս, ի Դիպէդ, յԱփրիկէ և այլուր :

Եւ ինք անաչեայ իմաստութիւնը Միլտոնեան՝ հոգետես ներշնչութեամբ գեղեցիկ կը քերթէ այդ խորախորհո՛ւրդ իմաստը. —

«Մամո՛նն իւրեանց առաջնորդ, Մամոնն հոգի յոյժ վայրագութեան զգրեալս հոսեալս յերկնուս. զի եւ ի վեր անդ ի յերկինս Այ՛բ եւ իւրհուրդի իւր դէական ունէին միւս ի խոնարհ կոյս, Սըխրացեալ ընդ նոխուրիւն երկնակառոյց պերն յասակին՝ Ուր գարեպարհ կոխեն զոսկի, Բազն եթէ ՚նդ այլ ինչ սուրբ եւ վեհ՝ Յորս զոյ վայելել յերանականրն սեսութեան :

Նովաւ նախ ևւ նորի՛ն խաւսո՛ւր դիւրեալ ևւ մարդկան զարմ  
Ձերկրիս պո՛րս հարին աւա՛ր, ևւ ամպարիչս իւրեանց մեռո՛ք

Թե՛նէն, աս ալ ընթերցողներուն կը թողունք հետեւաբանել :

1865-1875 Մանչէսթըրի հայ վաճառականներու վրայ աւելցած էին՝ Օլիվոյ և Սպարթալը, Աբրահամ Կիւմիւշեան կեսարացի, որ ապա տիրացաւ ժառանգական մեծ կտակի մը Օլիվոյի կողմէն, և իր սովորեալ ձեռքբացութեամբ՝ դարձեալ սպառեց կորսընցուց զայն եւս՝ իր նախկին հարստութեանը պէս, և գնաց չուեց աշխարհի բոլոր գործերէն՝ չունեւոր վիճակի մէջ, Մկրտիչ Պէշիքթաշլեան՝ ընկերը Պօղոս Գաբրիէլեանի՝ որ վար-

Գերփեցին ըզօր աղիս՝ գանձել զոր շա՛ւ եր սուզանել,  
Անդէն վաղվաղակի ձեռն ի զորժ զուցորն մամոնեան՝  
Հար պասառեաց անդ ի կող լերիերն վեր մի լայնախոց,  
Եւ բրեաց յարգանդէ անթի նորուն ըզձոյլս ոսկւոյ :  
Մի՛ յիցին զարմանալիք թէ մեծութիւնք ի դժոխս անեն,  
Գեթին է նա յանկազոյն մեծամեծար այնքմ բունոյ :

**ՄԻԼՏՈՆ Ա. արգ 624-637**

•Mammon led them ou,

Mammon, the least erected spirit that fell  
From heaven; for even in heaven his looks and thoughts  
Were always downward bent, admiring wore  
The riches of heaven's pavement, trodden gold,  
Thau aught divine or holy else enjoy'd  
In vision beatific. By bim first  
Men also, and by his suggestion taught,  
Ransack'd the centre, and with impious hauds  
Rifled the bowels of their mother earth  
For treasures better hid. Soon had his crew  
Open'd into the hill a spacions wound,  
And digg'd out ribs of gold. Let none admire  
That riches grow in hell; that soil may best  
Deserve the precions bane.

MILTON'S Paradise Lost book 1.

պետ էր ամերիգանի ու բոլոր ճերմակեղէնի պատրաստութեանց և շէնչող զուարթ հովարսայ բնաւորութեան մը տէր, Եսայեան Շահում և ընկերութիւն, Մ. Սըրմաքէշեան, Գրիգոր Գույումճեան, Պապոյ Էքիզէր, Հայկ Էքիզէր (որ ապա Եգիպտոսի մէջ ձեռնարկեց 1896ին առևտր. մեծկակ գործերու՝ յԱղեքսանդրիա պարէններ հայթայթելով կառավարութեան), Գրիգորիսեան Պետրոս, Գույումճեան, Մելիքեան, Յնտըքլեան եղբարք և Մըրմըրեան, Կիւմիւշկէրտան, Գառնիկ ու եղբարք Յովակիմեան (եռանդուն որդիք Նահապետ վահառական Պանտրոմացի Յովհաննէս Յովակիմեանի) որոց տոհմն ի հօրէ և ի հաւուց կրթասիրութեան և կանոնաւոր վաճառականութեան բերումներ տածած է, Արապեան Գէորգ Տրապիզոնցի, Վարդանեան Պօղոս, Թաթարեան Գրիգոր, Բափամաճեան Մկրտիչ, Ո. Արսէնեան, Մանուկեանք, Գընաճեան, Տատուրեան, Պաքըրճեան և այլք, որ տուին Մանչէսթըրի նոր հայ գաղութին վերջնական կայք և ընկերութիւն մը արեւմտեան, կոկիկ շնորհքով եկեղեցիով մը՝ Upper-Brook փողոցին վրայ, ուր փոխանակաւ տիրացուութիւն ալ կընէին վերոյիշեալներէն եկեղեցագէտ եկեղեցասէրները՝ Տէ'ր միայն գիտէ՝ ի՞նչ խազերով :

Իրենց նախկին հովիւն եղած է Կարապետ վարդապետ Շահնազարեան՝ էջմիածինէն Պոլիս, Պոլիսէն Բարիզ, Բարիզէն Մանչէսթըր, Մանչէսթըրէն հարաւ. Յրանսա, անկէ Եգիպտոս, Եգիպտոսէն դարձեալ վերջնականապէս Կ. Պոլիս աստանդական: Ինք Մանչէսթըրի մէջ հրատարակեց պարբերական հանդէս մըն ալ, և մինչեւ ցարդ իր լուսանկար պատկերը կը պատուի հոն եկեղեցատունին մէջ: Իրեն յաջորդած է Խորէն վարդապետ Կիւրոյեան skripիո ու բանասէր եկեղեցակա-



նը, որուն յաջորդած է Բիրդալէմեան Աեւոնդ աեռւղ վարդապետը, միջոց մը նաեւ հիւրաբար Տէր Յովհաննէս աւագ քահանայ Մկրրեան՝ ապա Եսայի Վ. Աստուածատուրեան Էջմիածնականը, որուն հետ ումանք հակառակած ալ են և ինք գարշելով՝ Լոնտրա անցած ու առանձին մատուռ մը հաստատած է հոն՝ պաշտպանութեամբն կարծենք՝ նշանաւոր Աղանուրեանց և Սէթ-Աբգարեանց: Ապա Սուքիաս Վ. Պարոնեան չպրուսացի՝ նախկին Մխիթարեանը, ապա Տ. Թորոս Վ. Ջուղայեցի, որ բաւական ատեն հրատարակեց ալ հոն Հայ եկեղեցի անունով պաղարիւն հանդէս մը, ապա սակաւօրեայ քահանայ մը զմիւռնացի, ապա՝ մեր օրերը (1907) Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեան Կ. Պոլսեցի, երբեմն առաջնորդն Հայոց Եւրոպայի:

Այսպէս՝ հետզհետէ լաւագոյն ձեւերով և փորձերով հաստատեալ Մանչէստըրի հայ վաճառական գաղթականութիւնն՝ հին հոլանտական Ամսդէրտամի գաղթականութեան նման՝ սկսած է աճիլ և զօրանալ կայուն, համերաշխ, եկեղեցացեալ կալուածի մը վրայ, վաճառական գործունէութեանց մէջ Ամսդէրտամէն գերազանց, բայց տպագրութեանց և այլի կողմէն՝ կարծենք՝ բաւական ընդհատ անկէ: Տեղը չէ՝ քննել հոս բուն պատճառներն այս տարբերութեան, որոնց գլխաւորը կը թուի հին Հայոց կրօնական ջերմ ոգիին և նախնեաց հետեւողութեան ու սիրելութեան նուաղումը նոր Հայերուն մէջ, իրենց հովիւներուն թուլութենէն ապիկարութենէն կամ ապհեղինակութենէն՝ չենք կրրնար գիտնալ:









1875—1890



**Տ**ՈՒՐԵՒԱՌԻ անգղիական հրապարակներու հետ այս շփումները՝ խոհեմներու միջոցով ոտն առ ոտն եւ խիղախներու ձեռներէցութեամբ ոստոստուն քայլերով ներգործած էին Թուրքիայի՝ մանաւանդ Կ. Պոլիսի եւ Ջմիւռնայի՝ հրապարակներուն վրայ, ուր և քառորդ դարէ հետէ կը բանէին քսան եւ հինգ կանոնաւոր մեծ տուներ մանիֆաթուրայի գործերու վրայ: Թէպէտ էապէս տեսակները կը տեւէին հին ճաշակի և գիտութեանց վրայ, բայց գործառնութիւնք և հաշուընթացութիւնք քիչ շատ կանոնաւորուած էին ու եւրոպականացած անգամ ուրեք ուրեք, որով աւելի մէթոտեալ ձեւերով սկսաւ ու փակուեցաւ 1870էն 1890 մանիֆաթուրայի ոսկեղարին վերջին շրջանն ի Թուրքիա, որ մեր տեսութեանց ալ վերջին մասը պիտի ըլլայ:

Այս կազմաւորեալ անցումի միջոցին՝ մանաւանդ պատմայի բանաստեղծական ճիւղը սկսաւ թօթափել նկարներու և տարազներու հին միօրինակութիւններն ու շարլաքանական գործառնութիւնները: Շէնք շնորհք վաճառատուններ վարձած էին, կանոնաւոր տոմարակայներու քով, պատմայի գեղագէտ նկարիչներ ալ, որ արեւելեան ընթացիկ երազուն ձեւերը կը ճահանկարէին եւրոպական տուեալ գծագիտութեանց և ներկագործու-

թեան սկզբանց վրայ : Պասմայի այս նկար պատրաստող-  
ներուն առաջինն եղած է՝ կըսեն՝ ի Կ . Պոլիս Խաս-  
գիւղցի Կարապետ Տէմիրճիպաշեան (հայրը՝ գրագէտ-  
բանաստեղծ Եղիա Տէմիրճիպաշեանի , որ կը ճանչցուի  
գրասէր-Ատոմ յորջորջումով) : Այս Կարապետ Տէմիրճի-  
պաշեան՝ վարպետ է եղեր նաև եպիսկոպոսական խոյրե-  
րու , վակասներու , եմիփորոններու ձեւագրութեանց :  
Բաքտիվանի բանուկ տունին նկարիչն էր Նահապետեան ,  
Գարակէօղեանցն՝ Ալիքսան Մոմճեան սկիւտարցին , ա-  
ռաջինն՝ ապա անցած ի Մանչէսթըր իր արուեստովն եւ  
երկրորդը՝ կանուխ անցած այս աշխարհէն ալ : Միւս  
վաճառատուններէն՝ ոմանք ալ ունէին իրենց յատուկ  
կամ այցող վարձեալ գծագրիչները , որոց ճաշակները  
կը նրբանային հետզհետէ պոլսական ու եւրոպական նո-  
րագոյն ոճերու և երանգներու վրայ :

Մանիֆատութեան վերջին այս ոսկեդարին՝ յառաջ-  
դէմ գտնուած են դարձեալ գաւառացիներէն մանաւանդ  
կեսարացիները , որոնցմէ միշտ դժգոհ մնացած է ու կը  
քրթմընջէ բացսիրտ և հովարսայ Կ . Պոլսեցին՝ անոնց իբր  
այլամերժութեանն և բուրդ-համրող գործունէութեանց  
համար : Այս անհռետորիկ<sup>(1)</sup> կեսարացիք և հնգեակ մը  
միւս գաւառացիք՝ կցելով իրենց խստամբեր գաւառա-  
յին գործունէութեանցն ու փորձառութեանց՝ ի Կ . Պո-  
լիս բնակութեամբը՝ ճկուն ճապուկ բարքեր մը և քիչ  
չատ ոճ և ճաշակ մը բիւզանդական , քիչ քիչ անուն

(1) Հին առած է թէ Կեսարիայէն հռետոր և ճարտարախօս  
չեղներ : —

«Քան զսպիտակ ազուս կըրայ քեւաւոր՝

Անգի'ւս ի Գամիսու Կ ճարտար հոնտո :»

Բայց Մանգուսեի կեսարացի հին տէրը՝ Կ . Փանոսեան՝ թէ ոչ  
թեւաւոր կրայ գէթ շուշանագուս մը կըրնայ յորջորջոի՝ նայելով իր  
պողչըտուն հրապարակագրութեանց :



հանեցին պոլսական հրապարակին վրայ, և իրենցմէ շատեր ամուսնանալով պոլսեցի աղջկանց(1) հետ՝ եղան տուն տեղ, պահելով միշտ դաւառական ուրոյնութիւն մը երբայիկ՝ գէթ մինչեւ երկրորդ սերունդնին:

Ինչպէս առաջներն ալ ակնարկած ենք՝ կեսարացի այս վաճառականներուն ի Կ. Պոլիս առեւտրական գործունէութեանց նախակարապետն եղած է Սենեքերիմ Մանուկեան՝ այդ իբր ութսունևհինգամեայ ծերունին, որուն կայծակիր աչքերն ու պատրիկ գնացքը տակաւին կը մասնէին (2) անքուն գործունէութիւն և ազնուական ծագում: Շառաւիղ հինաւուրց գերդաստանի մը ի կեսարիա, որդի Բարսեղ Մանուկեանի, և շատ կանուխ աչքը բացած վաճառական յարկերու տակ՝ 1810ի միջոցները կուգայ Կ. Պոլիս 17ամեայ հասակին, մինչ թուրքիայի այս մայրաքաղաքին մէջ հազիւ քանի մը կեսարացիներ ըոյն դրած էին (որոց հետ նաեւ իր մէկ եղբայրը)՝ իբրեւ բոլիցանի հին դրութեամբ, քանի մըն ալ մանր վաճառքի փոխախոնքիներ, մեծ մասով Չաքմաքճըլար Վալիտէ խանի մէջ. ասոնցմէ ու մէկ քանի արմտիքի վաճառականներէ զատ՝ ո՛չ ոք կար կեսարացիներէն Կ. Պոլիսի մանիֆաթուրայի հրապարակը: Ինք՝ երիտասարդն Մանուկեան՝ գովելի նախաձեռնութեամբ սենեակ մը բանալով Կ. Պոլիսի շուկային մէջ՝ մէկ կող-

---

(1) Գաւառացիք ձախող ընտրութիւնն մըն է՝ որ կընեն ամուսնանալով Կ. Պոլսեցի աղջկանց հետ. նախ վասն զի գաւառացի խեղճ աղջիկները լքուած կը բազմանան անամուսին, երկրորդ՝ վասն զի այդ գաւառացիք, ի պատիժ իրենց այս օձախալըքութեան, չկըրնալով ներդաշնակուիլ պոլսեցի բարբերուն հետ՝ արագ արագ կը մատնուին ընտանեկան թշուառութեանց իրենց սարօքը: Ասոնց օրինակները շատ են:

(2) Վախճանեցաւ 1908 Յունուար ամսուն ի Բերա Կ. Պոլիսի, տոհմային գործերու մէջ ալ կատարելէ ետք մեծ դեր:

մէն կըսկսի տեղական հրապարակին վրայ մանր առեւտուրի և միւս կողմէն ղրկելու ի կեսարիա ամէն կարգի վաճառք՝ շահակցութեամբ իր բազմաթիւ եղբարց, որոց մեծն ու հայրապատիւն էր Հաճի Մանուկ :

Ժամանակին՝ մանաւանդ օտարազգի՝ գլխաւոր վաճառականներն էին ի, Կ. Պոլիս Թ. Բալի, Բէդէր Վիչինոյ, Ստէֆանովիչ, Քասդէլլի, Շիքեարի, Չիչինիա, Տէքոզի, Սքուլիտի, Տավիտ Կլավանի ու Անտրէա Հէր աւըստրիացին, որ Վիեննայի և Զուրիցերիայի վաճառքներու վրայ կընէին մեծ գործեր. իսկ մեծ սեղանաւորներ էին Տուպինի, Բոլանտոյ, Քորոնիոյ, Պալթաճը, Ալիոն, Զարիֆի և այլք : Մանուկեան մանուկ վաճառականն ալ այս մեծ վաճառականներէն կառնէր իր վաճառքն ու պէտքը, և կեսարացւոց յատուկ խիստ յառաջամտութեամբ քիչ ժամանակէն զարգանալով՝ փոխադրուեցաւ հինաւուրց Քէպէճի խանը<sup>(1)</sup>, և հոն սկսաւ գնել պալեայով մեծաքանակ ու ծախել մեծաքանակ՝ ընդհանրապէս տիմիրքաթօն, շէյթան պէզի, պօյալըներ ու վերջերը նաև պասմայ, որ կը վաճառուէր մեծագոյն մասամբ 38 ինչէզի վրայ՝ եարտան 70 փարայէն մինչև 3<sup>1</sup>/<sub>2</sub>-4 զըշ . ի :

Այսպէս տասներեք տարի շարունակելով՝ 29-30 տարեկան հասակին արդէն եղած էր Կ. Պոլիսի առաջին օսանին. Հաճի Մանուկ՝ նահապետական շատ պարզմիտ դրութեամբ կը նշանէ հեռուէն՝ կեսարիայէն՝ իր կրտսեր այս եղբայրն Արզեան Մանուկի քրոջն հետ, նոյնպէս նըշանաւոր ընտանիքէ : Սենեքերիմ Մանուկեան մեծ պատրաստութեամբ և պատուասիրութեամբ Զմիւռնա, Պէրութ, Մէրսին հանդիպելով՝ կը ժամանէ կեսարիա, և

(1) Կաւանդուի որ այս մեծ իգեւանը մնացած է Կոստանդիանոսի ժամանակէն. ի սկզբան կը ծառայէր հիւանդանոցի տեղ :

հոն համակերպելով իր հայրագիր մեծ եղբորը կամքին՝ կամուսնանայ մեծ հանդէսով. 5-6 ամիսէն մեծ եղբայրն ալ իր յորդորմամբը՝ Կ. Պոլիս կուգայ, և հոն մանիֆաթուրայի խնդրանքի ու մատուցումի երկուստեք եռանդնոտ ստիպում մը՝ շո՛ւտ շո՛ւտ կընդարձակէ Մանուկեան եղբարց ակորթակներն և գործառնութիւնները, ու իրենց վարկ բացող թանգարները կըստիպեն ամէն շաբթու՝ անպայման եղանակով առնել իրենցմէ լայնավարկ և մեծաքանակ վաճառք: Երանելի՛ ժամանակք:

Այսպէս՝ Մանուկեանց գործն 1855-60ին կը հասնի նշանակելի մեծութեան, տարին 50-60000 ոսկիի գործ կը տեսնէին: Գարակէօզեան Կարապետ՝ ժամանակին պասմայի հրապարակին Յովսէփն և մտերիմը Սենեքերիմ Մանուկեանի՝ աննախանձաբար կը հիանար իր ճարպիկ գործունէութեանց վրայ և խորհրդակից կըլլար անոր. իր գործակատարներն էին՝ Եազըճեան իբրեւ ծախող, Կ. Եղիազարեան ապա Մանուկ Արզեան՝ իբր արկղակալ ու գրագիր:

Մանուկեան Սինեքերիմ կը գնէր ի Կ. Պոլիս՝ մանաւանդ պասմայի ճիւղը՝ Քափամաճեանց ալ հին տունէն. բայց ապա նկատելով որ անոնց տեսակները չեն կըրնար գոհացունել զինքն՝ անոնց վրայ ղրկեց ի Մանչէսդըր Կարապետ Եղիազարեանը, և սկսաւ՝ Քափամաճեանց յանձնարարողչէք տալով՝ ուղղակի Անգղիայէն իր անունին բերել վաճառք: Ետքը բացաւ ալ ի Մանչէսդըր զատ տուն՝ ընդարձակելով և ևս իր Կ. Պոլիսի ու Կեսարիայի<sup>(1)</sup> գործերն՝ ընկերութեամբ միշտ իր աւագ եղբարց և գլխաւոր գործնական վարիչն ինք ըլլալով ի Կ. Պոլիս, թէպէտ և սկիզբէն ալ իր եղբարցն ընկերութեամբ վաճառաշահած է անխափան:

(1) Բուն Կեսարիայի մէջ՝ վազուց կային հայ վաճառականներ ու մեծ ազգատոհմներ, եւ 19րդ դարուն սկիզբը նշանակելի էին հոն Կիւմիւշեանք, Զարդարեանք, Պաշպագիրկեանեանք և այլք ոմանք. Սակայն չենք կըրնար ծածկել փորձառուներու վկայութիւնն ալ՝ թէ մասամբ Կեսարացիք ու Ակընցիք բարբի կողմէն հաղորդարար ու պարզվտ նկարագիր մը չեն սուցած.












1875—1890



**Ա** ՀԱ ասոնց վրայ է՝ որ միւս դրամատէր ու գործա-  
գէտ կեսարացի Հայեր ալ կըսկսին նետուիլ Կ. Պո-  
լիսի մանիֆաթուրայի հրապարակը. Կիւմիւշեանք, Գը-  
նեճեանք ու Կիւլպէնկեանք, (որ ցայնվայր գլխաւորա-  
պէս Զմիւռնայի մէջ կը գործէին), կը հաստատեն Կ.  
Պոլիսի մէջ ալ վաճառատուն մը ուրիշ ճիւղերու, մանա-  
ւանդ offa մալիի վրայ:

Տասնեկիններորդ դարու հայ կեսարացւոց մանիֆա-  
թուրայի պոլսական վաճառականութեան սկիզբն ահա  
այսպէս կը պատմուի՝ յառաջընթացն ըլլալով յաւէտ Սե-  
նեքերիմ Մանուկեան. այս պարագան է գլխաւորապէս  
պատճառ՝ որ քիչ մը երկարեցինք իր վրայ: Ս. Մանու-  
կեան անձամբ կը տեւէ իր գործին մէջ մինչև 1880, որ-  
մէ ետք իր եղբարքն ու եղբօրորդիք կը շարունակեն  
այդ սկսեալ գործն այլ և այլ ճիւղերու բաժնուած՝  
Մկրտիչ, Տիգրան, Սեդրակ, Բարսեղ, Միհրան ու Ար-  
մենակ Մանուկեան (սովորաբար Մանիկեան կամ Մանիկ-  
օղլու ալ արտասանուած):

Քափամաճեանք՝ գլխաւորապէս ընտիր գործագէտ-  
ներու չգոյութեան և իրենց ֆէյձլի ծանրադանդաղու-  
թեան պատճառով՝ հետզհետէ տեղի կուտան այս նոր  
փորձագէտներուն և Աճէմ օղլույի ու Գարակէօզեանց:

Գնարակէօզեանք՝ իբր յաջորդ Աճէմ օղլույի՝ իրենց մի՛շտ նոր և ճաշակաւոր կաղապարներով, գեղեցիկ տեսակներով, կտաւի ու Ֆինիչի ընտրութեամբ մեծ համբաւ և մեծ գնացք (սպառում ըսուածը) ունեցան 1855էն 1870 թէ՛ Փոքր Ասիայի թէ՛ պարսիկ հրապարակներու մէջ, իսկ Մանուկեանք՝ յարմարելով մանաւանդ Րումէլիյի դիւրաշահ (քեարը քատիմ) տեսակներու հրապարակէն՝ գործած են միապէս թէ՛ Անատոլույի թէ՛ մանաւանդ Րումէլիյի հրապարակներուն վրայ, երբեմն եղբարց ընկերակցութեամբ մտնելով նաև սեղանաւորական գործառնութեանց ալ մէջ:

Ասոնց առնթր՝ ինքնաձեռնարկ ժրութեամբ համեստ վիճակէ յառաջացած էր նաև Գէորգ Մուրատեան (հայր՝ Միհրանի և եղբարց Մուրատեան և աներ՝ Յովհաննէս Թավչանճեանի), բնիկ Կ. Պոլսեցի, որ մինչև վերջ անաղարտ և պատուաւոր գործունէութեամբ տեւեց՝ գործելով գլխաւորապէս պասմայի վրայ շուկան Աստարճի խանի մէջ: Ասոնց կցորդ կուգային նաև օսանի Վիչէն Գրիգոր (եղբայրը Տօքթ. Սերվիչէնի) Եալտըզ խանի մէջ, Բացախ Առաքել մեծավորիկ մարդուկ մը, Ալիքսան Մասեհեան՝ որ կցիր ինայողութեամբ տեւելով մինչև 1882՝ ձգեց մեծկակ հարստութիւն իր աջ ու ձախ ժառանգորդներուն:

Յովհաննէս Կիւմշեան սեղանաւոր կեսարացին ալ, որ տոնմային բարեգործութեանց և մանաւանդ Սովելոց Յանճնաժողովին մէջ ունեցած է կարեւոր մասնակցութիւններ, նախ մանիֆարսուրանիութեամբ սկսած է գործել Կ. Պոլսի մէջ, ու հետզհետէ հարստացած սեղանաւորական գործունէութեամբ ի Ղալաղիա Մէհմէտ Ալի փաշայ խան՝ յետ մահուն կտակեց մեծկակ գումար մը բարեգործութեանց համար, կարի՛ հաշուեկշռեալ ու



տրոհեալ մանրամասն տրամադրութիւններով մը, որ կը ցուցադրեն անդրաշխրմեան նախահոգ նրբամտութիւն:

Կեսարացիներուն ետեւէն կուգան նաև կարգ մը միւս գաւառացի վաճառականները, որ հետզհետէ զետեղուեցան Կ. Պոլիսի հրապարակին վրայ և որոց մասին պիտի գրենք հանգրուան մը ետքը:

Այսպէս՝ 1850-60ին հաստատեալ առեւտրական տուներն՝ հասած էին 1870ին բանուկ և զարգուն վիճակի մը, և քիչ շատ կանոնաորեալ հաշուեկալութեամբ ու մատակարարութեամբ կը յառաջդիմէին իրենց տնօրէններով, տոմարակալներով, գործակալներով՝ անցունելով տակաւ օտարազգիներէն հայերո՛ւն Կ. Պոլիսի մանիֆաթութեայի գործերը:

Ասոնց գլխաւորներն են՝ Յակոբեան եղբարք, որ հաստատեալ կռուանի մը վրայ՝ մէկ կողմէն Կ. Պոլիսի բիւզայի մէջ միւս կողմէն պարսիկ վաճառականներու հետ կը կատարէին նշանակելի տուրեառներ: Իրենց Մանչէսթըրի տան վարիչն էր Յովհաննէս Յակոբեան բարեւսէր անձնաւորութիւնը, որ շատոնց տուն տեղ եղած էր յԱնգղիա: Գարակէօզեանք, որ կը վայելէին մեծ անուն թէ՛ պարսիկ թէ՛ թուրք հրապարակներու վրայ՝ իրրեւ սեղանաւոր և իրրեւ վաճառական: Կիւմիւշկէրտան եղբարք, որ ինքօզնութեամբ յառաջ եկան ու փայլեցան 1865էն սադին, մանաւանդ ամէրիգանի ու ճերմակեղէնի գործերու մէջ: Յնտըքլեան եղբարք՝ Յարութիւն, Գէորգ, Պետրոս և ապա Սարգիս, որ տօքումայի, պասմայի, ներկեալներու և ամէրիգանի վրայ հաստատած էին ճիւղաւոր գործեր ի Կ. Պոլիս, և սկսած էին իրենք ևս պարսիկ առեւտուրներու և Թէրսհանէի ու Թօփհանէի հետ մեծ գործառնութեանց. իրենց այս վերջին ճիւղերուն գլխաւոր վարիչն էր Պետրոս Յնտըքլեան, որ՝ կրթուած

յոյն վարպետներու քով՝ իր ձեռներէց արագագործութեամբ մեծ զարկ տուաւ Յնտըքլեանց հաւաքական գործերուն . իրենց Մանչէսդըրի գործերը կը վարէր ի սկզբան երկար ատեն յաջողապէս՝ Յակոբ Մըրմըրեան , որ 1865ի վերջերը գնացած հաստատուած էր ի Մանչէսդըր և ճամբորդած Իտալիա , Վիեննա , Օտեսա , Մոսկուա , Բարիքու Մարսիլիա : Յնտըքլեան եղբարք՝ իրարմէ շատ տարբեր խառնուածներու վիճակած՝ կըրցան 25-30 տարի յաջողապէս վարել իրենց հօրն հետ հիմնադրած մանիֆաթուրայի գործը , եղբարց միուն ներհակները՝ միւսին կշիռ հակառակներովը ներդաշնակ միջասահմանի մը մէջ պահելով գործին հանրական ուղղութիւնը , որուն անգղիական թելը կը գտնուէր մինչեւ 1880 Յակոբ Մըրմըրեանի ձեռք : Միջոց մը Նշան Հարինց ևս ընկերանալով իրենց մէկ բանուկ ճիւղին՝ կըրցան միասնաբար տարին մինչեւ 250000ի գործ տեսնել : Բայց Պետրոս Յընտըքլեանի կանխահաս վախճանն՝ ամփոփեց գործերու մեծութիւնն զգուշագոյն սահմանի մը մէջ , ինչպէս Կարապետ Գարակէօզեանի վախճանն ամփոփած էր հարկաւորապէս Գարակէօզեանց գործերը :

Գարակէօզեանց տունն՝ այս վերջինին վաղամեռիկ անհետացումէն ետքը մանաւանդ՝ անոր կիրթ նախանձաւորութիւններով արդարեւ հաստատուած արդէն ամուր և փորձագէտ հիմերու վրայ՝ չկըրցաւ շարունակել գէթ պասմայի զուարթ և բանաստեղծական ճիւղին մէջ կարապետողն Կարապետի յառաջդիմական լայն գիծերուն վրայ , այլ հետզհետէ ամփոփելով իր վաճառական ընթացքը՝ զօրացուց սեղանաւորական չոր ճիւղը միայն (որուն սկիզբէն ձեռնամուխ եղած էր Գրիգոր Գարակէօզեան) և կտակեց զայն՝ շատ բարեբաղդ պայմաններու մէջ՝ իր յաջորդ ժառանգորդներուն Արշակ , Մին-

րան, Թագաւոր, Եղուարդ, Արամ Փարակէօղեանց: Կարապետ Փարակէօղեան՝ ուսեալ և հանճարեղ անճաւորութիւն, կրքցաւ նաեւ բերուիլ բարի և կսակող տրամադրութիւններով կրթական ու հանրային ալ գործերու հանդէպ, և մենք մեր խոր մանկութեան ունկնդրած ենք Սկիւտար Եէնիմահալլէի փառաւոր տաճարին մէջ՝ ճեմարանական հանդէսի մը՝ իր մէկ ազնիւ բանախօսութեանն ընտրեալ բազմութեան մը առջեւ, Յովհաննէս Տէրոյեանց ծերունիին ակադեմական յորդորներէն անմիջապէս ետքը:

Փարակէօղեանց և ուրիշ քանի մը հին տուներու պասմայի գործէն տակաւ նուազիւն և Կ. Պոլիսի բիւացայիկ վրայ այս ճիւղին առած կարեւորութիւնները՝ պատճառներ մը աւելի եղան քանի մը պասմայի նոր գործերու հաստատութեան և յառաջդիմութեան, ի մէջ այլոց Յարութիւն Գընաճեան, Կիւմիւշկէրտան և Յովհաննէս Խոնչէկիւլ, Բաքաթիւան (այս յոյն տան գլխաւոր վարիչներն էին Փարակէօղեանց քով մարզուած երկու հայ երիտասարդներ՝ Յովսէփ Սրովեան և Զենոբ Հիսարեան), Թոքատեան պասմայի ճիւղ, Ֆնտըքլեան և Տիգրան Առնչէկիւլեան, Մանուկեան եղբօրորդիք, Գրիգորիսեան, Մելիքեան, Մնտիկեան, Կիլքրիսդ և Կ. Թիրեաքեան, Մկրտիչ Քափամաճեան, Կարապետ Պասմաճեան և այլք, որոնց վրայ պիտի խօսինք ետքը:











ԺԱ.

1880—1890



**Ե**ՊԻՊՏԱԿԱՆՆ Գահիրէի ու Ազեքսանդրիայի մէջ ալ  
Հայերը ձեռք բերած են երբեմն (մանաւանդ մինչ-  
չեւ 1880) վաճառական ու սեղանաւորական կարեւոր  
դիրք:

Գահիրէ՛ կայան ու մայրաքաղաք Տէլղայի հինա-  
ւորց ճոխ նահանգին և դիւցայինն Նեղոսի բարեբեր  
արգասաւորութեանց, Ազեքսանդրիա՛ նաւահանգիստ ու  
վաճառարաչխ նոր Տիւրոս-Սիդոն հանուր ծովափնեայ  
և անափնի ցամաքայինն Ափրիկէի՛ առեւտուրի սեղա-  
նաւորութեան և կալուածատիրութեան մեծ կեդրոններ  
էին ու են ցարդ, ուր Հայք՝ մանաւանդ ոսկերիչք, սե-  
ղանաւորք, կալուածատէրք, վաճառականք և պաշ-  
տօնեայք՝ փայլած են գլխաւորապէս 1855էն 1880 ա-  
ռատ և շուրջ շահերով: Եգիպտոսի ոսկերիչներուն մէջ՝  
մեզի ծանօթ է միայն Թորոս Քափամահեան, սեղանա-  
ւորաց մէջ՝ Երամեանք, պետական պաշտօնեաներուն  
մէջ Բէյիզեանք, Արրահամ Բարթող փաշայ, Եագուպ  
Արթին փաշայ և այլք. հողատէր կալուածատեարց և  
վարչագիտաց գլուխ եղած են Առաքել Նուպար, և ինք  
Նուպար փաշայ, որոյ որդին՝ Պօղոս փաշայ Նուպար՝  
արժանաւոր յաջորդութեամբ կրկնապատկած է այսօր  
իր նշանաւոր հօրը ձգած միլիոնները. նշանաւոր եղած է

նաեւ Թագաւոր փաշայ Յակոբեան, որոյ ազնուական Տի-  
կինն՝ Երանուհի Յակոբեան փաշայ, ի մէջ բազում բա-  
րեգործութեանց, տուաւ նաեւ ի կենդանութեան Կ. Պո-  
լիսի Ս. Փրկչեան Հիւանդանոցին 12000 ոսկի օսման-  
եան: Կա՛ր նաև յԵգիպտոս Յակոբ Աշըգեան՝ գաւառացի  
հարուստ մըն ալ, որ կատակած է Երուսաղէմի Ս. Յա-  
կոբեանց վանքին բաւական գումար մը: Վերջերս շա-  
հեցան եգիպտական վաճառականութեան մէջ նաև Հայկ  
Էքիզլէր Զմիւռնացին, Միհրան Գալֆայեան, Կ. Պոլսե-  
ցի Կամսարական եղբարք և ուրիշ տասնեակ մը վաճա-  
ռականներ ու կալուածատէրներ՝ աւելի կանոնաւոր եւ  
փորձ գործունէութիւններով, այլ հեռու 1850-80ի ե-  
գիպտական ոսկեղարին բարեբաղդութիւններէն:

Այսպէս՝ եգիպտացի այրեցեալ բնիկներու և սու-  
րիացի, իտալացի, յոյն-կղզեցի ու անգղիացի դրամա-  
տէրներու և վաճառականներու մէջ՝ Հայերն ալ մինչեւ  
ցայսօր կըրցած են ձեռք բերել առեւտրական վառ յա-  
ջողութիւններ այդ վառ կլիմային մէջ: Իսկ փիւնիկ  
քանան, արաբ ու եբրայիկ տոհմերու սուն և որրան ե-  
ղող Սուրիայի և Պաղեստինի մէջ՝ ի Պէրութ, ի Դա-  
մասկոս, ի Յոպպէ և յԵրուսաղէմ՝ չենք լսած առեւտր-  
նշանաւոր անձ մը բաց ի Կիւլպէնկեանց մէկ ճիւղէն,  
քանի մը հիւպատոսական անձերէ, առ առաւելն Մագ-  
սուտեան Ղեւոնդ ելումտապետ վարդապետէ մը և քանի  
մը երկրորդական վաճառականներէ:

Ի Կիլիկիա՝ Ատանա, Մարաշ, Մերսին, Տարսոն՝  
բամպակի, արվտիքի, մանիֆաթուրայի գործերու մէջ  
կարեւոր տեղ մը բռնած են նաև Հայք, որոնք չենք  
կըրնար յիշել յանուանէ վաւերաբար: Եւ հո՛ւ ալ ստէպ՝  
յառաջագործութիւնը կեսարացւոց ձեռքը դիտուած է:  
Ատանայի հողն առ հասարակ բերրի է, ունի բազմազան



արտադրութիւններ: Դաշտավայրերուն մէջ, Սէլէֆքէի ու Սիսի միջեւ, կը գտնուին տաք ու բարեխառն երկիրներու արտադրութիւններ, իսկ լեռնադաշտերու մէջ կարտադրութիւն ցուրտ կլիմաներու յատուկ բերք: Վարի կողմերը կը մշակուին՝ ցորեն, գարի, վարսակ, հաճար, շուշմայ, եգիպտացորեն, բամպակ, բրինձ, աֆիոն, խաղող, նարինջ, շաքարեղէգն, իւզոտ հունտերու իբր ամէն տեսակ ընդեղէն: Վերի կողմերը կաճին կեռաս, տանձ, դեղձ, կաղին և նման միբեր: Ատանայի մէջ կան երկու մեծ անտառներ ձիթենիի, մին Չէյթունլըգ, որ Աղեքսանդրէտի Հիւսիսի կողմէն սկսելով կերկարի մինչև Բահաս և ունի 40,000 արտավար տարածութիւն. միւսը Պողազ-աղաճ, ուր բաց 'ի ձիթենիներէ կան նաև թթենիներ. ունի 30,000 արտավար տարածութիւն:

Ատանայի ճարտարագործութեանց մէջ կարևոր տեղ մը կը գրաւեն բամպակ զտելու, մանած կտաւ, ալիւր և սառոյց պատրաստելու գործերը: Ատանայի արտածելի վաճառքն են՝ արմտիք, բամպակ, շուշմայ, գըլիստոր, բուրդ, շինութեան և վառելի փայտ, արջառ, մորթ, խոզակ ևլն.: Այս նահանգ՝ միջին թիւով կարտածէ 30,000 թոնոյ ցորեն, 15 միլիոն օխայ շուշմայ, 50,000 հակ (200 քիլոնոյ) խամ բամպակ, 100 — 150,000 քիլոյ չոր խոզակ, 30 — 40,000 սնտուկ նարինջ: Յուսալի է՝ որ Կիլիկիայի այժմու կաթողիկոսութեան անկեղծ ջանքով տեղացի Հայք աւելի զարգացեալ դիրքերու տիրանան դիւր յաջողութեամբ երկիրի մը մէջ՝ որ իր արգաւանդութեամբ և ծովեզերեայ հաղորդականութեամբ՝ բիւզանդեան Վոսիորէն ետք՝ ամէնէն յարմարն է թուրքահայոց վաճառական յառաջդիմութեան:

Գալով Սեւ Մովու եզերքն ու Փոքր-Ասիոյ գլխաւոր վաճառական քաղաքները, ասոնց մէջ թէպէտ նոր

այլ գործունէութեան կողմէն առաջին կըրնայ ըսուիլ Սամսոնը, Փոքր-Ասիայի Մարսիլեան, կենդրոն բանուկ գործի-մարդոց, որ անդիէն ասդիէն հաւաքուած են հոն՝ ծովեզերքէն դէպ 'ի ներս, ուր Հայերը նուազ են սակայն քան Յոյնք, և գլխաւոր գործն է ծխախոտ<sup>(1)</sup>։ Երկրորդն է Տրապիզոն հին քաղաքը, ուր դրանզիդի մեծ գործ կըլլայ. Ամասիա՝ արմտիք և միրգ՝ մինչև 1890 ունէր շատ փայլուն վիճակ, ան որ ծնունդ տուած է Հայոց երկու մեծ վաճառական տուներուն, Մանուկ օղլու կարապետի, զոր յիշեցինք գործիս սկիզբը, և Իրրանոսեան եղբարց, որ ցարդ կը յիշուին ու պիտի յիշուին Պոլիսի մեծ բիացային վրայ իրր ամէնէն գործօն տունը մանիֆաքուրայի թէ՛ 'ի կ. Պոլիս և թէ՛ 'ի քաւառս։ Սերաստիա ևս հեռուց 'ի վեր ունեցած է վաճառական կարեւորութիւն մը. իր գլխաւոր գործն է արդ ճէլէպի վրայ և իօքքայ մալի, ինչպէս նաև կարին։ Եոզղատ՝ ուր մեծ մասով արմտիքի գործ կըլլայ։ Մարսուան, որուն տեղական արհեստն է մանիսագործութիւն։ Թոքաթ, ուր գլխաւոր գործերը կըլլան եազմայի ու պագըրի վրայ, ժամանակով բաւական գործ կըլլար նաև կարմիր կտաւի ու հիւսեղէնի վրայ։ Չիլթիկի մէջ կայ կենդրոնական աղացք. Չորում՝ գործավայր ցորենի, գարիի, ճէհրիի։ Գոնիա՝ արմտեաց և մրգոյ։ Ընդհանրապէս այս գլխաւոր քաղաքներուն ժողովուրդք ազանելիքի ու երեսելիքի համար կը գործածեն եւրոպական մանաւանդ անգլիական վաճառք. գիւղերը միայն կը գործածեն շատ ուրեք տեղական ապրանք. Փոքր-Ասիայի ներսերը մանաւանդ՝ առեւտուրք մեծ մասով Հայոց ձեռք են։

Այս ամէնուն վրայ՝ մեր լսածին նայելով թուրքա-

(1) Պոլիսի Հայ ծխախոտի զլխաւոր վաճառականը եղած են՝ Նազարեան կարապետ կամարականը ու Տէմիրգարուեան եղբարք։

հայ վաճառականներէն գրեթէ ո՛չ ոք՝ մինչև 1870՝ յատկապէս նախակրթուած էր վաճառական սկզբանց տեսականին ալ մէջ, բաց ՚ի Կարապետ Իւթիւճեանէ, որ 1848ին Ս. Պ. Միսաքեանի և Տօքթ. Միքայէլ Խորասանճեանի հետ Փարիզ երթալով՝ պարապեցաւ քանի մը տարի վաճառական ուսումներու էջօլ տը Բօմէրսի մէջ, բայց երբ դարձաւ Կ. Պոլիս՝ տուաւ ինքզինքն իր նախասիրած գրական և լրագրական անձուկ ասպարէզին: Էջօլ տը Բօմէրսի մէջ վաճառականութեան ճիւղում առին նաև Յովակիմ Նէվրուզեան և Տիգրան Եռուսեֆեան, որք բաւական ատեն Կ. Պոլիսի մէջ ըրին գործնական վաճառականութիւն և սեղանաւորութիւն: Ասոնցմէ շատ ետքը՝ Շամտանճեան Գրիգոր Խան՝ ուսաւ Եւրոպայի մէջ կանոնաւոր վաճառականութեան տեսականնը, և հիմը դրաւ ի Կ. Պոլիս, իր եղբարց հետ, այն կանոնաւոր առեւտրական տունին, որ կը շարունակէ ցարդ մէթոտեալ դրութեամբ:

Թուրքահայոց վաճառականութեան դպրոցն եղած է միշտ՝ Թուրքիայի, մանաւանդ Կ. Պոլիսի, առեւտրատեանն՝ իր բաւիղ շուկայովն և հինաւուրց խաներով, ուր 15—18 տարեկան պատանիներ կըսպասարկեն ու կաշակերտեն վաճառական գերծերու՝ հատոր (քօփ) շարելով, քանիչսարութեամբ, գրագրութեամբ, մաքսատունէն վաճառք հանելով և ամէն երկրորդական գործերու միջամուխ ըլլալով: Հին ատեններ՝ ժամացոյցի վաճառողի աշկերտ մը՝ պէտք էր անպատճառ ի՛ր իսկ ձեռքով ժամացոյց մը ամբողջապէս նորաշինել, որպէս զի շննայի արուեստապետներու վկայութեամբ վարպետ ելնէր: Նոյնպէս ոսկերչութեան և այլ կարեւոր ձեռնարուեստից աշկերտները:

Այս ամէնուն, ինչպէս և մանիֆաքուրայի տեսակներ պատրաստելու մէջ՝ մեծ դերակատարներն եղած են




գլխաւորապէս նմանողութիւնն ու օրինա կողութիւնը, ըստ որում Հայք 'ի սկզբանէ չեն ունեցած ստեղծող միաք՝ թերեւս իրենց երկիւղած հոգիին բերումով: Հայերուն հին ու նոր գրականութիւնն անգամ <sup>(1)</sup> աւելի հետեւողութիւն թարգմանութիւն եղած է քան գիւտ և հեղինակութիւն: Բայց հետեւողութիւն, թարգմանութիւն, հեղինակութեան հաւասար արժէքով ու հանձարով: Եւ հետեւողութենը՝ մանաւանդ վաճառականութեա՛ն մէջ՝ ապահովագոյն ճամբան է:



---

(1) Բաց 'ի Պերևս Խ. Մովսէսէն, Գր. Նարեկացիէն ու Ներսէս Ենորհալիէն, որոնց կրօնք, և շնորհ հանձարն հիացում և սքանչացում կը պատճառէ անոնց իսկ որք հայ ստեղծական հանձարի զոյուժեան վրայ կը Պերահաւատին:







1875—1890

1855էն 1880՝ Կ. Պոլիսի առեւտր. հրապարակին վրայ յառաջացան քանի մը գաւառացիներ ալ՝ յղելով վաճառք մէկ կողմէն իրենց բնիկ երկիրը, միւս կողմէն փոխանակելով և ապա պոլսական հրապարակին վրայ ալ բանալով գործեր իրենց հաշիւին։ Ասոնց կարգէն են՝ Իբրանոսեան եղբարք (Ամասիացի), որ ի վերջոյ մօտեցան Կիւլպէնկեանց ընդարձակութեան՝ իրենց բազմաճիւղ և բազմավայր գործերով. Կիւմրիչեան Աբրահամ<sup>(1)</sup> և Աւետիս, որ շատ չկըրցան տեսել՝ հակառակ բաղդին ժպիտներուն անգամ. Մանուկ Գոչունեան Կիւրինցի, Գէորգ Տէմիրճեան Խարբերդցի, Ճամբզեան հայր և որդի Կեսարացի, Մուրատեան եղբարք Կեսարացի և Ստամպուլլեան եղբարք նոյնպէս Կեսարացի։ Այս վերջիններն ըրին մեծ գործեր ամէրիգանի վրայ քսան տարի մը չափ և սեղանաւորութեան ալ ձեռնամուխ եղան. Յովհաննէս Կարապետ ու Նսայի Փափազեան, Գրիգոր Մսրբեան, Թոփալեան եղբարք, որոնց վրայ՝ իբրեւ ժրագոյններու՝ կարժէ ընդարձակուիլ քիչ մը գործոյս համեմատութեամբ։

Մնած սնած ու մարզուած Կիւրինի անձուկ այլ բանուկ ձորերուն մէջ՝ հսկողութեամբ իրենց համեստ հօր Կարապետ Թոփալեանի։ նախանձախնդիր ընտանեկան սովորութեանց։ պարզ ձեռներէցութեանց, երկիւ-

(1) Այս անձ՝ արժանացաւ անգամ մը 20,000է աւելի լիբայի կտակեալ ժառանգութեան մը, զոր դարձեալ կորսնցուց.

ղածութեան և կիւրինցոց յատուկ հնարագէտ աշխատասիրութեանց, Թոփալեան եղբարք իրենց կողմէն Կ. Պոլիսի մէջ կը հաստատէին 1870ի ատեններն իրենց երէց ու յառաջիմաց եղբայրը Գէորգ Թոփալեան մինչ միւս եղբարքն՝ Ալիքսան Գրիգոր և Բերոբէ՝ երթեւեկութեամբ և կիւրինի ու այլ մասնաճիւղերուն մէջ կը գործէին: Իր հուժկու կազմին և խուզարկու միտքին լծողելով անդու աշխատութիւն մը՝ Գէորգ Թոփալեան 5-6 տարիէն առաւ առաջնակարգ դիրք Կ. Պոլիսի գնողներու հրապարակին վրայ՝ իբր յանձնակատար Փոքր Ասիայի շահատուններուն ամէն կարգի վաճառքի վրայ: Իր բովանդակ պոլսական գործերուն ի՛նք հասնելով՝ ի՛նք գնելով, ի՛նք գրելով, ի՛նք շարելով և ի՛նք ճամբելով, քանի մը տարուան մէջ ստացաւ փորձառութիւն մը, որ իր արտակարգ ձեռներէցութեանց մէջէն գրեթէ անմիաս յառաջ բերաւ զինքն և իր ընկերակից եղբարքն առաջնակարգ վաճառական՝ ներհուն մանաւանդ մանիֆաթուրայի իբր ամէն ճիւղերուն, Որով եղբայրական համերաշխութեամբ կրրցան հաստատել տեղական մեծկակ գործեր Կ. Պոլիսի, Ջմիւռնայի, Եգիպտոսի մէջ, և վերջերը մինչեւ Հնդկաստանի մէջ անդամ բացին վաճառական գործ մը ձեռամբ Ալիքսան Թոփալեանի. բանալով Մանչէստըրի մէջ ալ հայթայթիչ տուն մը ընդարձակ:

Պօղոս Աստարճեան ադրիանուպոլսեցին ալ՝ 8-10 տարի ցուցած է Կ. Պոլիսի հրապարակին վրայ Թոփալեան Գէորգի հաւասար ժիր և անդադար գործունէութիւններ՝ հաստատելով հոն ի վերջոյ ընդարձակ վաճառատուն մը, որը շարունակեցին իր եղբարքն իր վաղամեռիկ վախճանէն ետք: Բիչ մը ետքերը՝ վերոյիշեալներուն հաւասար կընթանան նաեւ Սէլեանք՝ նախ մանիֆաթուրայի ապա չուխայի առեւտուրներ



րով, Անգրէասեան և Քասարճեան՝ նախ սօքումայի և միագոյն կտաւներու առաջ պատմայի վրայ բանալով վաճառատուն մը ի Կ. Պոլիս, և ուրիշ քանի մը Կ. Պոլիս բնակացած տուն տեղ եղած Փոքր-ասիացիներ:

Այս Փոքր-ասիացիները՝ գլխաւորապէս իրենց չարքաշ սկզբնաւորութեան և տոկուն այլամերժ բարքին բերումներով՝ կըրցած են հետզհետէ յաջող դիրքի տիրանալ Կ. Պոլիսի միջնազգային հրապարակին վրայ, բացի մէկ քանի անխոհմիներէ, որ՝ բռնուած մայրաքաղաքին ծախիչ հրապոյրներուն՝ ծախած սպառած են ամէն ինքնութիւն ամէն բարեմասնութիւն հոյրենական:

1875ին՝ հին մեծատուններէն ալ՝ եկած հասած էին այս նորերուն քով մեծ գործունէութիւններով՝ արտածական ու ներածական երկչաւիղ վաճառաշահութեամբ և սեղանաւորութեամբ՝ հուշակաւոր Սերոբէ ու Սարգիս Կիւլպէնկեան եղբարք, բարերարք Կ. Պոլիսի Հայ Հիւանդանոցին, որոց յաջորդեցին իրենց որդիք. Յակոբեան եղբարք՝ գլխաւորապէս պարսիկ առեւտուրներու և անգլիական յանձնարարութեանց գործերով. Յովհ. և Մկրտիչ Եսայեան՝ գլխաւորապէս երկաթի վաճառականութեամբ և սեղանաւորութեամբ. իրենց ձեռքն էին 1875էն 1895 Կ. Պոլիսի հրապարակին վրայ գտնուած հայ վաճառականներու մեծ մասին և գրեթէ բոլոր կեսարացի հայ վաճառականներուն սեղանաւորական առեւտուրք, Քարակէօզեանք, որ հետզհետէ զօրացուցին Կ. Պոլիսի ու Անգլիայի մէջ իրենց սեղանաւորական գործերը՝ նուազեցունելով իրենց մանիֆաթագրայի գործառնութիւնները. Թօքատեանք, որ բացին նաեւ դրամատուն մը յԱնգլիա և ի Կ. Պոլիս, Պէշիքթաշիեան և Պօղոս Գարրիէլեան, որոնց գործը մեծ էր մանաւանդ ամէրիգանի թիւլպէնտի եւ ուրիշ ճերմակեղէններու վրայ:

Զմիւռնայի բանուկ հրապարակին վրայ ալ այդ միջոցներուն կը փայլէին հինաւուրց Պալեօզեանք, Եսայեանք, Սպարթալեանք, Վարպետեանք, Էքիզլէր եղբարք, Պաքըրճեանք և այլք ոմանք, որոց շատերն ե՛լ հարստութեամբ ե՛լ գործունէութեամբ հաւասարեցան Կ. Պոլիսի մեծ հայ վաճառականներուն :

Պրուսայի մէջ՝ հանդարտ ու տեղական զուարթ գործունէութեա՛ր բարգաւաճեցան Պոտուրեանք, Պալպան եղբարք, Թէոսեանք, Արապեանք, Ֆնտըքեանք և այլք, որոց գործունէութեանց մեծ մղում կուտար Պրուսայի և շրջակայից խողակի գործը :

Իսկ Ադրիանօպոլիսի մէջ՝ Անանիա Պօղոսիկ, Աստարճեան, Յարութիւն Յովհաննէսեան, որ բռնած էին մասամբ Բուժէլիյի ադրիանական մասին վաճառականութիւնը :

Տրապիզոնի մէջ նշանաւոր էր՝ քանի մը յոյն եւ թուրք վաճառականներու հետ՝ Արապեան տունը, Եիւնեայի մէջ՝ Մութաֆեան, Վառնայի և Ռուսճուքի մէջ՝ Յովասափեան և Նաշիտ Աստուածատուրեան, որ կտակեց 1000 օսմ. ոսկի բարեգործական հաստատութեանց :

Իսկ Սոֆիայի, Ֆիլիպէյի, Սելանիկի, Պապա տաղի, Մանասորի և Բուժէլիյի միւս գլխաւոր շահաստաններուն մէջ՝ մեծ վաճառականութիւնը գրեթէ միշտ գտնուած է մեծ մասով թուրքաց, յունաց, պուլղարաց և հրէից ձեռքը, երկրորդական փոքր վաճառողութենէն մասնիկ մը միայն ըլլալով գաղթեալ հայերուն ձեռք :

Ռումանիայի՝ մանաւանդ Քէօսթէնճէյի՝ մէջ վերջերն յաջողապէս փայլած են քանի մը Հայեր, Պրէնկեանք ու Մանիսալեանք՝ մանաւանդ ցորենի մեծկակ գործերով :

Գլխաւոր այս շահաստաններէն զատ՝ թուրքահայ վաճառականք գործած են երկրորդապէս դարձեալ Նի-

կոմիտէի, Բիւթանիայի, Տարտանէլի, Ռոտտսթոյի, Պիլէճիկի, Գէօթանիայի և այլ մօտաւոր] գաւառներու մէջ՝ ամէն կարգի տեղական ու ներածական վաճառքի վրայ չափաւոր գործառնութիւններով, կենդրոնացած սահմանափակուած յաւէտ իրենց իսկ հրապարակներուն վրայ: Նիկոմիդացիք և Ռոտտսթոյիք՝ միշտ զգոյշ և կարի խնայող ու հաշուեղիտող կը ներկայանան ասոնց մէջ ամէն տուրեւառներու վրայ, և իբր այնպիսիք՝ միշտ ողջ և հաստատուն, թէպէտ և մեծ մասամբ կցիր ու միշտ երկրորդական կացութեանց տէր և հեռի առևտրական մեծ գործերէ, լայն ձեռնարկներէ: Անատոլոյի և Բումէլիի երկաթուղիները՝ բերած են աւելի շուտիկ գնացքի մը իրենց այս զգոյշ ծանր ու ամփոփ գործունէութիւնները: Ռոտտսթոյ և Նիկոմիդիա՝ իրենց շուրջի վատուցեալներովն և գիւղերով՝ ի վաղուց հըռւչակուած են իրենց արմտիքովը, մրգեղէններովը, կաթնեղէններովը, որոց ճաշակն ամէնէն առաջ կառնէ Բիւզանդիա: Իսկ Պարտիզակ գիւղը՝ պայտի ու կաղինի գործերով զրուցուած է ստէպ. իր կրթական նախանձաւորութեանց հետ:











1880—1890

Կ. Պոլիսի՝ մանաւանդ պասմայի՝ հրապարակն 1875էն 1890 ցուցած է մեծ գործունէութիւն մրցական: Հինէն եկած հասած հայ տուներ և նոր հաստատուածներ՝ այդ շրջանին վայելած են պայքարող և սպառող սակեղար մը պասմայի և առ հասարակ մանիֆաթուրայի առևտուրներու, որ շատերը գլորած շատերն ալ կանգնած է . . . :

Այս տուներէն՝ դարձեալ առաջինը կըրնայ համարուիլ Գարակէօզեանցը, որ սակայն՝ ըսե՛նք անաչառ ըլլալու համար՝ չէ կըրցած արժանապէս գնահատել իր կարող պաշտօնեաները<sup>(1)</sup>. և այս պաշտօնեայք երկայնմտութեամբ համբերելէ ետք իրենց արժանաւոր գնահատումին՝ ի վերջոյ հեռացած են իրենցմէ՝ և աւելի արդարակշիռ հաստատութեանց մէջ զետեղուած են արժանապէս, և հոն ի սպաս դրած իրենց փորձագիտութիւնը. այսպէս Գարակէօզեանցմէ տակաւ հեռացած են՝ Յովսէփ Սրովեան, Զենոր Հիսարլեան, Գարբիէլ Էլիկիւզէլ, Եալտըզճեան, Յովակիմ և Մեսրոպ Ֆէնէրճեան, Գարեգին Մոլտովազ, Թագւոր, որ առ հասա-

(1) Այս անտեսող թերութիւնն ականբեկապէս ունեցած են Կ. Պոլիսի քանի մը մեծ հայ վաճառականք ալ, որ Գարակէօզեանց գէթ միւս մեծոտիկ բարեմասնութիւններէն զուրկ ալ էին. չե՛նք ուզեր անոնց աւուրն ալ տալ, բայց իրենց ձախողեալ գործերը՝ բաւական վկայութիւն մըն են թէ իրենց այս ընթացքը չհամեմատիր ուղիղ վաճառականութեան սկզբանց, ո՛չ ալ իրենց շահերուն: Ինք ոյժն Հոսմ իսկ չգիմսցաւ այդ ձախող ընթացքով: Մե՛ծ ևւ դրամագլուխի կիսահաւաքաւ Կ աշխատութեան արժանիքը:

րակ Գարակէօզեանց այլ և այլ գործերուն մէջ պաշտօնավարած էին ի սկզբան ամենայն հաւատարմութեամբ ու գործունէութեամբ: Ապա կուգայ Կիւմիւշկէրտան և Յովհաննէս Խոնշէկիւլի վաճառատունը, որ 1877էն 1890 ցոյց տուաւ բանուկ գործունէութիւն մանաւանդ Անատոլոյի ծանր և նախշուն վաճառքներուն վրայ, վարչութեամբ Յովհաննէս Խոնշէկիւլի: Այս վերջինը՝ մարդուած Քտիամաճեանց հին տունին մէջ, բազմիցս գործով ճամբորդած, վերջապէս ընկերութեամբ Կիւմիւշկէրտան եղբարց՝ բացաւ Չաքմաքճըլարի մէջ տեղուանքը պասմայի ճոխ վաճառատուե մը, ուր կը գտնուէին մանաւանդ գաւառական ամէնէն ճաշակաւոր պասմաներն՝ հինգ ու երեք գոյներու վրայ ընդհանրապէս. Խոնշէկիւլ Յովհաննէս պաղարիւն և վարպետ վաճառող և պասմայ շինող մըն էր: Ապա՝ Ֆնտըքլեան եղբարց և Տ. Ղոնշէկիւլի վաճառատունը պասմայի, որ 1876էն մինչեւ 1886 մեծաքանակ գործեց Բումէլիյի և Անատոլոյի նաեւ Կ. Պոլիսի յատուկ երկրորդական պասմաներու վրայ: Այս վաճառատունէն հնարուեցաւ Քրէթոնը՝ կակուղ և լայն կտաւի վրայ հինգ գոյն և եռագոյն նոր տեսակ մը մասնաւոր ծալքով, որ ձգեց ի սկզբան մեծկակ շահ և որմէ քիչ ատենի մէջ սպառեցաւ ի Թուրքիա 100000 հատոր (թոփ): Եւ աւելի պիտի ծախուէր ու շահէր՝ եթէ Թօքատեանք շինել տալով անոր աժան նմանութիւնը՝ քանի մը ամիսէն չկոտրէին գինն ու արժէքը:

Ֆնտըքլեան Տ. Ղոնշէկիւլ վաճառատունը պասմայի, որ հիմնուած էր նախաձեռնութեամբ Պետրոս Ֆնտըքլեանի, ի սկզբան հետամուտ կուշտ շահերու, չունէր մեծ սպառում. բայց ապա 1882էն ետք անցնելով Յարութիւն Գ. Մըմըրեանի երխտասարդ գործավարութեան՝ սկսաւ մեծաքանակ սպառումներու՝ մինչեւ 1885



կ. Պոլիսի պասմայի հրապարակին վրայ, Թօքատեան վաճառատան հետ, ըլլալով մեծաքանակ ծախող՝ տարին իբր 150000 հատոր:

Թօքատեան վաճառատունը պասմայի, որ կը գործէր ընդհանրապէս յարմարցուած աժան տեսակներու վրայ, եղաւ սկզբնապատճառ պասմայի գիններուն յանկարծ անկման՝ շո՛ւտ շա՛տ և շփոթ իմն սպառելու տենչով, որով իր Մանչէսթըրի հինաւուրց վարիչին բովանդակ գործունէութիւնն և փորձագիտութիւնը չճառայեց ուրիշ բանի՝ բայց միայն շատ սպառելու և պասմայի նման անհաստատ գործի մը հաստատուն և բանաւոր գինները կոտորելու՝ հեւ ի հեւ յախուռն մրցումով: Այսպէս երեսուն տարիէ հետէ շարունակեալ 20<sup>0</sup>/<sub>0</sub> և 15<sup>0</sup>/<sub>0</sub> պասմայի հարկաւոր շահերն յանկարծ կընային անխօսեմաբար 5<sup>0</sup>/<sub>0</sub>, 3<sup>0</sup>/<sub>0</sub>, 2<sup>0</sup>/<sub>0</sub>ի, և 33 ու 36 ինչէղ եարտաներն՝ 34, 32, 30 մինչեւ 27<sup>1</sup>/<sub>2</sub> և 25 ինչէղի: Այս մեծամրցութիւնը, որ տեղի ունեցաւ մանաւանդ Ֆնտըքլեան և Թօքատեան վաճառատուններու միջեւ, լաւ չներգործեց կ. Պոլիսի պասմայի ատեանին վրայ և մրցողները չշահեցան անկէ իրենց եռանդին ու աշխատութեանց համեմատ: Գին ու արժեք իջեցունելէն դիւրին բան չիկայ. արհեստ ու հարսարուքիւնը՝ զին բռնել սալու արժեքաւոր սպեանք հասցունելու մանաւանդ արհեստակցական վաճառագնացքը չկորելու մեջ կը կայանայ. վերոյիշեալ երկու վաճառատունք՝ նախագործութեամբ Թօքատեանց՝ չունեցան այս արհեստական իմաստութիւնը, և առեւտր. հրապարակը տուժեց շա՛տ բան: Կըրնային իրենք ալ աւելի՛ շահիլ և չդպչիլ միւս ծախողներուն սովորական շահերուն: Գարակէօզեան Յովհաննէս Խոնչէկիւլեան և ուրիշ քանի մը հին տուներ միայն տեւեցին իրենց արժանաւոր գիններուն վրայ՝ թէպէտ ոչ այնքան շատ ծախելով, բայց ընդհանրապէս

միանգամ իյնալ սկսան պասմայի տեսակներն ու գիները՝  
գէթ 10 — 15 տարուան համար անկանգնելի :

Բաքտիվան ճաշակաւոր յոյն տունին վարիչներն ալ  
Հայե՛ր էին՝ Յովսէփ Սրովեան և Զինոր Հիսարլեան, որ  
նախ մարզուած էին Գարակէօզեանց գործերուն մէջ :  
Ընդհանրապէս ճաշակաւոր գծագրութեանց տեսակներ  
ծանր կտաներու վրայ՝ Բաքտիվանի վաճառատունէն  
կը ծախուէին Բումէլիյի և Անատոլույի գնողներուն եւ  
ունէին մեծ համբաւ : Իսկ Բէթէրի հին վաճառատունը՝  
կը ծախէր այս միջոցին նորագիւտ պլոք պասմայ մը,  
որ տարին 100000 հատորի գնացք ունեցաւ՝ մեծ մա-  
սով փոքր Ասիա ղրկուած՝ կոտրած գիներով : Ըստ  
այսմ՝ Կ. Պոլիսի յայնժամու պասմայի հրապարակին  
վրայ ամէնէն շատ ծախուած վաճառքներն եղան պլոքը՝  
Բէթէրի վաճառատունէն, Քրէթօնն և Ալ եէչիլի ըսւած  
ասիական տեսակը՝ Յնտըքլեան վաճառատունէն ու Կը-  
րաֆթընի երկրորդական մոռ պասմաները, գունաւոր  
մանաւանդ քուրու՛նի ըսուած պասմաները՝ Թօքատեան  
վաճառատունէն :

Այս հին պասմածիններուն քով կը վարդանային քա-  
նի մը նորեր ալ ընդ որս Քընաճեան վաճառատունը, <sup>(1)</sup>  
Մանուկեան Եղբորորդուոցը, Մելիքեանց, Մնտիկեանց և  
Մ. Քափամաճեանցը, որ կուտային բաւական կարեւո-  
րութիւն Կ. Պոլիսի ճաշակաւոր պասմաներուն ալ :

Տոքումայի լւիկ ճիւղին վրայ եւս կընէին յաջող  
գործեր Յնտըքլեան ու Փեչտիմալճեան. կեսարացի Մու-

(1) Որուն հիմնադիրն էր Յարութիւն Գընաճեան կեսարացին՝ չու-  
նեւոր վիճակի մէջ Կ. Պոլիս եկած ու արժուն խնայազիտութեամբ դիրքի  
տէր եղած. ի սկզբան Պոլիսի խաներուն մէջ անոր և աղքատիկ կեանք  
մը անցուցած ատեն՝ անկողինին կազմածն հայժայթած էր խժուճի պար-  
կերէ մաս մաս խժուճ խորելով, և այս հայժայթանք անկողինը պանդըխ-  
տական մինչեւ վերջին օրը չէ հաներ տակէն.

րատեան եղբարք, Մկրտիչ Քասարճեան և Յովհ. Անդրէասեան. իսկ ամէրիգանի և առհասարակ ճերմակեղէնի վրայ մեծաքանակ կը գործէին Երեւում Փափազեան, Հարենց Գաբրիէլ, Սահակ Ղազարոսեան, Պետրոս և Պօղոս Ժամկոչեան, Ստամպոլլեան, Խիւտալէրտի օղլու, Փափազեան եւ ուրիշներ՝ կարգ մը յոյն մեծ վաճառականներու հետ: Ոսլան Արսէնեան կը գործէր մանած բամբակի վրայ, Կիլքրիսթ Կ. Թիրեաքեան պարսիկ առեւտուրներու: Ա. Յ. Քէհեան շալի ու ամէրիգանի, Գասպար և Աւետիս Լաթիֆեան նոյնպէս, Շահվէքիլեան Յարութիւն, Լեւոն Սէմէրճեան գունաւորներու և մատամբոլի, ու Մ. Միքայէլեան և Աւետիսեան եղբարք թաշկէնի գուրպայի և նորավաճառներու վրայ:

Պոլիսի այս վաճառականներուն հաշիւները կարճանագրէին տոմարագրութեան վարժ գրագիրներ<sup>(1)</sup>, որոնց շատը գիտէին նաեւ ֆրանսերէն ու անգղիերէն և որոց մէջ առաջնակարգ էին՝ Թորգոմեան Պօղոս՝ Կիւլպէնկեանց քով, Լիմոնճեան Քերոբէ՝ Թոքատեանց քով, Մուտովազ Գարեգին՝ նախ Գարակէօզեանց ապա Յակոբեանց քով, Նշան Տիւղէնճեան՝ Գարակէօզեանց քով, որ և գործնական տոմարակալութեան վրայ հրատարակութիւններ ըրած է, Յակոբ Հաճեան՝ Նզիա Կ. Պէյլէրեանի քով, Ճէվահիրճեան Գառնիկ՝ նախ Գէորգ Մուրատեանի քով և ապա առանձին վաճառատուն մը բանալով տօքումայի և գունաւորներու, Տիգրան Գափամաճեան՝ նախ Յնտըքլեանց ապա Թ. Ե. Գարակէօզեանց քով, Ղազարոս՝ Յակոբեանց քով, Սարգիս Ղուկասեան՝ Տիգրան Ղոնչէկիւլի քով, Գրիգոր Ալեանաք-


(1) Կրկնատումարի զիւան ըրած են նախ Զուղայեցի վաճառականը, որոցմէ մաս մը Իտալիա և Հոլանտա անցնելով՝ իրենցմէ Եւրոպայի անցաւ այս ուսումը:



եան՝ գրագիր նախ Ոսկան Արսէնեանի քով ապա առանձին վաճառական, Սիմոնիկ Պապեան՝ նախ իր գործերուն մէջ ապա Աստարճեանց քով, Յակոբ Գաւաֆեան՝ Թոփալեանց քով, Երուանդ Շիրինեան՝ Կիլքրիսթ Կ. Թիրեաքեանի քով :

Մանիֆատներայի վերոյիշեալ վաճառականներու տարբեր գործառնութեանց մէջ՝ կը փայլէին սեղանաւորութեամբ և մեծ վաճառականորթեամբ (չուխայի, փայտի և արմտիքի) Ունճեան Մաթուս և Արիկ եղբայրներն ու Գրիգոր Գարակէօզեան, որ ի սկզբանէ՝ սեղանաւորութեան և կալուածատիրութեան մէջ երեւելի եղաւ և ձգեց մեծ հարստութիւն, ունեցաւ նաեւ հանրական իրողութեանց մէջ գործնական մասնակցութիւն, Ֆրէնկեան եղբարք, Յովհաննէս Կիւմիւշեան սեղանաւոր, Սահակ Գարեան՝ փայտի և ածուխի վաճառական, Թահտապուրուն եղբարք, Հարենց Նշան, Պետրոս Քարակէօզեան՝ վաճառական ցորենի, Աղարեան եղբարք՝ վարիչ մեծ դրամագլուխի, Բարաղտմեան Թորոս և Տիգրան՝ սեղանաւոր, Կիւզէլ Հաճեան՝ նոյնպէս, Հարենց Արրահամ և Մարտիրոս ու Գառնիկ որդիք, Սիմէոն և Սեպուհ պէյ Մագսուտ՝ սեղանաւոր, Հարենց Մագսուտ, Չրաճեան Յարութիւն, Ներսէսեան Գրիգոր՝ կառուցապետական գործավար արքունի, դրամատէր ու կալուածատէր, Նորատունկեան Յակոբիկ, Պէյլէրեան Յակոբ, Փափազեան Գէորգ և Մկրտիչ՝ վարիչ ապահովութեան սնտուկին ՚ի Մեծ-Նոր խան, Իկիտպաշտան Ասապա, Գարամանեան Յարութիւն և Թաչճեան Սարգիս՝ սեղանաւորք, Սմբատեան Մանուկ՝ վաճառական ու մեծ կալուածատէր :







1880—1890

Ասոնց վրայ՝ Կ. Պոլիսի դրամատէր կալուածատեարց մէջ նշանաւոր եղած են հնուց ի վեր՝ Ճանիկ Ա. Բիրայ, Գրիգոր և Կարապետ ու Սարգիս պէյ Պալեանք, Տատեան Պողոս պէյ, Յակոբ Քէօլէեան և որդիք, Պոլ Պետրոս, Յակոբեան եղբարք, Ֆնտրգլեան եղբարք, Եուսուֆեան (Ալիքսան և որդիք), Մանուկեանք, Տոքթ. Միքայէլ Խորասանճեան, Թոփալեանք, Բարսեղ Հալաճեան, Եսայեան Յովհաննէս ու Մկրտիչ, Տատեանք, Համբարձում Տէօքմէճեան, Քիւրքճիխանլեանք, պարտիզպանեան Աւետիս և զաւակունք, Սուրէնեան Յովհաննէս և որդիք, Տիւզեանք, Սուքիասեան՝ սեղանաւոր և ագարակատէր, Սամանճեան. ի Զմբուհոս և յԵգիպտոս՝ Սպարթալեան, Պալեօղեան, Եսայեան, Նուպարեան, Նուպար և Պողոս փաշայ որդին, Գէորգ պէյ Երամեան ի Փարիզ և որդին Աբրահամ փաշա ի Կ. Պոլիս:

Թուղթի վաճառականներ էին Ալիքսան և Խաչիկ Խորասանճեան (ապա սեղանաւոր) Զարդարեան և Բակոբ Արշակ, որ Ղալաթիայի մտտենաղարանին հիմնադիրներէն է:

Եւ ասոնք մեծ մասով մինչև 1890, ոմանք անկէ ասդին ալ, շտեաւորապէս տեւեցին ու աճեցան՝ շատերն ազնուապետական կենցաղով. մը բաւական դատուցեալ զիրք մը բռնելով Թուրքահայ միւս հարուստներուն մէջ, մանաւանդ անոնք որ ունէին ամիրայական ծագում:

Իսկ Անդղիայի մանաւանդ Մանչէսթըրի մէջ հաստատուած Թուրքահայ վաճառականք՝ 1875էն ասդին առին ա՛լ կայուն դաղթականութեան մը կերպարանքն իրենց տնօրէն ժողովով, առաջնորդով, կիրակնօրեայ կենցաղատէր համախմբութիւններով և ընտանեկան կացու կազմով, որ օտար ոլորտի մը մէջ կառնէին ևս աւելի քաղցր հրապոյր:

Մեծին Բրիտանիայի լուրջ և կիկղոպեան ոլորտին մէջ Հայոց այս սկզբնական հաստատութիւնն և գաղթականութիւնն արեւելահազորդ՝ թէպէտ իր էութեամբը գործնական ու վաճառական էր, ունեցաւ սակայն՝ գործնականին ու վաճառականին հետ՝ իմացական ու բարոյական բարեհեղ ազդեցող թիւններ Թուրքահայոց արթնամիտ մասին վրայ:

Տաւը քսան տարիէ հետէ իտալականէն Ֆրանսականին դարձած հայ սիրտն ու միտքը՝ կարգ մը սիրուն և վարդավառ նորութեանց հետ՝ անխտիր օրինակելու վրայ էին Ֆրանսական աստանդիկ բարքերէն ու կարգերէն բաց, թեթեւ, անհիմն և փո՛ւտ ալ բաներ մը, որ՝ անհաշտ Արեւելքի ծանր ու չարքաշ բարքերուն հետ՝ շատ մասով մլասաբեր պիտի լլային, մանաւանդ ջոկ մը անխոհեմ գաղափարական միջնորդներու ձեռքով, որ զարմանալի մեծամտութեամբ մը տալ սկսած էին ինքիրենց իմաստասէրի, քաղաքակրթիչի կարեւորութիւն մը, և կը ջանային ամէն փետրազարդ հնարքով բերել իրենց ըմբռնումներուն հանուրին կենցաղական ու կրօնական գնացքը, անոր ընտանեկան ու եկեղեցական անարատ կենցաղը: Շալկած իրենց Վոլդէրը, Տիարոն և նմաններն՝ ի վաճառ կը հանէին ամէն նորածեղութիւն, ամէն փոփոխութիւն, ամէն զեվզեկութիւն՝ յանո՛ւն կրթութեան յառաջդիմութեան և իմաստասիրութեան:



Այսպիսի անզգաստ հոսանքի մը գէժ, որ կըսկսէր 1852էն ու կը շարունակուէր մինչև 1885-90, հակակըչուող քիչ շատ զգաստ ներգործութիւն մը ընելու էր և ըրա՛ւ ալ անգղիական զգօն և լուրջ ոգին՝ վերոյիշեալ վաճառականներու և անոնց կցորդ Կսնաֆիւն ձեռքով, և հին ամիրայութեան բիրտ ու անիմաստ և անտանելի հրամանահանութեանց հետ՝ յաջողելու էր ու յաջողեցա՛ւ ալ սահմանափակել իմաստակ նորասէրներու ֆրանսիկ և՛ ըսե՛նք՝ պոռնի՛կ ալ ծայրայեղութիւնները, որ և ոչ մէկ էական բանով հաշտ էին հին հայ բարքերու և կենցաղներու հետ:

Ճշգրտահոթութիւն խօսքի ու ժամանակի, ուղղամտութիւն, պաղարիւն գործունէութիւն, կանոնաւոր և խնայագէտ աշխատասիրութիւն՝ ասոնք էին որ, անգղիաբնակ հայ վաճառականաց և թուրքահայ քանի մը հին ու երկիւղած գործի մարդոց միջոցով, քիչ շատ անցան նոր թուրքահայերուն՝ գործնական մասին մէջ՝ մանաւանդ քանի մը հին ու երկիւղած գործի մարդոց միջոցով, և մանաւանդ քանի մը հին Պոլսեցւոց Զ. Իււնացւոց և առկուն գաւառացւոց ձեռքով, որոնց շատ համաձայն կը պատմէր բրիտանական ծանր ու բանաւոր կենցաղը:

Գրականութիւնն և մանաւանդ լրագրութիւնն իսկ մեծապէս ազդուեցան այս ներգործութեամբ, և փոխանակ երեսը վառ, կռուազան, սնամէջ, ձեւազանգ ասութեանց և գաղափարաց՝ հիմնաւոր ներհուն և տրամաբան ոգի մը մուտ գործեց հայ գրականութեան մանաւանդ լրագրութեան մէջ, 1875էն ասդին աւելի՛ աչքի զարնող կերպով: Սամուէլ Սմայլսի ինֆլոզնութեան աշխարհաբառ թարգմանութիւնը գործնական յառաջաբան մը եղաւ այս բարեշրջութեան:

Այսօրուան քանի մը լրագրաց մասնական յաջողու-

Թիւններն ու օգտաբերութիւնները կը պարտինք այդ բրիտանիկ վաճառարեւազդեցութեանց, և վերջերս տեղակալող գերմանական խրթին ներգործութիւնը՝ չպիտի կրնայ բնաւ տեղը բռնել այն ամուր և ազնիւ ներգործութեանց, որ սկսան ի Թուրքահայս 1855ին ու տեւեցին ճեկքըղմկնարար մինչեւ 1890: Տարտամ տրտում և գրեթէ միշտ վայրասոյզ և շահասոյզ գործնական ու փիլիսոփայական գերման ոգին չպիտի կրնայ չափուիլ՝ կը թուի գէթ մեր կողմերն՝ անգղիական խորապէս գրնահատող, որոշ, ազնուական և հարուստ ոգիին հետ, ինչպէս և՛ փոքրէն առ մեծն և պարունակեալէն առ պարունակողն առնելով նմանութիւնն՝ ինչպէս և, կրսենք, կէօթէի լայնաշիտի և ամէնադիւթ երկունք երբէք չպիտի կրնան զուգակշռուիլ բուսակեաց նեւտոնի խո՛ր բա՛րձր ու տիեզերակա՛ն այն սուրբ արդեանց և գիւտերուն, որ պատիւն են հանճ՛ւր մարդկութեան և որ յայտնութեան մօտելու աստիճան յստակալոյս են ու սքանչելի . . .

---







1880—1890

Անգղիական յստակ միանգամայն ամուր և խորունկ այս ներգործութիւն՝ ունեցաւ մերոնց վրայ լաւագոյն արդիւնք մըն ալ : Հեռուէն՝ Թուրքիայէն՝ նորասիրաբար կրաւորաբար ու տգիտաբար Բողոքականութեան յարողք և անոր նորեւանդն բերումով իրենց եկեղեցիէն ու տեղական բարքէն ուժացողք՝ առած եղան գործնական լաւագոյն դաս մը, լսելով ու տեսնելով կէսէն աւելին բողոքական երկիրի մը մէջ (յԱնգղիա մանաւանդ ի Մանչէսթըր) Հայոց հին եկեղեցիին շինութիւնն և շէնութիւնն և անխոտոր անայլամէտ բարգաւաճումն՝ իր քովանդակ ծէսերովն ու արեւելեան հանդերձանքով <sup>(1)</sup>, որոց իբրև կռապաշտութեանց կը նայէին Թուրքահայ նախաբողոքականք. և այս կարծեաց առաջքը չէին կրրցած առնել ո՛չ ժամանակին նախանձաւոր պատրիարքները, ո՛չ աստուածաբանները, ո՛չ ալ ընտանիքի հայրերը, որով ճարակներ մը աւելի պատրաստ գտաւ Հայոց մէջ՝ աւերող անզանազանութիւնն (անտարբերութիւնն) և ստահակ լայնախոհութիւնը :

Անգղիական ազդեցութեան և գործունէութեան այս

(1) Միայն՝ աչքի զարնող կերպով զարմանալի է որ հայ վարդապետներն Անգղիայի փողոցներուն մէջ կերևին անգղիական երէցի համակրոն տարագով, մինչ Յոյնք հոն ամենուրեք կը բարձրացունեն Արեւելքի հին և լոյս եկեղեցիին ինկաւէտ փառքն՝ իրենց եկեղեցական լայն սրբմովն և պղատոնիկ զլխանոցով : Ինչո՞ւ այսպէս :

հզօր և հանդարտ ոգին էր՝ որ՝ լծորդուելով Արեւելքի դիւրաթեք բարոյից և վառ գաղափարաց ու երեւակայութեանց՝ կեռանդնաւորէր թէ՛ ի Թուրքիա թէ՛ յԱնգլիա հին և նոր հայ վաճառականներու կենցաղը գործունէութիւններն և ընդհանուր գնացքն ապրելու, որով պատրաստուելու վրայ էին իրենք 20րդ դարին դուրսի սեմոցը վրայ թերեւս լաւագոյն ևս յաջողութեանց:

Անցողաբար պարտ կը համարինք դիտել նաեւ հոս՝ որ հայ վաճառականներու Եւրոպայի մէջ գործող մասը միշտ դիւրութիւններ մը աւելի ունեցած է Թուրքիայի մէջ գործող մասէն, որ ջիղն է գործերուն և ամէն ներդրութեանց ու պատասխանատուութեանց բեռնաբարձը, որով դուրսի (Եւրոպայի) թղթակցաց և գործակցաց արժանագոյն է տալ անոնց խորհուրդներուն և կանոնաբաններուն կարեւոր կարեւորութիւն մը, քան ինքնագլուխ Եւրոպայի կանոնաւոր սարուածքներէն գործել չինել կամ քակել և հրամայել անգամ:

Այս թուրքահայ՝ մանաւանդ Կ. Պոլիսի հրապարակին՝ գործիչներուն ժրագոյններն էին 1875էն 1885՝ Յակոբեան Միքայէլ, Պետրոս Պէշիքթաշլեան, Մանուկ Արզըեան, Պօղոս Գաբրիէլեան, Պետրոս Ֆնտըքլեան, Գէորգ Թոփալեան, Հաւարածու մ Ստամպուլլեան, Պօղոս Աստարճեան, Մկրտիչ Քասարճեան և Յովհ. Անդրէասեան, Սահակ Ղազարոսեան, Սարգիս Թէոսեան, Գէորգ Տէմիրճեան, Զենոբ Հիսարլեան, Յարութիւն Գ. Մրմըրեան և այլք ոմանք, որոց սուրացող ոտից ներքեւ՝ մանաւանդ շարաթ ու երկուշարթի օրերն՝ էօրիւճիլէրի ու Չաքմաքճըլյարի մայթերն ու սալարկները կայծ ու կայծակ կը թռցունէին:

Դարձեալ այս աւելամասնութեանց քով չենք կրննար դիտել չտալ՝ որ հին Թուրքահայոց վաճառականաց մէջ մինչև 1882՝ ըլլա՛ն Կ. Պոլսեցի, ըլլա՛ն գաւառա-

ցի մանաւանդ կեսարացի՝ յաճախած ալ են շատ կցիր<sup>(1)</sup>,  
դեգ, խորտուրորդ բնաւորութիւններ, վայրահայեաց

(1) Այսպիսի կցիր կծծիներու նկարագիրը զեղեցիկ ճշդութեամբ  
կըստորագծէ ծերունի յոյն փիլիսոփան Թևփրաստոս. —

Եւ կծծի է, որ և յետ ամսոյ չղանդաղեալ ելեալ գնայ 'ի տուն  
պարտապանին պահանջել զ'էն դանկ իւր: Ի միաժողով ճաշկերոյթս  
տոհմայնոց՝ թուէ զբաժակս իւրաքանչիւր զոր ըմպեն... Որչափ և զիւ-  
րագին ինչ որ հաշուիցի գնեալ, նա տակաւին շատ է, ասէ, շատ: Եթէ  
ժառայն պոյտն ինչ կամ պուտնարդ բեկանիցէ, 'ի ոտնկէն նորս տուծէ:  
Եթէ յանկարծ բնիոն մի անկեալ ի կնոջէն կորնչիցի, վեր ի վայր հար-  
եալ վրդովէ զամենայն կահս տանն և զմահիծս և զարկեզս, և ընդ  
ամենայն խորշս և ծածուկս խիլ արկեալ որոնէ: Իբրև վաճառիցէ ինչ,  
այնքանոյ տայ՝ զի մի՛ ինչ շահեսցի գնողն:

Չտայ թոյլ և ոչ թուզ մի ուտել ի պարտիզէ իւրմէ, ոչ ընդ ազա-  
րակ իւր անցանել և ոչ ձէթ մի կամ արմաւ ի գետին անկելոցն բառ-  
նալ: Ելանէ շրջի զօր ամենայն այց և խնդիր առնել իւրոց սահմանացն  
ցանոց՝ եթէ անխախտ'ւտ կայցեն: Ոչ ինչ խղճէ օր ի յօր առնել զհա-  
տոցումն պարտուցն, և ի վաշխիցն շարիատս պահանջէ:

Եթէ խրախու՛նս ժողովրդականոցն առնիցէ, զխորտիկան մանր  
մանր կոտորեալ՝ այնպէս մատուցանէ ի սեղան: Իբրև զուտեստէ եւա-  
նիցէ, առանց ինչ ստանալոյ դառնայ ի տուն: Պատուէր տայ կնոջ իւ-  
րում մի՛ վատնել զաղ, մի՛ զպատրոյց, մի՛ զչաման, մի՛ զզուիրակ,  
մի՛ զաշտիպս, մի՛ ըզթեոս և մի՛ զսթերա, զի այդ մանուկն, ասէ,  
վե՛ծ շինիս ի զղուխս սարւոյն:

Համայն ասել, որ ժլատ և ուղղն իցեն, զնոցա և զգանձանակն  
է տեսանել ճճեկերս բորբոսեալս, և զբանալիսն ժանգահարս, և զնոսա  
զխոփին՝ զի զգենուն ըստ կարի հանդերձս նեզս և կարծս, ի փորքիկ  
և ի դոյզն սրուակէ լիուլի օժանին, զերծուն մինչև ցմորթ մարմնոյն<sup>(\*)</sup>,  
և զմիջաւուրբ բոկանան: Եւ առ թափիչսն երթեալ զուն գործեն՝ զի  
ձորձ իւրեանց ընդ բազում կաւ եկեսցէ, որպէսզի մի՛ ապա փուժով  
աղտեղասցի: Եւ Թեոփրաստոսի նկարագիրք ժԹ. էջք 72—75:

Պղատոնի և Արիստոտէլի աւագ աշակերտին այս ոսկեղէն հատ-  
ուածն՝ այնքան ճիշդ ու զեղեցիկ գրաբարի թարգմանած է այսպէս  
Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի Մխիթարեանն՝ որ չենք համարձակիք  
թարգմանել զայն ի՛նչ և է աշխարհարարի:

(\*) Իմա, այնպէս ասն ֆերթը՝ զի մի՛ uskuy վարսալիտայի  
կարօսացիս: Եւ ի ջեռուցանել արեւու թոկանան՝ զի մի օղբ  
ոսիցն հնացիս:



խորագէտներ ու խորամանկներ ալ ու վերակնող ծանծաղամիտներ, ամէն առիթէ օգուտ քաղող անխիղճներ, խոժոռ իւրախնդիր և ինքնապաշտ մարդիկ, ու քիչ երեցած են՝ ուղիղ, վեհանձն, բարեգործ, պարզ համարձակահայեաց ու ճեղքըլճեկ ոգիներ, որոց գնացքէն, դիտակէն, նայուածքէն ու գործերէն մեծութիւն և բարութիւն կը կաթեն՝ օրինակ իմն Կարապետ Գարակէօզեան մը, Գրիգոր խան Շամտանճեան մը, Ստեփան Սպարթալըեան մը և Գրիգոր Նսայեան մը կամ ուրիշ նմաններ . . . : Այս կողմէն Զմիւռնա աւելի բերրի եղած է, աւելի հոմերոկան քան Կ. Պոլիս՝ բնակչաց թուական համեմատութեան նայելով. ասո՛ր ալ զլիսաւոր պատճառը՝ թերևս Հելլէն ազնիւ ու դիւրահաղորդ շփումներու ատարկեան ազդեցութիւնն է, որ և ծնած սնուցած է Պալեօզեաններ Նուպար փաշաներ և Նուսուֆեաններ<sup>(2)</sup> :

Եւ միւս կողմէն ալ անուրանալի է դարձեալ՝ որ այդ վաճառական և իրենց հետևորդ Խնկափ դասակարգերն են որ զրեթէ միշտ դրամավճար եղած են հանրային իրր ամէն պէտքերու ամենակուլ հիւանդանոցէն սկսելով՝ դպրոցներու, աղքատախնամներու, պատրիարքարանի, Երուսաղէմի, նուագահանդէսներու, հրատարակութեանց, արկածեալներու, որբացեալներու, եպիսկոպոսներու, վարդապետներու, քահանաներու, միաձայններու և աշխարհիկ ու անաշխարհիկ եռաձայններու, որ իրար կը ծնին և իրար կը գլեն՝ խօսողներու, գրողներու, վճռողներու և քարոզողներու և կարգ մը մեկնամոռիներու ձեռքով :

Իրենցմէ ելած են մինչև 5-10000 ոտկի մէկ ձեռքէ

---

(2) Պալեօզեան, Նուսուֆեան Պետրոս, Նուպար փաշա ազնուական ընտանիքները Զմիւռնա ծնած են :



բարերարողներ, թէպէտ և բարերարութեան և ինքնաբուզիս նուիրատուութեանց ու կտակներու կողմէն՝ Ռուսահայոց Յունաց և Անգղիացւոց բարերարողներուն մերձաւոր աստիճանի ու ջերմութեան մը չեն հասած դեռ մերոնք, և աւելի իրենց կիրքն ու վառասիրութիւնները գգուողներու քան բո՛ւն պէտքերու կառատանան:

Թուրքահայ վաճառականներուն և գործակատարներուն մէջէն ելած են նաև տասնեակ մը բանասէր գրագէտներ ալ, 'ի մէջ որոց նախ Յովհաննէս Յովակիմեան ձեռներէց Պանտրրմացին և իր աղնուարարոյ որդին Գառնիկ Յովակիմեան, ապա Մարտիրոս Թոքատեան, որ սաստիկ ընթերցասէր ու խօսասէր ալ էր՝ աշակերտող Յովհ. Տէրոյնցի աննկուն աշխատասիրութեան և Օկիւսդ Քոնդի ու Շէքսպիրի ցուրտ իմաստասիրութեանց և ջերաջերմ բանաստեղծութեանց<sup>(1)</sup>, կարապետ Գարակէօզեան՝ խրախուսող գրագիտաց և զըպրոցաց, Տիգրան Քարակէօզ՝ սիրող գործնական իմաստութեանց, ընթերցող լուրջ նաև բաւական աջող յանգաւոր ոտանաւոր դրելու<sup>(2)</sup>, Յովհաննէս Յակոբեան՝ ընթերցող և հետևող պատմական ու աստուածաբանական գրոց, Անուխեան Եսայի, որ շտկած էր մեծկակ մատենադարան մը և ապա մաս մաս ձեռքէ հանեց իր նեղ

---

(1) Մարտիրոս Թօքատեան՝ Մարկոս Ալեքիոսի նման վարժապետասէր ալ էր, բերնէն չէր ձգեր իր դաստիարակն Յովհ. Տէրոյնցի անունըն իբրև մե՛ծ մատղոյ, մինչև անգամ Անգղիական Կարտինալ Մանին. կի նմանցունելով զայն այս տողերը գրողին. և ամէն Կ. Պոլիս գալուն՝ շնորհքով դրամական նուէրով մը կայցէր Հայ Վարդնին ամենայն խոնարհութեամբ, և խորհուրդ կը հարցունէր անոր պատկառանքով: Տէրոյնցի խոշոր ցուցամատը՝ մեծ դեր ու կշիռ ունեցած էր Մ. Թօքատի անշշուկ և խոնարհ մեծութեան մէջ:

(2) Տիգրան Քարակէօզեան Դաւրէթի իր պանդխտական պարսպոյ ժամերուն զբաղած է նաև՝ Գարրիէլ Էլիկիւզէլի հետ՝ հայ և պարսիկ լեզուներու և տաղերու համեմատական ուսումնասիրութեանց:

օրերուն, Եպիտրզճեան՝ նախ Գարակէօղեանց ապա Յակոբեանց ներկայացուցիչն 'ի Մանչէսթըր, Գառնիկ Ֆրնտըքլեան՝ հմուտ շէքսփրեան անգղիերէնին և հայ գրքաբառ լեզուին՝ Հիւրմիւզի դպրոցէն, նաև բաւական արտադրող մը Անգղ. և Հայ բանասիրականներու, Գէորգ Թովալեան՝ ջերմեռանդն ընթերցասէր և խրախուսիչ հայ բանասիրութեան, Գրիգոր խան Շամտանճեան, որ կազմած ալ էր մեծ մատենադարան, Թագէոս Ալինաք քեռորդին Թոքատեանց՝ հմուտ հայ անգղիական և գերմանական լեզուներու, Տիրան Կիւմիւշկէրտան՝ խրախուսող բանասիրութեան, Բէրորէ Լիմոնճեան՝ հաշուակալ Թոքատեանց, որ երկար տարիներ դասախօսեց անգղ. լեզուն և գրեց քաղաքական յօդուածներ Թէրճեանն Էֆ/եւրի, Ճէրիսիյի, Սուրհանդակի մէջ, Տիգրան Կաթարական՝ ազնիւ սիրտի և ոճի տէր գրագէտ բանասէր, որ շարք մը փայլուն յօդուածներու հետ գրքած ունի նաև վէպ մը՝ վարժապետիև աղջիկն անունով, Տիգրան Ելքէնճեան ոսկերիչներու խօստ'ւն շուկայէն՝ ներհուն Հ. Արսէնեան գրաբառին նախնեաց մատենագրութեան և Ֆրանսերէնի ու Անգղիերէնի, որուն քառասնամեայէն ետքը գրուածներն յայտնութի'ւն մը եղան գրականութեան մէջ և յանդիմանութիւն մը արդար՝ երեսուն քառաստ'ւն տարի գրականութեամբ ապրո'ղ վասարկո'ղ վարժապետներու և վարդապետներու կէսգէտ ու անաշխատ ձախողութեանց, Յարութիւն Գ. Մրմըրեան, որ՝ դպրոցէ դուրս մանիֆաթուբայի նսեմ վաճառատուններու մէջ՝ հև 'ի հև և վախն ի վախ ուսաւ ինչ որ ուսաւ անօգնական բանասիրելով. Յովհաննէս Գազանճեան եւդոկիացին՝ որ կարգ մը լեզուաղըննական սւ. բանասիրական զնահատուած երկերէ ետք՝ վերջապէս յաջողեցաւ աշխարհաբառ քերականութեան նորագոյն կազմութեան մը, որ մինչև ցարդելած աշխ.

քերականութեանց գիրքերուն ամէնէն բանակարգեալն ու դասակարգեալը կը թուի՝ գէթ ըստ ձևին ու ծրագիրին, Սրտաշէտ Յարութիւնեան՝ Մալկարայի կանաչ ձիւն, որ արհեստով գրագէտներէն աւելի օգտակար եղաւ բանասիրութեան՝ իրեն անկախ ու անաչառ աշխատութիւններովը։ Այսպէս՝ գործի մարդիկ քարոզութեան մատենագրութեան գործնական բարոյականի լաւագոյն և փորձառագոյն ծառայութիւններ կրնան մատուցանել, մանաւանդ մեծատունք. ասոր երևելի օրինակ մըն ալ վերջերս տուաւ Անգղիա հռչակաւոր գործարանատէր Jojeph Bibbyի անձին վրայ. տես Review of Reviews 1908ի June, էջք 553-560։

Ամերիկայի հետ վաճառականութիւնն ալ մուտ գըտած էր 1875ին Թուրքահայոց մէջ, և Մինասեան եղբարք ու նմանիք՝ ըրին բաւական բանուկ գործառնութիւններ կ. Պոլիսի և Ամերիկայի միջև՝ մինչև որ գորգի անակնկալ գործն եկաւ տանիլ մեծագոյն համեմատութեանց այս տարաշխարհիկ ու տարօրինակ տուրևաւն ալ՝ մանաւանդ Յովհ. Թաւշանճեանի, Արշակ ու Մինասեան Գարակէօզեանի, Ճշմարտախօսեանի նման ճարտար գործագէտներու և դրամատէրներու ձեռքով։ Յակոբ Մատթէոսեան՝ երբեմն ազգապետ բողոքական Հայոց՝ Ամերիկայի մէջ ուսումնասիրեց մասնագիտօրէն կաղմարարութեան արհեստը, որով կ. Պոլիսի մէջ հիմնեց առաջնակարգ գործարան կաղմարարութեան՝ կցորդ տըպարանով և թղթավաճառանոցով մը։

Այլ այս մեր աշխարհէն՝ ընդհանրաբար խօսելով՝ դեռ շատ հեռու են անդիի աշխարհի տղարները, հսկայ գործերը, երանաւէտ օթեաններն ու հրապարակները, Մորկաններն և Բոքֆէլլերները։











1818 — 1880 — 1890

Անդրի ասդիի բոլոր աշխարհներուն մէջ ալ՝ սակայն՝ Թուրքահայերուն վաճառականութիւնը չէ կըրցած ժամանել արտածական ու ներածական մեծ շահավաճառութեանց, բաց ՚ի քանի մը տուներէ՝ որ ՚ի Զմիւռնա և ՚ի Կ. Պոլիս կըրցած են ցորենի, թիֆտիկի, թուզի, գորգի և նման վաճառքներու վրայ արտածութիւններ ալ ընել ու երկուստեք համեմատական շահուղէններով ընդլայնուիլ բազմազան հրապարակներու վրայ։ Այս կողմէն Կիւլպէնկեանց հին տունը բարգաւաճեցուցած է նշանակելի կալուած մը 1860էն 1900։ Մնացեալ վաճառականք՝ իբր առ հասարակ՝ արտածող երկիրներու մեծ միջնորդի դերը կատարած են Թուրքիայի մէջ՝ ոմանք ճիւղէ ճիւղ, գործէ գործ ոսոստուն անհաստատութեամբ։

Մենք ալ՝ մինչև հոս (1890) ահա կըրնանք հասցունել մեր Զեռնարկը թուրքահայոց հին վաճառականութեան և վաճառականաց վրայ, վասնզի մենք ևս այդ թուականներուն քաշուած ենք առևտր. հրապարակէն, ու չենք ուզեր հեռուէն զննել ու հարցասիրել արդի հրապարակը։ Այդ թուականէն ասդին՝ շատ դիւրին ալ է ո՛վ և իցէ մէկու մը ստանալ պէտք եղած ծանօթութիւնները։

Անկոխ կալուածի մը մէջ իբրև նախաքայլ փորձագիր՝ ունեցանք անշուշտ մենք ալ, այս հակիրճ սեսու-

Թեանց միջոցին, մեր թերութիւնները՝ մանաւանդ կարգ մը վաճառական տուներու մասին մեր կարի՛ համառօտազրութիւններն ու մոռացումներն իսկ, գլխաւորապէս գաւառական շահաստաններու վրայ ժամանակին չհասան մեզի պէտք եղած տեղեկութիւնք, որով գաւառական մասը շատ քիչ բաժին ունեցաւ հոս: Չէինք կրնար՝ մեր բանասիրական քիչ մը երկարաշունչ աշխատութեանց միջոցին՝ հո՛ս ալ ամէն բանի ընդարձակը, ամէնաճիշդն ու անթերին բովանդակել գործնական անամփոփելի յարաճուն ընդարձակութիւն ունեցող այս ճիւղին վրայ, զոր մէկ ձեռքով միայնակ պարագրել անհնար էր մեզի: Ինչ որ մենք՝ գործնապէս ալ անձկացած հասարակութեան մը սիրուն՝ սկսանք համառօտակի, ուրիշ մը, մանաւանդ տուրեւոյի հրապարակի մէջ թարթափող և շահ ունեցող ուրիշ մը՝ կրնայ այլևս աւելի դիւրութեամբ շարունակել լայնաբար գէթ իր և նմանեաց շահուն սիրուն: Եւ օգուտը շատ գործնական կը թուի մեզի:

Եւ արդ՝ ձգելով յետահայեաց ակնարկ մը իբր հարիւր յիսուն տարուան թուրքահայ այս վաճառականաց վրայ՝ կը տեսնենք որ անոնց մեծագոյն մասը չէ կրցած ունենալ տեական յաջողութիւն և յաջորդութիւն որդւոց որդի: Ամէնէն մեծ տունն անգամ 50 տարին անցուցած չէ:

Այս կարճաճօտ ընդհատումներու պատճառները կրկին կերելին. — Նախ արտաքին: Եւ ասոնք են՝ յարաբերութեանց դժուարութիւնք, որ և տարուէ տարի դիւրանալու վրայ են՝ խճուղիներու, շոգենաւերու, երկաթուղիներու, հեռագրութեանց, թղթատարութեանց և սահմանադրական ոգիին աճումով: Նաև սովք, համաճարակք, երկրաշարժութիւնք և հրդեհք:

Սովերու մէջ նշանաւոր եղած է 1829ի սովը, որ մանաւանդ Կ. Պոլիսի մէջ՝ բերաւ սաստիկ նուազութիւն



ուտելեաց և ագանելեաց . խափանեցաւ նաւերու երթե-  
ւելիւր , կոտորեցաւ տուրեառն և քսան տարուան փտած  
կորեակով անգամ մոխրախառն հաց պատրաստեցին ու  
կերան աղքատք՝ քիչ մը ետքն ալ ճաշակելու համար  
մահուան տագոյն վերջին հացը : Ամէն բան նուազեցաւ  
ամէն բան սուղցաւ մայրաքաղաքին մէջ՝ մինչև որ  
բարձրագոյն հրամանով իւրաքանչիւր գնաց մօտաւոր  
քաղաքներէն ճարել պարէն և Կ . Պոլիս բերելով ծախել  
ուզած գինովը , որով սովն և սղութիւնը վերցաւ և վա-  
ճառականութիւնը վերստին շունչ առաւ , այլ յետ անկ-  
ման բազմաց :

Համաճարակներ՝ ժանտախտ և քոլէրա , ընդհանրա-  
պէս հետեանք սովի անզգուշութեանց և անողջպահիկ  
կենցաղի , գործած են պարբերաբար մեծ աւեր 'ի Կ . Պո-  
լիս՝ անխնայ հարուածելով թէ՛ գործ թէ՛ կեանք : 1800-  
էն 1840 համաճարակներու զլիսաւորն եղած է 'ի Կ .  
Պոլիս հինաւուրց ժանտախտը , որ տասն և աւելի ամ  
ընդ մէջ ճարակած է ու տասանորդած քսանորդած բը-  
նակիչներու մեծ մասը : Այս ժանտախտներուն վրայ ըն-  
դարձակ գրած է գիտնօրէն , 'ի մէջ այլոց , Dr. A Bra-  
yer, D, M, P, իր Neuf années à Constantinople La Peste  
երկհատոր գիրքին մէջ (Ֆրանսերէն) , ուր կան նաև Կ .  
Պոլիսի միջնազգային բնակչութեան բարուց , վաճառա-  
կանութեան , թուոյն և կենցաղին վրայ մանրամասն տե-  
ղեկութիւններ ժամանակակցաբար գրուած : Իսկ քոլէ-  
րան սկսած է մանաւանդ 1840էն ետք՝ որ սաստկագոյն  
ճարակեցաւ 1847ին 1854ին և 1865ին , այս վերջին տա-  
րին զո՞ տանելով հարիւր հազարի մօտ այր ու չին : Ա-  
սոր փոքր կրկնութիւն մըն էր 1872ի քորէլան , և այն-  
ուհետև՝ շնորհիւ բարեխնամ կառավարութեան ձեռք  
առած զգուշական առողջպահիկ միջոցներուն՝ գրեթէ  
անհետ եղան թուրքիայէն՝ մանաւանդ Կ . Պոլիսէն՝ ժան-

տախտն ու քուէրան : Բնակչաց մաքրագոյն և դիտնագոյն առողջապահութիւնն ալ քիչ չնպաստեց այս համաճարակներու անհետացումին :

Հրդեհներէն ու սասանութիւններէն (երկրաշարժ) անոնք՝ որ իրենց մեծութեամբն ու բնութեամբը վնասեցին վաճառականութեան՝ հետեւեալք կաւանդուին զլիսաւորապէս :

1818ին այրեցաւ Սկիւտարի պաււնախանէն, ուր կը տպուէին տեղական եազմայ և պասմայ : Ասկէ քանի մը տարի ետքն այրեցաւ Եէնիքարույի պասմախանէն :

1822ին եղաւ ահագին երկրաշարժ՝ ՚ի Բերիա (Հալէպ) և ՚ի Դամասկոս :

1826ին մեծ հրդեհ՝ ՚ի Կ. Պոլիս, որ կը ձգուէր Պանճէ-Գարույէն մինչև Լանկա և Սյա-Սոփիայէն մինչև Սուլթան Պայազիտ. խան, խանութ, տուն և Մայր Եկեղեցին Հայոց այրեցան՝ պատճառելով շատ վնաս և բեկում :

1831ին հրդեհ մեծ ՚ի Բերա և ՚ի Սամաթիա, ուր այրեցան տունք, խանութք, դեսպանատունք և այլն իրր 1600 :

1835ին երկրաշարժ մեծ ՚ի Կեսարիա, որ տեւեց տարի մը և՛ ՚ի մէջ բազմաց՝ կործանեց ամբողջ գիւղ մը :

1841ին երկրաշարժ ՚ի Կ. Պոլիս՝ խանութ տուն և պանդոկներ կործանած, պատճառելով մեծ վնաս վաճառականութեան :

1843ին՝ հրդեհ մեծ ՚ի Կարին. այրեցան 315 խանութ և մթերանոց :

1845ին՝ հրդեհ մեծ ՚ի Սամաթիա, ուր մեծ մասով Հայք վնասեցան. Սամաթիա՝ ՚ի հնուց հնոց է հրդեհի :

1845ին՝ պատահեցաւ Զ ՚իւռնայի մէջ՝ սոսկալի հրդեհ. այրեցան 3500 տուն, որոց ինն հարիւրն Հայոց էր. այրեցան խաներ, բազանիք, մթերանոցք և յլն. համագումար վնասն եղաւ երկու միլիոն ոսկի. և այն ա-

տեն դեռ չկային գրեթէ 'ի Թուրքիա հրդեհի դէմ ապահովագրական ընկերութիւնք: Այրեցաւ նաև տեղւոյն Ս. Ստեփանոս Եկեղեցին՝ իր հազուագիւտ զարդերովն սպասներով ու եկամուտներով:

1846ին՝ մեծ հրդեհ 'ի Յիլիպէ, ուր այրեցան 600 խանութ:

1846ին՝ 'ի Զմիւռնա, ուր այրեցան 100 խանութ: Նոյն տարին դարձեալ 'ի Զմիւռնա երկրաշարժ մը կործանեց շատ խաներ:

Գարձեալ 1846ին՝ Մէնէմէնի մէջ հրդեհ մը այրեց շուկան և պէզէսթէնը: Պերկամայի մէջ այրեցան բոլոր շուկան պանդոկներ և այլն:

Գարձեալ նոյն տարին Ադրիանուպոլիս այրեցան 1000 խանութ և երկու պանդոկ, ու Սելանիկ 2000 տուն և շատ խանութ:

Մեծ հրդեհ 'ի Կ. Պոլիս 1848ին՝ Եէմիշ իսկէլէէն մինչև Սիւլէյմանիյէ ու մինչև Եէնի ճամբ: Նոյն տարին դարձեալ էյրի Գարու և Բերա:

1851ին՝ Խարդալ գիւղն այրեցաւ գրեթէ բոլորովին:

1351ին՝ Սկիւտար այրեցան բովանդակ շուկան, շատ տուներ, բաղանիք և մզկիթներ:

1852ին՝ Սամաթիա, այրեցան 1000 տուն Հայոց և 100 խանութ:

Հրդեհ մեծ Պրուսայի մէջ՝ 1854ին. այս հրդեհէն միայն Հայերը մնասցին 130000 ոսկի:

1855ին՝ երկրաշարժ ահագին Պրուսայի մէջ, ուր կործանեցան շատ շէնք՝ մզկիթ, դամբարան, շուկաներ ու պանդոկներ, և փլատակաց մէջէն հուր ելնելով՝ այրեց 3000 տուն և այլ շէնքեր. 2000է աւելի անձինք մնացին փլատակաց տակ և մնասն հաշուեցաւ 500,000 ոսկի:

1855ին՝ այրեցաւ գրեթէ բոլորովին Գատըգիւղ:



1856ին՝ զարհուրելի փոթորիկ մը ելնելով՝ Սեւ ու Մարմարա ծովերուն մէջ կորան 726 նաւեր :

Նոյն տարին սոսկալի և արկածաւոր հրդեհ մը պատահելով 'ի Սելանիկ՝ 700 հոգի մեռան և 2000 հոգի վիրաւորեցան :

1856ին Հոդոսի ու կրետէի մէջ՝ երկրաշարժը կործանեց փլուց շատ մեծ շէնքեր, 44 գիւղ, Քանտիա քաղաքը, պատճառելով անագին լեաց : Նոյնպէս Սանդուրին կղզին, որ ծածկուեցաւ ծովուն տակ :

1859ին՝ դարձեալ մեծ հրդեհ 'ի Սամսոն : Եւ այս ազիտաբեր հրդեհներուն վրայ 1869ին տեղի ունեցաւ Բերայի մեծ հրդեհը, ուր այրեցան 8000ի չափ շէնք և կորան շատ մարդիկ :

Եւ գաւառներու մէջ ալ ծանօթ անծանօթ շատ հրդեհներ մեծապէս լլուսած են դրամագլուխներու և տուրևառի գործառնութեանց, 'ի մէջ որոց Վանի շուկային (1877) և ուրիշ առևտրական քաղաքներու հրդեհներն Անատոլուի և Բումէլիի մէջ, չհաշուելով ճամբաներու դժուարութիւններն և այլն :

Ասո՛նք դուրսէն :









1880—1890

Իսկ ներսէ՛ն , այսինքն թուրքահայ վաճառականու-  
թեան ընդհատման և նուազումին ներքին պատճառները ,  
ասո՛նք՝ մեծ մասով բարոյակա՛ն են , որ որչափ անտես  
ու զանխուլ են նոյնքան ակներե անկումներ և սպա-  
ռումներ պատճառած են . —

Ներքին այս պատճառաց գլխաւորներն են . —

Անիմաստ անգիտութիւն պատճառաց և արդեանց ,  
նախանձ , մախալից պայքար , ամուրիութիւն իւր սարօք ,  
ժառանգութիւնք , ցուցասէր շռայլութիւն , որոնց մէջ  
են բաղդախաղ սկեպտական յօժարութիւնք և օտարա-  
սիրութիւն : Եւ ասոնց մեծ մասը՝ պտուղ են պակասու-  
թեան հաստատ նկարագիրի և նմանելու անխորհուրդ  
բերմանց :

Թուրքահայք՝ մանաւանդ հին թուրքահայք՝ մեծ  
մասով հաւատացող բաղդի ու ճակատագիրի՝ փոյթ չեն  
տարած իրերու պատճառներու և արդեանց ուշադիր ու-  
սումնասիրութեան , որով կամրանայ ամէն գործ ու ձեռ-  
նարկ :

1870էն ետքն է՝ որ քանի ՚ը անձեր փոյթ ըրին  
ուսումնասիրել լրջօրէն առևտրական հրապարակները ,  
անգլիական ու ֆրանսական բանուկ լեզուները , բարքե-  
րըն ու միջնազգային ընթացքն արժէքներու և արժէ-  
թուղթերու : Այլ ցայսօր չենք յաջողած հիմնել առևտր-  
ական կանոնաւոր վարժարան մը տեղւոյն վրայ , մին

Յոյնք՝ 60 տարիէ աւելի է որ Հէյպէլիի մէջ կառուցած են վաճառական մեծ հաստատութիւն մը :

Անարժան նախանձը՝ լծորդուելով մախացող պայքարին հետ՝ քիչ անկումներ չէ բերած Թուրքահայոց թէ՛ անունին թէ՛ գործերուն, ու այս կողմէն ո՛չ ոք օտարազգիներէն կրնայ մրցիլ իրենց հետ : Այս թերութիւն՝ չարութենէ աւելի տգիտութեան վերագրելի է, որ և հետզհետէ նուազելու վրայ է՝ կիրթ անձնաւորութեանց օրինակովն ու բազմանալով . նախանձը չա՛ր է միշտ, և չա՛րը տգէտն է միշտ, զի չգիտէ թէ բարի բնութիւնը միշտ նպաստաւոր է ամէն գործի մէջ բարի՛ մարդոց, որ բնաբար կը ներդաշնակուին բնութեան բարեբերութեանց : Թուրքահայ վաճառականութեան էական մէկ թերութիւնն ալ եղած է ան՝ որ ուղղակի արտադրող չլլալով նախնական նիւթերու և գործուածներու՝ հարկ եղած է իրեն ապրիլ միջնորդ վաճառողութեամբ, որուն մէջ արհեստապէս մուտ կը գործեն սուտք խոտորմունք և լեզուագարութիւնք քան ճշտութիւնք ճշմարտութիւնք և կըշուաչափ ուղղութիւնք : Այլ ո՛չ երկիր ո՛չ երկինք տեսապէս չեն ներդաշնակուիր սուտերուն և չարերուն հետ . ասոր համար է որ ըսուած է « Տիրեցին ուղիղք ընդ առաւօտս » և թէ « բարի առնի բարեաց և այնոցիկ ոյք ուղիղ են սրտիւք, իսկ թիւրեալքն 'ի յափշտակութիւն՝ զնան 'ի կորուստ » : Սըր Ճոն Լըպոք ալ, որ Խորհրդարանի անդամ և Լոնտոնի առևտր. սենեակին նախագահ է, կըսէ յայտնապէս՝ թէ « գործի մարդ մը, որ միանգամայն ճարպիկ է, պէտք է միշտ մտադիր ըլլայ ամէն բանի մէջ ուղղամիտ ըլլալ » : Ուղղութեա՛մը կրնանք յաղթիլ սուտերուն և միանալ ուղիղներուն հետ, որ միութեանց մշտնջենաւորն է . իսկ սուտին դէմ՝ միշտ պիտի գտնուի աւելի հզօր սուտ մը յաղթող, որուն դարձեալ հզօրագոյն սուտ մը պիտի յաղթէ, և այսպէս մինչև վեր-



ջին սուտը, որ պիտի տագալի հրաշագոր ուղիղին հանդէպ, որչափ աննշան ալ ըլլայ աս: 'Իարձեալ' գիտնական ու համեմատական նեղ խելամոտութիւնները կշիռ աղբիւր դնելով մշտօրեայ շահերու՝ պէտք է յանձնել մնացածը ներքին ու արտաքին պատեհութեան ու տեւել անվնաս, առաջինն հաշուելով միշտ, երկրորդէն յուսալով և զգուշանալով հաւասար շրջահայեցութեամբ:

Ինչպէս Լահէյեան Իրիսով՝ խաղաղութեան դար մը կերևի Յորդ դարը, նոյնպէս պայքարի դար մը եղաւ ըստ մեծի մասին՝ Թրդ դարը, Մեծն Նաբոլէոնէն մինչև Լորտ Բոպերդսն 'ի Թրանսվալ:

Եւ այս պայքարը, զոր կապիկ ու աշխարհիկ իմաստասիրութիւն մը նուիրագործեց կեանքի պայքար անուանով, բնական էր որ մուտ գործէր վաճառականութեան ալ մէջ: Հայ վաճառականք ալ նմանողաբար ետ չմնացին այդ պայքարի մասին, և լծուելով ասիական հրապարակներու մէջ տիրող կիրքերուն և խորագիտութեանց՝ եղաւ ան նախանձաւորութենէ տարբեր յոյժ տարբեր մախացող պայքար մը: Նախանձիլ ընկերին յաջողութեանց և հարստութեանց վրայ, զայն ընկճել ըմբասել քուն գլխի ջանալ բարի միջոցներով, վարկարկել ընել, քարընդոտնել, վերջապէս ետ ձգել ու վնասել՝ ընդհանրապէս ա՛յս եղանակով ըմբռնուեցաւ և գործադրեցաւ Հայոց մէջ այդ պայքարը: Հա՛րկ է ըսել՝ որ այդպիսի կռիւի մը արդիւնքն ալ չեղաւ օգտակար բան մը, և այսօր անկեալ տուներու և հարստութեանց գէթ քառորդին կործանման պատճառն է այդ անընկերակաւ մախանքը:

Այլ մենք կրտսնք՝ ի՛նչ փիլիսոփայութեամբ ալ որ գեղերեսուի, կապիկ թէ սկեպտիկ, պայքարն էապէս լաւ բան մը չէ թէ՛ առանձնական թէ՛ հանրական տեսակէտով, քանի որ միշտ կենթադրէ սկզբամբ միուն

բարձրացումը միւսին անկումով կամ, աննկատաբար, երկուատեք կործանում. և քանի որ կռուելու պայքարելու համար չէ՝ որ աշխարհ եկած ենք այլ բանաւորապէս ապրելու համար: Անդո՛րր, ընկերասէ՛ր, պաղարի՛ւն, տրամախոհո՛ղ գործունէութի՛ւնն է՝ որ Պօղոսի՛ն ալ Սօղոսի՛ն ալ Ապօղոսի՛ն ալ հաւասարապէս օգտակար կըլլայ, ուր և առաքինութիւնը բարութիւնն անշուկ անաղմուկ յառաջ կերթայ և վատութիւնը չարութիւնն ՚ի սկզբանէ իսկ չկրնար ասպարիզել: Մարգկային ընկերական բնութիւնն անգամ՝ գլխովին անհա՛շտ է կռիւի գաղափարին, և ուր կիրք ու կռիւ կը գործեն, հոն կարգ, յառաջդիմութիւն, բանականութիւն և երջանկութիւն գործ չունին:

Վաճառականութեան նման յարաբերական ու հաղորդական գործ մը՝ ամէնէն ա ելի կարօ՛տ է խաղաղիկ ընկերական ոգիին:

Անձնասէր ու շուայտ ամուրիութիւնն ալ այն ներքին պատճառներէն է, որ կը վատնն վաճառականութիւնը, և մերոնց մէջ բաւականէն աւելի ճարակած է այս վիճակը՝ կեանքի սխալ ըմբռնումով և արեւմտեայց շեղեալ ու ապօրէն կողմերն օրինակելու մտահաճութեամբ: Պէտք է միանգամ առ միշտ գիտնալ՝ որ ամուրիներու համար շատ ամուլ է վաճառականութիւնը, չունենալով ճշմարիտ յաջորդ ու գաղտնեկից մը՝ զաւակ կամ փեսայ. այս անբնական վրիպակը գործած են մեր հին վաճառականներուն մեծ մասը, որով և օրինաւոր յաջորդութիւն մը չեն ձգած յետոց: Արդի՛ մանաւանդ եւրոպացեակ՝ հայ վաճառականներէն ոմանց համար ալ կիմանանք վերջերս որ իրենց հաշուած, դիզած, ժառանգած հարստութեանց կարեւոր մասը՝ սովորած են պարբերաբար երթալ վատնել Բարիզի ու նման քաղաքաց հաճոյքի ատեանները: Ատոնց համար կարեւոր է

անգամ մը յետահայեաց ակնարկ մը նետելով՝ նկատել նախորդ վաճառականներու ամուրի մասին վախճանն և գործերուն ելքը . ո՞րն անոնցմէ շէնք շնորհք տուն տեղ մը ձգեց, ո՞րը շնորհքով կտակ կամ բարերարութիւն մը, ո՞րը գութի արձան մը և կենդանի անուն մը կենդանի յաջորդի մը վրայ, որ տեսակ մը անմահութիոն է պարկեշտ ու բնական սահմանի մէջ :

Ընդհակառակը՝ ժամանակին կոկիկ ամուսնութեամբ տուն տեղ եղողներն և զաւակաց ու եղբարց փորձառու պէս առաջնորդողներն՝ յաջողած են հիմնել աւելի հաստատուն գործեր ու շարունակել քան անոնք, որ աջէն ձախէն ամէն տեսակ հրապոյրէ ու հաճոյքի թակարդներէ ըմբռնուած միանգամ՝ չեն կրցած ՚ի դէպ ժամանակին հիմնել իրենց և յաջորդաց համար նուիրական բոյն մը կեդրոնացեալ ու կեդրոնացուցիչ :

Այս կողմէն՝ Հրեաներն՝ այն ահաւորապէս լուրջ երկիւղած ու պահպանողական ժողովուրդն որչափ գտնուեց և օրինակենք՝ քիչ է, անոնք՝ Բոչիլտի այդ եղբայրներն՝ էին որ Լոնտրայի մէջ չբարոյ ամբողջ թաղ մը մաքրեցին յարոյացուցին իրենց ամուր օրինակով և արժանացան անգղիական մեծ հանդէսներու<sup>(1)</sup> հրապարակային գովեստիցը : Գարձեալ Հրէից մէջ է՝ որ մնանկութիւնք հազուադէպ են, ու այդ ոգիով տիրած են իրենք՝ առաջին դարէն մինչև ցայսօր՝ աշխարհի բովանդակ դրամական ու վաճառական հրապարակներուն՝ Ջիւնաստանէն մինչև Ռուսաստան, Ամերիկայէն մինչև Աւստրիա-Հունգարիա, Հռոմէն մինչև Աղեքսանդրիա ու Գահիրէ և Հնդկաստանէն մինչև Աւստրալիա՝ մանաւանդ երկրորդակարգ վաճառումներու և սեղանաւորութեանց մէջ, պահպանելով իրր ամէնուրէք իրենց պահպանական կեքոն և Մովսիսական օրէնքն աննկուն :

(1) Մանասնդ 1905 թի Review of Reviewsներուն մէջ :









1880—1890

Քրիստոնէական Սէր-Կրօնքին թոյլտուութիւններն այսքան ծայրերը տանելու էին մերօնք, որ կը շահավաճառեն՝ Հրէից հակառակ՝ ամէնէն քրիստոնեայ և պարկեշտ երկիրներու մէջ։ Այս կողմէն ո՛րչափ գովենք մեր գաւառացիներուն մեծ մասը՝ կարժէ. ա՛ս է իրենց՝ Պոչսեցւոց վրայ յառաջդիմ յաղթանակներուն գլխաւոր պատճառն ալ։ *A bonne semence, bonne récolte*, Բարի՛ ցանկը րարի՛ հուճկ կը բերէ։ Նոյն երեոյթը կը նշմարուի նաև մեր բժիշկներէն շատերուն վրայ, որ իրենց նիւթապաշտութեան հաւատարիմ երկրպագու յախտե՜նական՝ նիւթ ու մարմին կտրած նիւթ ու մարմին կը պաշտեն սկիզբէն վերջ, առանց հոգիի և ինչի որ հոգիէն կը բղխի. բազդատեցէ՛ք մանաւանդ ամուրի բժիշկներն ու ամուսնացեալ բժիշկները։

Ամուրիութեան վիճաններուն ամէնէն շօշափելի ցոյցը տուած կըլլանք՝ երբ ուշադրել տանք Կ. Պոլիսի հիւանդանոցին մշտական երեոյթը. հոն պատասպարեալներուն՝ խաթէր համար պաշօնեայ, ծեր, հիւանդ, անկար, անկեալ, արտուղեալ, որբ, անառակ և այլն և այլն՝ եթէ ոչ ամէնը, գէթ մեծ մասն ամուրիներ ու ամուրեաց զորերն ու բարեպտօ՛ւղներն են, որ այդքան ծանր և անթեթեմանալի բեռ մը եղած են ժողովուրդին վրայ և բահերարութիւնը կը շեղեցունեն պաշտօնապէս, մե՛ղք ի

վերայ մեղաց, պարտք ի վերայ պարտուց, կահ ի վերայ կահուց :

Հապա՛ կուսակրօն ամուրիներու հրապարակը. Աստուած անփորձ պահէ անո՛նց ալ նուիական բիւացան, որ օր մը՝ գէթ օ՛ր մը միայն հազար տարուան մէջ՝ Ս. Սահակով մը կամ Ս. Ներսէս Շնորհալիով մը փոխարինեն հանրութեան վրայ իրենց ծանրացուցած պճղնաւոր բերք . . . :

Վաճառականութիւնը վատեցունող միւս պատճառ մըն է ժառանգութիւնը, որ կիյնայ հօրմէ կամ մօտաւոր ազգականներէ գործի անվարժ չորիկ աշխարհիկ ուտողներու՝ անկարող գործ մը հիմնելու կամ շարունակելու և իրենց կտակողին սարքուած գործը կանոնաւորապէս բանեցունելու : Ի՛նչ քրտինքով շինուած հիւսնուած արուեստական ու վաճառական առուներ՝ քայքայուած են այսպիսի պատրաստ ուտողներու ձեռքով . որպէսզի իրենց քրտա՛բն ու հանճարով հարստացող հարց որդիք մսխող, վատնող, աւերող, անդոյր և պանդոյր չըլլան՝ լաւագոյն և կանոնաւորագոյն է կրթել մեծցունել անոնք իրենց հարց և պաշտպաններուն անցած նեղ ճամբով, կամ անկէ նուազագոյն չափ լայն ճամբով մը՝ միշտ հսկողութեան ներքեւ, և ճախարակել այնպիսի կաղապարի մը վրայ՝ որ հեռի ըլլայ լայն այն արահետներէն, որոյ նմոյշները կը փալփիին Բերայի շիտակ ճամբէն մինչև երրօրական մարաքաղաքներու մեծ ու պերճ պուլը-վառները . . . :

Ասոնց կցորդ կուգայ միամիտներուն ցուցասէր շքուսլութիւնը, հագուստի, կապուստի, ճայի փետուրներու, երեկոյթներու, պալտներու, թաարերու ևյն ևյն . ծայրայեղօրէն սիրահար, որով կը դառնան կըլլան ունայնութեանց գնայուն մոստրաներ՝ ի վնաս իրենց հօր, ամուսնոյն, եղբոր և այլն : Գիւղական և արուարձան-



հայ բնակարանք՝ մեկուսացման զգաստութեան և տնասէր իմաստութեան մեծ դեղեր են այսպիսեաց համար : Ասո՛նց համար ալ դարձեալ՝ օրինակելի ուղղիչներ կըրնան ըլլալ Հրեայք ու գառառացի Հայք : Կ. Պոլիսի մէջ հետզհետէ պարպուելու վրայ են բնական վայելչութեամբ, օղով, ջուրով, շուրջ պարտէզով և ծառատանով, դրախտացեալ և աժա՛ն վայրերը, և գլուխն առնողը՝ Բերա կը վազէ. Բե՛րա՛ այս է Պոլսեցի ցուցասէրին Օմեղան, և անկէ անդին՝ Բերացիք թո՛ղ պատմեն՝ (եթէ գտնել կարենան իրենց արուեստական այդ դրախտին մէջ) նոր փրցուած յոյսի կոյս և կանաչ տերև մը ի ձեռին :

Անցնի՛նք անցնի՛նք Բերայէն՝ բազդախաղի սեղաններուն քով. Տէ՛ր իմ, ի՛նչ գիշերներ լուսցուած, ի՛նչ գրպաններ պարպուած, ի՛նչ գայթազղութիւններ խափուցուած : Եւ հետեւեալ առաւօտուն՝ մինչ արևը վից ժամուան ասպարէզ առած է և Հաճի աղան եօթը ժամ է գործի սկսած՝ իր հսկա՛յ դրամագլուխին մանրամասնութեանց գլուխը՝ մեր ժառանգորդը կամ միւսի Օննիկը դեռ նոր աչուրները շփշփելով՝ առջի գիշերուան անուրջները կը տրորէ՛ ու կը տրորէ՛, ժամու մը արդուզարդէ ետք հազիւ 7 կէսին ինքզինքը ճաշարա՛ն նետելու անկէ 8<sup>1</sup>/<sub>2</sub> ի՛ն իր գործին, մեղա՛յ՝ իր ժառանգա՛ծ գործին վրայ երերուն և երազուն ստուեր մը ձգելու, և արձակելու քանի մը ջղագրգիռ հրամաններ իր յապուշ կրթեալ կամ երես ելած ստորագրեալներուն, երեկոյին դարձեալ նոյն ողբերգական կատակերգութիւնները շարունակելու համար, միւշե որ լրմննայ ամէն բան, մինչև առած դրամածիսն անգամ՝ եթէ դժբաղդաբար հանչցած ալ է Հիմէնը. և դարձեալ դժբաղդաբար՝ այսպիսիները բացառութիւն համարուելու չափ քիչ ալ չեն՝ մանաւանդ Կ. Պոլիս, Զմիւռնա և Աղեքսանդ-

րիա : Ահա այսպիսիներն՝ որ իրենց ամօթն զգալու չափ  
թագուն ալ են և կազմած են հայ-լայֆական թագուն  
չըջանակ մը անմատչելի՝ ունին միակ պատասխան մը ,  
«կեանքը չվայելենք» կրանն . — վայելեցէ՛ք , բարո՛վ  
վայելեցէ՛ք , բայց այդ չէ՛ կեանքը , այլ բուն կեանքին  
մէջ՝ կեանքէ դուրս երեւկայական կեանքի մը ակեղ-  
ցըրփեղ ներկայացումն է ադ — :

Սկեպտիկ յօժարութիւնք — ահա ինչ որ շատ ընդ-  
հանրացած են մանաւանդ արդի սերունդին մէջ և կա-  
ռաջնորդեն անել արահետներու անոր առ խարխափ ըն-  
թացումները : Սկեպտիկն , այսինքն՝ տարակոյս կամ  
ուրացում իրական սքանչելի գոյութեան և զայն վա-  
րող մեծ Բանին վրայ , տարակոյս կամ ուրացում ինչ  
գեղեցիկ և հինաւուրց յոյսերու որ կան և կաղեն կը  
համեն այդ գոյութեան տխուր թուած կողմերը : Տա-  
րակոյս և ուրացում վերջապէս իրաւունքի և արդա-  
րութեան , որոնց փոխա՛ական են իրենց վրայ ա՛րար-  
տաւան ինքնասիրութիւն , կարկատուն քմահաճոյք ,  
անամէջ բերմունք և շինծու հաճոյքներու մարմաջ մը ,  
որ հանապազօր կը սնանի հանդէսներով , պարահանդէս-  
ներով , ֆրանսական յօղուածոյ բաց վէպէրով և սալոն-  
ներու զգլխիչ կտորրտուութիւններով : Եւ ասոնց անմիջա-  
կան հետեւանք կըլլան գործի մէջ հաւատքի և արիու-  
թեան , մարդասիրութեան , ծնողական , ամուսնական ,  
որդիական և ազգականական պարտուց բացարձակ մո-  
ռացում և խրատեաց օտարասիրութիւն , որ են ճշմա-  
րիա քարոյական սնանկութիւն , որոց ետեւէն ալ յուտ  
կը հասնին նիւթական սնանկութիւն : Այսչա՛փ պարզ  
ստոյգ և բանաւոր կեանքի մը մէջ՝ այդչափ բարդ ան-  
ստոյգ և անբանական ստուերակեցութիւն մը՝ որպիսի՛  
խաւար անդունդներու կառաջնորդէ զիրենք՝ բանիմաց-  
ներո՛ւն ֆեանիչներո՛ւն կը թողունք ուսումնասիրել :

Եւ այսքան փորձութիւններու ընդդիմակներու առ-  
ջեւ կռուելու չափ՝ կարժէ՞ ինչ արդեօք վաճառակա-  
նութիւն ըսուածը :







1880—1890

Եթէ ըստ մեծի մասին ա՛յդ ընթացքով շարունակէ՝ յովտ մը անգամ չարժեր: Հետաքրքիրներէն անոնք որ Ս. Գիրքին կարեւորութիւն տալու մը աստիճան երկիւղած ալ են, թող կարգան մոլի և ամբարտաւան վաճառականութեան վրայ Եսայիի մարգարէական պատգամները՝ մանաւանդ ԻԳ. գլուխին մէջ, նմանապէս Եղեկիէլի ԻԷ. ԻԸ. գլուխները՝ Ողբի ի վերայ Ծուրայ եւ ի վերայ իշխանիճ Ծուրայ: Վաճառականութիւնը, մանաւանդ այդ մակարոյժներէն զերծ վաճառականութիւնը, կրնայ տալ մեծ դիւրութիւններ ընկերական ցարց մեղմացումին, բարի ու խաղաղ յարաբերութեանց, հանգիստ և պատուաւոր կեանքի, գիտութեանց և բարոյից դարգացման: Վաճառականութիւնը, մանաւանդ մանիֆաթուրայի արդա՛ր վաճառականութիւնն՝ երկրագործութենէն ետք՝ առաջին ազնիւ ու ազնուացուցիչ արհեստն էր մեր բարի նախնեաց, նահապետաց: Վաճառակա՛ն էին Աբրահամ, Յակոբ, Յովսէփ և Յոթ, և աս՝ արգելք մը չեղաւ իրենց միանգամայն ըլլալու գիտութեանց, տանուտիրական մեծութեանց, տո՛նմային նահապետութեանց, իշխանական ազնուականութեանց և տնայար արդարութեան ու համբերութեան ռահվիրաներ, աստուածպաշտութեան և տո՛նմասիրութեան աստղեր: Հիներուն ամէնէն ազնուական իմաստասէրը, Պղատոն, որ երբեմն ոսկին ու առաքինութիւնն իրարու հետ հա-

կակչիւ կը հռչակէր, գովեստը կը հիւսէ տարազագործական ոստայնանկութեան և վաճառականութեան, և զայն իբր օրինակ կը բերէ արքունի հեղինակութեան և վարչութեան<sup>(1)</sup>: Վաճառականութեամբ տեսակ մը ապահարկ պատիւ և արձակութիւն ձեռք բերին Հրեայք՝ նոյն իսկ Հռոմի պէս խիստ ու այլատեսաց կեդրոնի մը մէջ<sup>(2)</sup>, ինչպէս և վերջերս ի Բրիտանիա<sup>(3)</sup> և ի Չինաստան: Վաճառականութեամբ Սամուէլ Մուրատ, Ղարամեանք, Սէթ Արգարեանք և Նուպարեանք մեծացան ի Հնդկիս և յԵգիպտոս, ու կըրցան ա՛յնքան բարութիւն կտակել իրենց յաջորդացն ու հասարակութեանց: Վաճառականութեամբ նշանաւոր հանդիսացան հին Հայերն իբր ամենուրեք՝ աշխարհի չորս մասանց վրայ. բայց անոնք առանին ու ընկերական շատ բարեմասնութեանց վրայ՝ ունէին նաև միադիկ այն աղուանուշ հոգին, որ կը ներշնչուի կրօնքին վճիտ և խորունկ ալքերէն, որ կուղղէ մարդը մահկանացու երկնային ուղղիչ քանոնով մը և որ՝ հակառակ արդիականաց ոմանց վերացական ու անգործնական ըսելուն՝ կուտայ շատ իրական ու գործնական արդիւնք, սա տարբերութեամբ որ այդ արդիւնք շա՛տ ուէքլաւաւոր և պոռոտ չըլլալնուն համար՝ անտես, կը թուին այդպիսեաց համար նաև անգոյ, վսեմ գոյութեանց ճակատագիրն ա՛ս ըլլալով՝ ի պատիժ թերեհաւա՛տ կուրութեանց . . . :

Վաճառականութիւնն՝ ահա ա՛յս ձևերով և միա՛յն այս ձևերով՝ կարժէ բա՛ն մը, մեծ բան մը, մանաւանդ Բիւզանդիայի պէս գաւառի մը ու կ. Պոլիսի նման քաղաքի մը՝ երկրագործութեան և վաճառական յարաբերութեանց բարեղէպ վայրերուն մէջ:

(1) Պրատոն՝ Բաղախականութիւն:

(2) Թ. Մոմզըն Պասնուրիւն Հոռմեական, Գիրք Ե. ԳԼ. 11:

(3) Անգլիայի մէջ հրեայ լորտերու թիւն ցայսօր եօթնի հասած է:

Վասիորի երջանիկ նեղուցն՝ աջէն Եւրոպան ձախէն Ասիան համարուելով՝ որ երկրաբանական կամ արուեստական խլրրամանց բերումով կը ձգի ալ Սեաւ ծովէն դէպի Մարմարան ու Եգէականն՝ օժտած է վաճառական յարաբերութեանց այս երկու լոյծ հրապարակները, իրենց ճոխութեանց գեղեցկութեանց ու պէսպիսութեանց վրայ, վազեմի նեղոսէն տասընպատիկ աւելի նախամասնութիւններով և զիւրահազորդ շախիղներով։ Այսպիսի յարմարադիր չըջալայրի մը մէջ ալ՝ Հերմեան այն աղամող ցանցն, որ Կ. Պոլիսի երկրորդ բլուրին վրայ ինկած՝ Սիրքէճիէն մինչև Պայազիտ, Զընտան Գաիուլէն դէպի Թավուզ Բազար տուրեառի բանուկ առեան մը յարդարած է, ոլորտապտոյտ վտակներու մէջէ հաւանաբար տարին 12,000,000 ոսկիի ոգևորեալ առևտուրներ մը կը տաղաւարէ, ու կրնայ ապրեցունել կերակրել լիութեամբ առնուազն 2000) հոգի. նոյնը կըրնանք ըսել Աղեքսանդրիայի փիւնիկ նաւահանգիստին և կիսով չափ Զմիւռնայի զմրուխտ Ծոցին համար։ Այս դիպող կեդրոններուն մէջ՝ Թուրքահայք ինչ համեմատական յառաջդէմ գնացքի մէջ են՝ չենք կըրնար սահմանել առայժմ ճշդութեամբ։

Բայց կըրնա՛նք ամէն վստահութեամբ ըսել՝ թէ անոնք շատ ետ կը մնան Հրեաներէն և Յոյներէն, որոց առաջիններն իրենց արդարամէտ այլամերժ ու անշշուկ չարքաչուութեամբն<sup>(1)</sup> և ահաւոր զղծութեամբ և միւսներն՝ Յոյները՝ ճարպիկ ճկուն և զգայնիկ կրթութեամբ ու իմաստասէ՛ր քրիստոնեա՛յ խոր բերումներով՝ գրաւած են գերազանց դիրք մը թէ՛ մեծ վաճառականութեան թէ՛ սեղանաւորութեան թէ՛ մանր մունր առևտուրներու մէջ, ու մեր թուրք երկրակիցները՝ մանա-

(1) Կ. Պոլիսի ամէնէն հարուստ հրեայն՝ հայ Կենաֆի մը հաւասար ծախքով կապրի տունով տեղով։



ւանդ վերջին տարիներս՝ իրենց դատողական գիտութեանց և տեղական պարզուկ արուեստգիտութեանց վրայ աւելցուցած են վաճառական ժրութիւն մըն ալ գործնական, զոր սերունդ մը առաջ գրեթէ բնաւ չունէին։ Իր հին աւանդական բեղուն բարեմասնութիւնները տակաւ թօթուող մերկացող Հայն ալ՝ փոխան օրինակելու և րոպայի ժողովորդներուն աւելորդ գիտութիւններն ու վարելակերպն՝ եթէ ջանայ նմանիլ տեղացի այս Յունաց փափուկ ճարպիկութեանց և ջերմեռանդն համերայխութեանց, Հրէից տոկուն և մանրահաշիւ գործունէութեանց, Թուրքաց պարզ և ուղղամիտ կենցաղին՝ լաւագոյն և հաստատագոյն բան մը բրած կըլլայ կարծենք. « Լաւագո՛յն է անմիտն և իմաստնագոյն՝ ի տան իւրում քան իմաստունն ի տան այլում » . ասո՛նք մե՛ր տունին մե՛ր հրապարակին մարդի՛կն են . ասո՛նք եւրօպացիէն աղէկ գիտեն մեր գործատեաններուն պարտն ու պատշաճը։ Պէտք է ասո՛նց նմանիլ։

Վաճառականութեան պարապող անձանց պարտ է նաև չըսպասել կեանքի վախճանին՝ գործէ քաշուելու համար. պա՛րտ ու բանաւո՛ր ալ է՝ գէթ 60էն ետք՝ քաշուիլ գործէ, և հաւատարիմ ստորագրելոց յաջորդաց կամ որդւոց յանձնելով դայն՝ տալ զինքն աւելի՛ աղնուական ձրի գործերու, աւելի՛ կեանքի պտղաբերութեանց. ու այսպէս շարժողներն՝ աւելի՛ բարերազդ եղած են քան անո՞նք՝ որ մինչև վերջը Մամոնայի ջերմ պաշտօնեայ՝ Մամոնայի աղժկայից սրահներու մէջ աւանդած են իրենց հոգին՝ ոչ այնքան արժանի երկարակեցութեան։ Սաչիկ և Յարութիւն Ռափամամճեան, Մանուկ Սմբատեան, Սենեքերիմ Մանուկեան, Յովհաննէս Յակօբեան ու նմանիք աւելի՛ իմաստութիւն ցուցած են այս կողմէն՝ քան միւս հին թուրքահայ վաճառականք. ծերութիւնն ալ՝ ըլլայ միջակ ունևորութեամբ՝ հարս-



տութիւն մը, մանաւանդ կեանքի հարստութիւն մըն է  
երբ անդորր ալ ըլլայ :

Վաճառականութեան մէջ նկատելի սկիզբներէն մին  
ալ է՝ կենալ իր վարժուած շրջավայրին մէջ և փորձա-  
ռութեամբ աշխատիլ մենագրադ ի՛ր գործին միայն և  
անկէ ըմբռնել երբեմն բաղդն ալ, որ կը լեցունէ ի դէպ  
ժամուն շահ և զէնի թերոյթները՝ « փոխ ջաշով շատ  
բան, այլ պարգևելով և ո՛չ ինչ » ըստ հին առածին :  
Աւելի ձեռներէջներու համար լաւ է գաղթականութիւնը՝  
փոքր կեդրոններէն դէպի մեծ կեդրոն :

Դարձեալ՝ սկիզբէն մեծ վաճառականութեան զբա-  
ղիւն ու մեծ դրամագլուխներու հետ լսադալն աղէկ  
վախճաններ ունեցած չեն :

Ինչքն ու ճարտարութիւնը՝ փոքր դրամագլուխնե-  
րով լաւագոյն գործեր դարձունելուն և շահելուն մէջն  
է. փոքր ու նեղ առևտուրներու մէջ փոքր հասակէ  
վարժուողները՝ փոքր դրամագլուխով անգամ կըրցած են  
շարունակել տեւել ու մեծնալ աստիճանաբար՝ աշխատու-  
թեան փորձառութեան և լրջութեան ամուր հիմերուն  
վրայ հաստատուած :


Այսօրուան Կ. Պոլիսի բիացային վրայ շատ են ա-  
նոնք՝ որ մանրավաճառութեամբ արշըննիութեամբ սկսած՝  
եզած են մեծկակ դիրքերու տէր, ու կը տեսն աւելի ա-  
պահովութեամբ այդ դիրքերուն մէջ քան ի սկզբանէ  
բաղդէն նպաստաւորեալներն ու ժառանգաւորեալները :  
Եւ աս է՝ գործն իր այբբէնգիմէն սկսիլը : Պէտք է  
նաև տարևառի ընթացքին մէջ՝ ընդունել սա մարդա-  
սիրական ու գործնական սկիզբը թէ իրաւապէս ու  
անկեղծութեամբ հաշիւի առնելու է միշտ գնորդի՛ն  
ալ օգուտը, և հոս է մեծ գաղտնիքը վաճառողի՛ն ալ  
օգուտին :

Հիմնաւոր առաջնորդութեամբ վարժութեամբ և ուղղութեամբ սկսողք շարունակողք՝ կրթցած են յաջողիլ իբր անընդհատ վաճառականութեան նման հաշուելի ու բազմադէմ գործի մը մէջ, և անոնք որ ըստ բերման ժամանակաց և ըստերիւր սկսած և աջ ու ձախ շեղած են շահադիտարար՝ ըստ բաղդի ըստ ժամանակաց և ըստերիւր ելեւջններով նուազած վատած ու ինկած են:


Նոյնպէս՝ ճարտարութիւնն և արուեստը ձախողաբար խարելուն մէջ կարծողները՝ դժբաղդաբա՛ր թէ բարեբաղդաբար ամէնէն մեծ զոհերն եղած են իրաց հանրական անխաբ ու անաչառ գնացքին: Սարելն՝ հիմնապէս ընդդէմ է վաճառական ոգիին, ինչպէս բնութեան մէջ ամէն գործի. արեգակէն սկսեալ մինչև լոյսի յետին շամանդաղն՝ իրենց յաւիտենից լնթացքին մէջ չեն խաբեր, նա՛ միշտ արեւելքէն ճիշդ ու անխաբ կէտէն ծագելով և լուսաւորելով, սա՛ միշտ լոյս և ճշգրտութիւն նշողելով ամէնայետին հիւլէին անգամ. և ըստ այսմ՝ խաբողներն ամէնէն աւելի խաբուողներն ալ եղած են բնաբար: Սարել առգնողը, խաբել՝ վաճառողը, խաբել՝ ընկերը կամ պաշտօնեան, խաբել՝ վերջապէս ազգականն ու իր բարին մտածող միամիտը, այս ամէն խաբէութեանց գործօնեաներն՝ ո՛չ ապաքէն կը խաբուին իրաւապէս ամէնէն մեծ ճշմարտութենէն ամէնէն մեծ ու անխաբ ատեանէն, կարծելով թէ իրենց խաբէութիւնները շտեմներ մեծ Աչքն՝ որ անողոք է ու անաչառ որ կը տեսնէ ամէն բան և կը խաբէ իմն ամէնէն վարպետ խաբեբաներն անգամ շատ ճշմարիտ դիւրութեամբ՝ կարծեցունել տալով անոնց թէ ինք շտեմներ իրենց խեղճ ու կրակ խաբէութիւնները: « Ա՛յն իսկ վարձք նոցա »: Մեր ստոյգ հանճարին և ճարտարութեան վրայ շատ տխուր գաղափար մը տուած կըլլանք՝ երբ խոստովանինք որ ստիպուած ենք ապօրիլ ու մխիթար-


ուիլ յաճախ սուտով, շահիլ յաջողիլ սուտով. բաբէ՛, սուտին շահն ու յաջողութիւնը կըրնա՞յ ճշմարիտ ըլլալ: Մեր մէջ ալ կը գտնուին ճարպիկ կարծուածները, որ սովոր են « ո՛չ » ի շեշտով « այո՛ » մը ըսելով՝ կարգադրել կարծել ամէն գործ՝ որ իրենց կը ներկայանայ, մանաւանդ իրենց ազգակիցներուն կողմէն, և այդ բացասական շեշտին միայն հաւատարիմ մնալ: Մէկ երկու երեք՝ կը յաջողին այդպիսիք պատրել դիւրախարները, բայց անկէ անդին՝ յայտնուած ամօթն յաւիտենական, կորո՛ւստը վարկի, այդ երկու երեք յաջողութիւնները՝ կըրնա՞ն փոխարինել ասոնք: Չէ՞ մի որ վերջապէս ու յաւիտենապէս իրենք խաբուած ու պատժուած կըլլան այդպէս:

---









## Վ Ե Ր Զ Ա Ր Ա Ն

Բազմագէտ ու բազմաշրջիկ Եւրոպացի մը՝ քանի մը տարի առաջ՝ յայտնելով հանդերձ իր մասնաւոր համակրութիւնն Հայոց վերաբերումով՝ կըսէր մեզի « Բովանդակ Փոքր-Ասիան ու Կ. Պոլիսը մեծ մասով պըտըտեցայ և իմաստասիրեցի ու դիտեցի որ Հայք շահու համար ամէն բան կընեն, այո՛, ամէ՛ն բան. և ան՝ աղէկ նշան մը չէ. ես Հայերը սիրելուս համար կըսեմ ձեզի զայս »: Շահու կամ ստակի համար ամէ՛ն բան. Աստուած իմ. ըսել է չենք խղճեր եղեր գործել ամէ՛ն մեղք՝ մեղքին ամէնամեծին՝ աւելաշահութեան Մամոնայի<sup>(1)</sup> համար. եթէ վկայութիւնը բարձրէն գիտուն

(1) Մամոնայի ու աւելաստացութեանց ինքնակործան յիմարութեան վրայ սքանչելի՛ կըսէ Օրթոտոքս մեծ եկեղեցիին մեծ Դեմոսթէնը, Յ. Ոսկերբերան, զոր ուզողը կըրնայ աշխարհաբառի թարգմանել տալով հասկընալ մամոնայի աշխարհին բո՛ւն վիճակը.—

Ի սովոյ հարկէ չգիտեմ վայրապար զոք վախճանեալ. բանգի մարմի բազում ինչ յամենայն կողմանց հնարել այնմ աղետից մխիթարութիւն. իսկ վասն ընչից և մեծութեան և այնպիսի շահաւորութեանց ըզբազումս իսկ ցուցանեմ բեզ կոտորեալս, զոմանս գաղտ և զոմանս ի հրբապարակի, և բազում այնպիսի նշանակօք լի են ճանապարհք և ատեանք և հրապարակք. նաև զծովն իսկ լցեալ արեամբք տեսանիցես: Զի ո՛չ զերկիր միայն կալաւ այն բռնութիւն, այլ և զհամատարած անդունդսըն աղխաղխեաց ելից բազում անօրէնութեամբ. ոմն նաւարկեալ շրջի վասն ոսկւոյ, և ոմն սպանանի վասն նորին, դարձեալ նոյն բռնութիւն զոմն ընչաւէտ արար, և զոմն սպանողի Եւ արդ զի՞նչ չյուսալի բան ըզմամոնայն կայցէ, յորժամ վասն նորին և տար աշխարհս հարկանիցես,

մարդէ մը չի դարձնում կը հաւատար իր տոհմին վրայ  
այսպիսի չարագուշակ լուրի մը . . . :

Ըսենք ապա վերջապէս ու կարեկցապէս՝ թէ մեր  
մէջ այս մեղքին գլխաւոր աղբիւրն է կոյր տենչ մը  
նիւթական մեծութեանց. ամէն ոք մեծ մասամբ՝ մինչև  
երբեմն յետին գեղջուկը՝ կուզէ ըլլալ քաղաքացի ու  
հրամանահան. ո՛չ ոք գիւղացի բայց միայն բժշկին  
խորհուրդով, ան ալ՝ ամիս մը երկու ամիս միայն, և  
անգամ մը բանը բանէն անցնելէն ետք. ամէն ոք ըլ-  
լալ կուզէ հարուստ քսակով, ո՛չ ոք սիրտով և մարմի-  
նով, ամէն ոք պատրիկ ու մագիստրոս, ամէն ոք գը-  
րագէտ, ոչ ոք արհեստագէտ ճիշդ և գրագէտ ու բա-  
նասէր խոնարհ. շա՛տ ոք Աստղիկի սիրեցեալ ու կրե-  
ստի փեսայ և շա՛տ ու շա՛տ սքուհի Ապողոնի հարս  
դիցունհի՛ : Եւ այս մեկաշումանի՛կն բռնուածնեբուն  
մեծ մասը՝ կը սոնքայ կը ճեմէ կը ճախրէ անխիղճ  
դուրսե՛րն իրեն արժան այն յատուկ փակարանէն, ուր  
կարծեօք խեղճ արտուղիները դատապարտուած են չար-  
չարուելու անլուր անբողոք . . . և սակայն ճշմարիտ  
պարկե՛շտ մեծութիւնը վաճառականութիւնն և ազնի՛ւ  
յառաջդիմութիւնն այնպէս կը համեմատին այս կարգի  
մեծամոլութեանց հետ, որպէս Արևելք Արևմուտքին,  
կայծակը կայծին, հողին ուռուցիկ շոգիին հետ :

և ճգունս յանձին անուցուս, և սպանանիցես : Այլ ո՞, ասէ, ողորմիցի  
Յովնի օձահարի : Պարտ էր գիտակացոյ անագորոյն բռնութեանն փախ-  
չել ի ծառայութեանն, և այրել զդժնդակ ցանկութիւնն : Եւ զիս՛րդ, աս-  
սէ, իցէ այնմ հնար : Երբ այլ սևտ ընդ սիրոյն մուծանիցես, գերկնի-  
ցըն : Որ արբայութեան ցանկայ, արհամարհեսցէ զագահութիւն : Որ եղև  
ծառայ Բրիտոսի, մի՛ լիցի ծառայ մամոնայի, այլ և տէր ևս : Քանզի  
փախտականին ի նմանէ զհետ ստէպ զալ սովոր է, և որ զնմանէ կա-  
ճողին լինիցի՛ փախչիլ : Ոչ այնպէս զոր պատուէ՛ որպէս զարհամարիչս  
իւր, և ո՛չ զոր այնպէս այպանէ՛ որպէս զնորին ցանկացողսն, ո՛չ մի-  
այն ծաղր կացուցանէ, այլ և ընդ բազում կապանօք հարստէ : (Մեկն.  
Մատթ. Գիրք Ա. ձառ. Թ. էջք 136/7) :



Գործիս պատմական ու ժամանակագրական մասը մինչև 1890 և թելադրական ու խորհրդածական մասն՝ այսպէս մինչև ներկայ բարեբաղդ տարին հասցունելով՝ փութանք ուրեմն կնքել :

Բարեբաղդ, այո՛, մեծ տարին՝ ուր յարաբերական աշխարհին մէջ տեղի ունեցան ամէնէն մեծ և ուրախառիթ դէպքերն ի վէպս ազգաց. — Լահէյի խաղաղութեան աշխարհաժողովն և նորագոյն սահմանադրութիւնները, տեսապէս՝ կրօնական գլուխներու և իմաստասէրներու բարի ջանքով և գործնապէս քաղաքագէտներու կայսրերու և նախագահներու փորձագէտ կարգադրութեամբ՝ այդ տիեզերական ժողովն և Թուրքիոյ նոր Սահմանադրութիւնը գրել տուած եղան միանգամ ևս քաղաքավարաց կանաչ սեղանին վրայ տիեզերական անդորրութեան և արդարութեան բէն գիրն ալ : Այդ խաղաղութիւն և արդարութիւն՝ բանալու վրայ է մեծ հորիզոն մը վաճառական ժիր աշխարհին համար ալ՝ ճարտնէն մինչև Ամերիկա Բարեյոյսէն մինչև հիւսիսի ցուրտ բեկոն՝ հակառակ յոռետեսներու տարակոյսին : Աշխարհի ամէնէն վաճառական ազգին՝ Բրիտանիայի անկեղծ ու համարձակ ճիգերն առ այդ, իրեն վեհափառ Պետին անդադրում գործունէութեամբ՝ ակներև գրաւական մըն են թէ այդ խաղաղութենէն և արդարութենէն ամէնէն աւելի պիտի օգտուի միջնազգային վաճառականութիւնը : Մեր բարեբաղդ Թուրքիան ևս ունեցաւ՝ այդ խաղաղութեան և արդարութեան մէջ իր արժանաւոր ձայնն ու բաժինը՝ շնորհիւ բարեխնամ կառավարութեան և նոր Սահմանադրութեան, որով կը դառնայ աշխարհի ամէնէն բարեդէպ երկիրն ու կլիման և որուն մէջ փոքր ինչ չէ Թուրքահայոց բաստն ալ :

Թուրքիայի առևտրական հրապարակին վերջին տազնապսներն ու անձկութիւնները կը թուին անցաւոր

մանաւանդ բարեյարդար բան մը, աւելի՛ն իսկ՝ հին սեղմ  
ու պայքարող յարաբերութիւններէն դէպ ի նոր արդար  
ու անդորր համերաշխական գործունէութիւնն անցք մը,  
պէտք չէ երկբայիլ. աշխարհ կը պատրաստուի նոր և  
անդորր շրջանի մը. —

« Պարագայց յաւիտենից առնու ըսկիզբըն կարգ  
անդրէն<sup>(1)</sup> » .

Թէպէտ յամբօրէն այլ իրօրէն՝ Իրիսի եօթը՝ չքնաղ  
ու յաւիտենական գոյներէն առ այժմ ամէնէն կարեորն  
և կարապետը՝ կանաչը միայն ցուացունելով անպատ-  
բաստ յարդարումի մը սեմոց վրայ: Հերի՛ք է որ  
գիտնանք յստգն ու սահմանը:

Թուրքահայք՝ որոց դիրքը աւելի դիպող տրամադ-  
րուած է բնուստ ցամաքային բճճն վաճառականութեան  
և միջնորդութեան, պէտք է լրջութեամբ նպատրաստ-  
ուին այդ շրջանին և թօթափեն իրենց վրայէն ինչոր կան  
անցեալէն կնճիւղի, կուլի, վրէժի, պայքարի յետադի-  
մական բերումներ ու տգիտութիւններ: Պէտք է մանա-  
ւանդ ոյժ տան իրենց ցամաքային վաճառականութեան,  
որուն շա՛տ նպաստաւոր ալ է Փոքր-Ասիայի ցամաք ու  
հաղորդարար կալուածը: Ինչպէս հին ժամանակ՝ Յոյնք  
և Փիւնիկեցիք, և նորումս Հոլանտացիք Անդրացիք Ի-  
տալացիք ծովային վաճառականութեան, այսպէս ալ  
Հայք և Հրեայք ցամաքային վաճառականութեան վար-  
պետներն եղած են ու պէտք է որ ըլլան այսուհետև:  
Կովկասէն Պարսկաստանէն մինչև Հնդկաստան և Ճա-  
բոնիա բա՛ց է իրենց առջև: Այս կողմէն՝ մանաւանդ  
մեր գաւառացւոց համար՝ բացուած կը համարուին նո-  
րանոր դուռներ՝ հեռագրական, թղթատարական, երկա-  
թուղիական նոր նոր դիւրութիւններով: Պէտք է մա-  
նաւանդ՝ տեղական ընթացիկ լեզուներու հետ՝ մշակել  
նաև անգլիերէն գործնական մեծ լեզուն, զոր կը խօ-

(1) Վիրգիլ, Հովուականք.

սին այսօր աշխարհի վրայ 130,000,000 մարդիկ, առանց հաշուելու Ամերիկայի ու Ափրիկէի գաւառականները :

Պէտք է մանաւանդ ինքզինքնին տան երկրագործական գործառնութեանց ալ, որուն այնքան խրախուսիչ միջոցներ հայթայթած է վերջերս Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը : Երկրագործութիւն և վաճառականութիւն՝ երկու հինաւուրց եղբայր քոյրեր են իրարու, որ կը սնանին իրարմով . բայց աշխարհի վրայ ոչ մէկ գործ կայ երկրագործութեան հաւասար՝ բնական խաղաղական ազնուական և մարդու սկզբնական երանակեցութեան նպաստաւոր՝ ընութեան անհուն մեծ վայելչութեանց և ճոխութեանց հետ ուղղակի անմիջնորդական յարաբերութեան մէջ դնելով անկեալ մարդուն հոգին ու մարմինը :

Առւտրական վաճառական ու նման գործերէ զըզուած յուսահատած մարդիկ՝ պէտք է քիչ մըն ալ տան իրենց խելքն ու միտքն երկրագործական օրհնեալ արուեստին, մանաւանդ մեր բազմաթիւ վանքերն ու վանականները<sup>(1)</sup>, ձեռուընին կապկրպած դրամատէրները, աւելորդ բժիշկներն ու փաստաբանները, գրագէտները, վարժապետները, օրագրողներն ու ամէն անոնք՝ որոց ասպարէզը կարի՛ խճողեալ կարի՛ անպիտանացեալ է՝ հետամուտներու չափէն աւելի բազմութեան և ուրիշ կարևոր ու անյաղթելի պատճառներով : Առաջին քանի մը տարին՝ սկզբնական դժուարութեանց և ծախուց քիչ մը ստոյիկ համբերութեամբ տոկալով՝ պիտի գտնեն երկ-

(1) Երկրագործական և ուսումնական հաստատութեան մը համար յետուսադէմ՝ երեք չորս տարի զրիչ, սիրտ, լեզու և պատի՛ւ անգամ ի զուր մաշեցուցինք յերուսաղէմ և ի Կ. Պոլիս՝ Երուսաղէմական խնդիրին անորոր կարգադրութեան ի նպաստ, բայց ի զո՛ւր. սատանն անղաղար կը հանէր մեր դէմ՝ և՛ խծուծս և՛ խծուծս և՛ խծուծս. Վերջը չեկա՛ւ դեռ այս imbroglioին . . .



քաղաքի և այլ պատասխանաց մէջ նիւթական շահ, միտքի ու մարմինի պարզ խաղաղութիւն, առտնին ու քաղաքային կեանքի անխռով դիւրութիւն, և որ ամէնէն չքնաղն է՝ առողջութիւն հողիի ու մարմինի: « Երանի՛ երկրազործաց՝ եթէ գիտեն ու գիտնան իրենց բարեբաղդութիւնը »:

Երանի՛ նաև մեզի՛ եթէ մեր կարգին քիչ շատ փորձառութեամբ և տեսականով՝ կըրցանք քանի մը բարի թելադրութիւններ ներշնչել մեր թուրքահայ ժիր ու ազնիւ գործի մարդոց՝ տալէ ետքն իրենց նախորդաց վրայ պատմական այս երկտասնեակ գլուխները, որոց մէջ ջանացինք գլխաւորապէս անկեղծ քան շողոքորթող ըլլալ՝ մեր ծանօթութեանց անձուկ հայեակէն:

Մենք գրեցինք՝ թերևս շատերու համար կծու և անհասոյ այլ ճշմարիտ ու գործնական հաշուելին և հետեւելին. մեր գիտցածներէն և փորձառու ջոջերու թելադրածներէն ու հանրական օգտասիրութենէ՝ հարկադրեցանք ընել այսպէս: Իցիւ թէ ուրիշներու առաւելութիւններն ու սխալները մատնացոյց ընելու ատեն՝ մենք քիչ սխալած ըլլայինք:

Սխալիլը մարդկայի՛ն է, բայց իր մարդ ըլլալը գիտցո՛ղը միայն կըրնայ ընել այս պարզ խոստովանութիւնն և ուղղել իր սխալները. մենք ի հարկին պատրաստ ենք ուղղել մերինները՝ մաղթելով որ մեր ընթերցող գործի մարդիկ ալ նոյնն ընէին իրենց կամայ ակամայ սխալներուն համար, և ասո՛վ երկուստեք կը շահինք խաղաղութեան մը, որ է դուռն երջանկութեան և ճշմարիտ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ:



Հետևեալը ցանկն է Փոքր-Ասիայի գլխաւոր վայ-  
րաց մինչև 1895 նշանաւոր վաճառականներուն :

### ԱՄԱՍԻԱ

Իբրանոսեան	Եղբարք	Մանֆաթո.	վճո.
Մարտիկեան	»	»	»
Յ. և Մ. Պէքթիմուրեան	»	Խողակի	»
Հաճի Կարապետ Փափազեան		Արմտիքի	»
Սարգիս Իփէքճեան		Խողակի ու Աֆիօնի	»
Հաճի Տիղրան Թէլլալեան	»	»	»
Հաճի Կարապետ Սարաճեան		Մանիֆթ.	»
Թ. Կ. Մարտիկեան	Եղբ.	Խուրտավաթ , Թօճաֆիլյէ	

### ԶԻԼԷ

Իբրանոսեան	»	Մանիֆթ.
Յ. Յ. Զպլագեան	»	» և Աֆիօն
Յարութիւն Հարիկեան		»

### ԷՐՊԱԱ

Տարըճեան	Եղբարք	Մանիֆթ. Մխախոտ , Ոչխար
Մատուրեան	»	»
Աւետիս Մկրեան	»	
Աւետիս Թիւֆէնկճեան	»	

### ԹՕԳԱՏ

Իբրանոսեան	Եղբարք	»
Ապտալեան	»	Թիւլպէնտ
Շիշմանեան	»	»
Հաճի Կարապետ Աստուածատուրեան		Եազմաճի
Յ. Գէչէճեան և Որդիք		Մանիֆթր.
Դաւիթ Զամբէրթէնեան		Ալիւրի Ֆապրիզա

ՍՎԱԶ

Իբրանոսեան Եղբարք	Մանիֆիթր .
Հաճի Սինան Պազալեան	Ճէլէպի վաճ .
Աւետիս Շահինեան	» »
Կարապետ »	» »
Օտապաշեան — Շիրինեան	Խուրտավաթ
Աճէմեան Եղբարք	Խալիի »
Բենիամին Թօփալեան	Մանիֆիթր .
Յակոբ Մենծիկեան	Կաշիի »

ՄԱՐԶՈՒԱՆ

Իբրանոսեան Եղբարք	Մանիֆիթր .
Գ . Ճիզմէճեան	»
Գ . Էլպիկեան	Մանիսայի
Ֆէնէրճեան Եղբարք	Խուրտավաթ
Յովհ . Պալազեան	Արմտիքի

ԶՕՐՈՒՄ

Իբրանոսեան Եղբարք	Մանիֆիթր .
Սարգիս Թինթօնեան	»
Արմենակ Տատուրեան	Արմտիքի
Կարապետ Արսլանեան	Թօնաֆիլյէ

ԵՕԶԴԱՏ

Իբրանոսեան Եղբարք	Մանիֆիթր .
Հաճի Ադամ Աղամեան	Թիֆթիկ բուրդի ճէլէպի
Հարիկ Գարալեան	Մանիֆիթր . և Արմտիք
Մանուէլ Արիկեան	Պատրաստ զգեստի վան .
Կարապետ Աբրահամեան	Մանիֆիթր . և Խուրտավաթ

ՍԱՄՍՈՆ

Իբրանոսեան Եղբարք	Մանիֆաթր .
-------------------	------------

Յարրճեան	»	Մանիֆիթր .
Աւետիս Մկրեան	»	
Մարտիկեան	»	»
Գամպէրեան	»	»
Մաթոս Մաթոսեան		Մխախոտ
Միսաք Մսրրեան	»	
Գաբրիէլ Չէքէմեան		Ալիւրի Վաճ .
Յակոբ Զիչիեան	»	»
Տօնիկեան – Ճինխսիզեան		Երկաթի , Արմտիքի
Մառանեան		Ալիւրի Ֆապրիշա
Կարապետ Մըսրրեան		Գանթարիյէ
Աբէլ Կիւլպէնկեան և Ընկ .		Երկաթ
Մաթիոս	»	»
Թ . Կ . Մարտիկեան Եղբարք		Թօնաֆիյէ
Ֆէնէրճեան	»	»
Կարապետ Իբրանոսեան		Ալիւրի
Ղազարեան Եղբ .		Երկաթի , Արմտիքի
Միհրան Ընդապապեան		Սեղանաւոր
Փիրանեան Եղբարք		Արմտիք
Պոէճեան	»	»
Տիլսիզեան	»	»
<b>ՏՐԱՊԶՈՆ</b>		
Իբրանոսեան Եղբարք		Մանիֆիթր .
Մառանեան		»
Արապեան		»
Յ . Թաճմաչեան		»
Վ . Տէր Յանեանեան		»
Մախոխեան		Գամխոխոնճի











150

### Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ ՏՊԱԳՐԵԱՒ, ԳՈՐԾԵՐԸ

	Դրշ.
Ա. Հուզոնի Փոսկոչեայ եւ իւյ. Պիևս ի գերեզմանք. սպոծ.	5
Բ. Կենցաղ կամ Դաստիարակութիւն Սրկեսրի	10
Գ. Աշկուիա, իննեակ իմաստասիրական	» 5
Դ. Հին օրեր ու այդ օրերու սեծասունք	» 5
Ե. Աշկուիա յՆրուսադիւ	10
Զ. Հին օրեր եւ Պուհե Խաչատու Միսախան	7 1/2
Է. 19րդ Գար եւ Յովհ. Պրուսացի Տէրոյնց	12 1/2
Ը. Ստուերք Հին Դեմքերու, սասնեակ	5
Թ. Թուրքահայ հին վաճառականութիւնն եւ վաճառականք	12 1/2
Ժ. Պատմութիւն Թուրքահայոց սասն եւ իննետորդ դարու՝ վարչական, վաճառական, իմացական եւ առուեսական 600 էջ. (ի բաժանորդագրութեան)	—
ԺԱ. Աշկուիա, սասնեակ իմաստասիրական՝ յաւելեալ եւ յարդարեալ (Բ. տպագրութիւն)	—



Հեղինակը պատրաստ է՝ իր տրամադրելի ժամերուն՝ գրական, պատմական, բանասիրական, փիլիսոփայական ու առևտրական նամակներու յօդուածներու և զիբբերու սրբագրութիւն և խմբագրութիւն ընել, Անգղիականէ, Ֆրանսականէ, աշխարհաբառ ու գրաբառ Թարգմանութեան ուղղութիւններ մատնացոյց ընել և նման նիւթերու վրայ խորհրդակցութիւններ տալ՝ արժանի պայմաններով: Նաև ձարոնական դասեր ու Թարգմանութիւններ՝ իր երէց եղբոր միջոցով:

Դիմել՝ կամ գրել իր հասցէին՝ Պ. Պալե'նց և Յովհ. Աշճեան գրատուններն ի Զաքարեքճլար Կ. Պոլիսի կամ Սկիւտար, Թոփհաննէի Օղլու ձատտէ՝ Թիւ 15:





